ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

<<ՄԱՆԱԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

<<ՄԱՆԿԱԲԱՐՁ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

____
(ազգանուն, անուն)

□___□_________200_թ.

____
Ուսումնական հաստատության անվանումը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

<<**ՄԱՆԿԱԲԱՐՁ**>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
որակավորման անվանումը

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ <<**ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ**>>
մասնագիտության

<<ՄԱՆԿԱԲԱՐՁ>>
անվանումը

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ միջին մասնագիտական
ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՝ մանկաբարձ.
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 3 տարի
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ առկա

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կուրս	սեպտեմբեր 1-7	սեպտեմբեր 8-14	սեպտեմբեր 15-21	սեպտեմբեր 22-28	29.09-5.10	հոկտեմ 6-12	հոկտեմ 13-19	հոկտեմ 20-26	27.10-2.11	նոյեմբեր 3-9	նոյեմբեր 10-16	նոյեմբեր 17-23	նոյեմբեր 24-30	դեկտեմբեր 1-7	դեկտեմբեր 8-14	դեկտեմբեր 15-21	դեկտեմբեր 22-28	29.12-4.01	հունվ. 5-11	հունվ. 12-18	հունվ. 19-25	26.01-1.02
1								19										=	=		=	=
2								15								◊	◊	◊ / =	= / ◊	::	=	=
3								16									◊	◊ / =	= / ◊	::	=	=
4																						
Ընդամենը																						

Կուրս	փետրվ 2-8	փետրվ 9-15	փետրվ 16-22	23.02-1.03	մարտ 2-8	մարտ 9-15	մարտ 16-22	մարտ 23-29	30.03-5.04	ապրիլ 6-12	ապրիլ 13-19	ապրիլ 20-26	27.04-3.05	մայիս 4-10	մայիս 11-17	մայիս 18-24	մայիս 25-31
1								18									
2								18									
3								14							X	X	X
4																	
Ընդամենը																	

Կուրս	հունիս 1-7	հունիս 8-14	հունիս 15-21	հունիս 22-28	29.06-5.07	հուլիս 6-12	հուլիս 13-19	հուլիս 20-26	27.07-2.08	օգոստոս 3-9	օգոստոս 10-16	օգոստոս 17-23	օգոստոս 24-31
1		◊	◊	::	::	=	=	=	=	=	=	=	=
2		◊	◊	::	::	=	=	=	=	=	=	=	=
3	X	X	X	III	III	=	=	=	=	=	=	=	=
4													
Ընդամենը													

II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/

Կուրս	Տեսական ուսուցում	Մոդուլների ամփոփում	Պրակտիկա	Ամփոփիչ պետական ատեստավ. նախապ.	Ամփոփիչ պետական ատեստավորում	Արձակուրդ	ընդ ամե նը
1	37	2	2			11	52
2	33	3	5			11	52
3	30	1	8		2	11	52
4							
Ընդամենը	100	6	15		2	33	156

Նշան	Բացատրություն
	Տեսական ուսուցում
0	Ուսումնա-կան պրակտիկա տեսական ուսուցմամբ
◊	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման
X	Նախաավարտական, արտադրական պրակտիկա
: :	Մոդուլների ամփոփում
⮝	Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման
III	Ամփոփիչ պետական ատեստավոր-րում
=	Արձակուրդ Ամանոր և Սուրբ ծնունդ

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
					Պարտադիր լսարանային բեռնվածություն				1-ին կուրս		2- րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս	
		Քննութ.	Ստուգարք	Կուրսաշխ.	Ընդամենը	Այդ թվում			1-ին կիս 19 շաբ	2-րդ կիս 18 շաբ	3-րդ կիս. 15 շաբ	4-րդ կիս. 18 շաբ.	5-րդ կիս. 16 շաբ.	6-րդ կիս. 14 շաբ.	7-րդ կիս. շաբ.	8-րդ կիս շաբ
						Տեսակ. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապ-մունք								
1.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ**															
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		1,2 տ		72	54	18		36	36						
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		5 տ		48	38	6	4					48			
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5 տ		48	42		6					48			
1.4	Իրավունքի հիմունքներ		1 տ		36	26	6	4	36							
1.5	Պատմություն		1,2 տ		48	42		6	24	24						
1.6	Ռուսաց լեզու		1,2 տ		72	12	60		46	26						
1.7	Օտար լեզու		1,2 տ		72	16	56		36	36						
1.8	Ֆիզիկական կուլտուրա		1-6 տ		200	10	190		38	36	30	36	32	28		
1.9	Էկոլոգիայի և լանդշաֆտագիտության հիմունքներ		1 տ		36	28	8		36							
1.10	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4 տ		18	18						18				
	ԸՆԴԱՄԵՆԸ				**650**	**286**	**344**	**20**	**252**	**158**	**30**	**54**	**128**	**28**		
2.	**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**															
2.1	Հաղորդակցություն		1 տ		36	16	20		36							
2.2	Համակարգչային օպերատորություն		3 տ		54		54				54					
2.3	Անվտանգություն և առաջին օգնություն		6 տ		18	6	12							18		
	ԸՆԴԱՄԵՆԸ				**108**	**22**	**86**		**36**		**54**			**18**		
3.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**															
3.1	Պացիենտի կրթում		2 տ		18	6	12		18							
3.2	Դիետոլոգիա և սնուցում		2 տ		18	6	12		18							
3.3	Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ		1 տ		36		36		36							
3.4	Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով՝ բջջի, հյուսվածքների, հենաշարժիչ ապարատի կառուցվածքը եվ գործառույթները, արյան կազմը եվ գործառույթները		1 տ		54	30	24		54							
3.5	Մարդու անատոմիա, ֆիզիորիլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով՝ սիրտ-անոթային, ավշային, շնչառական եվ միզային համակարգերի կառուցվածքը եվ գործառույթները		1 տ		54	34	20		54							
3.6	Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով՝ վերարտադրողական, մարսողական համակարգերի կառուցվածքը եվ գործառույթները,		2 տ		54	30	24			54						

	նյութափոխանակության եվ վիտամինների տեսակները															
3.7	Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով՝ ներզատիչ գեղձերի, նյարդային համակարգի եվ զգայարանների կառուցվածքը եվ գործառույթները		2 տ		54	32	22			54						
3.8	Բժշկական գենետիկա		1 տ		36	12	24			36						
3.9	Մարդու կենսագործունեության փուլերը՝ ներարգանդային, նորածնային, կրծքի հասակի երեխաների հիմնական պահանջները եվ դրանց բավարարման եվ առողջության պահպանման եղանակները		1 տ		36	10	26		36							
3.10	Մարդու կենսագործունեության փուլերը՝ մսուրային, նախադպրոցական, վաղ դպրոցական, դեռահասության տարիքային շրջանների ժամկետները, հիմնական պահանջները, դրանց բավարարման եվ առողջության պահպանման եղանակները		1 տ		36	10	26		36							
3.11	Մարդու կենսագործունեության փուլերը՝ վերարտադրողական տարիքում տղամարդու եվ կնոջ անատոմո-ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, պահանջները եվ դրանց բավարարման ուղիները		1 տ		18	8	10		18							
3.12	Մարդու կենսագործունեության փուլերը՝ կլիմակտերիկ եվ ծերունական շրջանում անատոմո-ֆիզիոլոգիական,սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, պահանջները և դրանց բավարարման ուղիները		1 տ		18	8	10		18							
3.13	Մանրէաբանություն, վիրուսաբանություն և իմունաբանություն		3 տ		72	34	38				72					
3.14	Ընդհանուր դեղաբանություն		1 տ		36	12	24		36							
3.15	Մասնավոր դեղաբանություն՝ նյարդային, շնչառական, սիրտ-անոթային համակարգերի վրա ազդող դեղերը, հակաբակտերիալ, հականնկային, հականեխիչ եվ քիմիոթերապեվտիկ դեղերը եվ դրանց ազդեցության մեխանիզմները		1 տ		36	12	24		36							
3.16	Մասնավոր դեղաբանություն՝ ստամոքս-աղիքային, արյան համակարգի, միզամուղ, հորմոնալ,արգանդի տոնուսի, H1; H2 ընկալիչների վրա ազդող, հակատուբերկուլոզային,հակավիրուսային եվ հակապարազիտար դեղերը եվ դրանց ազդեցության մեխանիզմները		1 տ		36	12	24		36							
3.17	Հիգիենա և մարդու էկոլոգիա		2 տ		54	24	30			54						
3.18	Ընդհանուր հոգեբանություն		2 տ		36	12	24			36						
3.19	Բժշկական հոգեբանություն		3 տ		18	6	12				18					
3.20	Աղետների բժշկություն		6 տ		54	14	40							54		
3.21	Առաջին բժշկական օգնություն		6 տ		18		18							18		
	ԸՆԴԱՄԵՆԸ				**792**	**312**	**480**		**396**	**234**	**90**			**72**		
4.	**ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**															
4.1	Քույրական գործի հիմունքներ		2 տ		36		36			36						
4.2	Քույրական գործի հիմունքներ եվ ինֆեկցիոն		2 տ		54		54			54						

	վերահսկողության հիմունքներ															
4.3	Քույրական գործի հիմունքներ՝ մարմնի բիոմեխանիկա, բուժհաստատությունում թունավոր և վնասակար գործոնների ազդեցությունը բուժանձնակազմի վրա և հիվանդի խնամքը		2 տ		54		54			54						
4.4	Քույրական գործի հիմունքներ՝ դեղերի ներմուծման ուղիները, հոգնաները, արհեստական խուղակները		2 տ		72		72			72						
4.5	Քույրական գործի հիմունքներ՝ քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում, հենդերսոնի մոդելի կիրառումը		2 տ		36		36			36						
4.6	Թերապիա՝ հիվանդների հետազոտման եղանակները, շնչառական համակարգի հիվանդությունների եվ ալերգոզների առաջացման պատճառները, ախտանիշները, բուժումը, խնամքը		3 տ		54	12	42				54					
4.7	Թերապիա՝ սիրտ-անոթային եվ ոսկրահոդային համակարգի հիվանդությունների առաջացման պատճառները, ախտանիշները, բուժումը, խնամքը		3 տ		54	12	42				54					
4.8	Թերապիա՝ մարսողական համակարգի եվ արյան հիվանդությունների առաջացման պատճառները, ախտանիշները, բուժումը, խնամքը		4 տ		54	12	42					54				
4.9	Թերապիա՝ ներզատական եվ արտազատական համակարգի հիվանդությունների առաջացման պատճառները, ախտանիշները, բուժումը, խնամքը		4 տ		54	12	42					54				
4.10	Մանկաբուժություն՝ երեխաների բուժկանխարգելիչ օգնության, նեոնատալ ծառայության կազմակերպման հիմնական սկզբունքները, քույրական գործընթացի իրականացումը, նորածնային շրջանի, վաղ մանկական տարիքի հիվանդությունները, շնչառական համակարգի հիվանդությունները երեխաների մոտ		3 տ		54	22	32				54					
4.11	Մանկաբուժություն՝ ստամոքս-աղիքային, արյան եվ արյունաստեղծ, սիրտ-անոթային, միզային, ներզատական համակարգերի հիվանդությունները երեխաների մոտ		4 տ		72	24	48					72				
4.12	Մանկաբուժություն՝ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելումը երեխաների մոտ, կանխարգելիչ պատվաստումները, տուբերկուլոզը, օդակաթիլային հիվանդությունները երեխաների մոտ		4 տ		36	10	26					36				
4.13	Մանկաբուժություն՝ աղիքային ինֆեկցիոն հիվանդությունները, վիրուսային հեպատիտները, պոլիոմիելիտը երեխաների մոտ		4 տ		36	10	26					36				
4.14	Վիրաբուժության հիմունքներ		3 տ		54	18	36				54					
4.15	Ընդհանուր վիրաբուժություն		4 տ		72	24	48					72				
4.16	Մասնավոր վիրաբուժություն		5 տ		54	18	36						54			
4.17	Ֆիզիոլոգիական մանկաբարձություն՝ վերարտադրողական պրոցեսի փիլիսոփայությունը, բժշկական էթիկան եվ դեոնտոլոգիան մանկաբարձությունում, ծննդօգնություն իրականացնաղ կազմակերպությունների կառուցվածքը, վերարտադրողական համակարգի անատոմո-		3 տ		72	28	44				72					

	ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, բեղմնավորման ֆիզիոլոգիան, ֆիզիոլոգիական հղիությունը, հղիության ախտորոշումը															
4.18	Ֆիզիոլոգիական մանկաբարձություն՝ ֆիզիոլոգիական ծննդաբերությունը, ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները, նորմալ հետծննդյան շրջանը		3 տ		72	30	42				72					
4.19	Ախտաբանական մանկաբարձություն՝ պտղի հիպօքսիա, նորածնի ասֆիքսիա, կոնքային առաջադրությունը, բազմապտուղ հղիությունը, հղիության հետեվանքով վաղ եվ ուշ ժամկետներում առաջացող բարդությունները		4 տ		72	22	50					72				
4.20	Ախտաբանական մանկաբարձություն՝ հղիությունը եվ արտասեռական հիվանդությունները, պտղի զարգացման արատները, պտղաձվի եվ նրա տարրերի հիվանդությունները, վիժումները, վաղաժամ ծննդաբերությունը, ժամկետանց հղիությունը, ծննդաբերական գործունեության անոմալիաները		4 տ		72	22	50					72				
4.21	Ախտաբանական մանկաբարձություն՝ կոնքի անոմալիաները, միջաձիգ եվ թեք դրությունները, ապախոնարհված առաջադրությունները, մանկաբարձական արյունահոսությունները		5 տ		90	30	60						90			
4.22	Ախտաբանական մանկաբարձություն՝ ծննդաբերական վնասվածքները, հետծննդյան թարախասեպտիկ հիվանդությունները, մակաբարձական դեղաբանությունը		5 տ		54	20	34						54			
4.23	Օպերատիվ մանկաբարձություն		6 տ		54	20	34							54		
4.24	Գինեկոլոգիա՝ բժշկական էթիկան եվ դեոնտոլոգիան գինեկոլոգիայում, գինեկոլոգիական օգնություն ցույց տվող հիմնարկների կառուցվածքը, գինեկոլոգիական հիվանդների հետազոտման եղանակները, վերարտադրողական համակարգի զարգացման արատները, անկանանոն դրությունները, դաշտանային պարբերաշրջանի, նեյրոէնդոկրին խանգարումները		4 տ		72	22	50					72				
4.25	Գինեկոլոգիա՝ սեռական օրգանների ոչ յուրահատուկ եվ յուրահատուկ բորբոքային հիվանդությունները, անպտղությունը, ընտանիքի պլանավորումը, սեռական օրգանների ուռուցքները եվ ուռուցքանման գոյացությունները, էնդոմետրիոզը		5 տ		72	24	48						72			
4.26	Գինեկոլոգիա՝ կրծքագեղձի հիվանդությունները, անհետաձգելի օգնությունը գինեկոլոգիայում, մանկական գինեկոլոգիա, գինեկոլոգիական հիվանդների բուժման եղանակները		6 տ		54	22	32							54		
4.27	Վարակիչ հիվանդություններ		4 տ		54	24	30					54				
4.28	Համաճարակաբանություն		5 տ		36	20	16						36			
4.29	Նյարդախտաբանություն		6 տ		54	14	40							54		
4.30	Հոգեբուժություն		5 տ		36	12	24						36			
4.31	Մաշկային և սեռավարակ հիվանդություններ		6 տ		54	20	34							54		

4.32	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ		5 տ		36	10	26						36			
4.33	Ակնաբուժություն		6 տ		36	10	26							36		
4.34	Վերակենդանացում և ինտենսիվ թերապիա		6 տ		90	30	60							90		
4.35	Վերականգնողական և ավանդական բժշկություն		5 տ		54	12	42						54			
4.36	Կլինիկական դեղաբանություն		6 տ		36	14	22							36		
	ԸՆԴԱՄԵՆԸ				**2016**	**580**	**1436**			**252**	**360**	**594**	**432**	**378**		
5.	**ԸՆՏՐՈՎԻ**				**24**								16	8		
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				**10**					4	6					
	ԸՆԴԱՄԵՆԸ				**3600**				**684**	**648**	**540**	**648**	**576**	**504**		
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				300											
	Շաբաթվա ժամերի քանակը								36	36	36	36	36	36		

	IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ		
1	Գեղագիտություն		
2	Մշակույթի պատմություն		
3	Կրոնի պատմություն		
4	Մանկավարժություն		
5	Օտար լեզուներ		
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ
1	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	2,3,4,5	9
2	Նախաավարտական պրակտիկա	6	6
	ԸՆԴԱՄԵՆԸ		15

VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Հունիսի 22-ից հուլիսի 5-ը շրջանում
Երկու համալիր պետական քննություն՝ հատուկ մասնագիտական մոդուլներից

N	**VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ**
	ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
1	համակարգչային,
2	լեզուների
3	ուսուցման տեխնիկական միջոցների
4	քույրական գործի հիմունքների
5	թերապիայի
6	վիրաբուժության
7	մանկաբուժության
8	մանկաբարձության
9	գինեկոլոգիայի
10	նեղ մասնագիտական առարկաների
11	աղետների բժշկության
12	սոցիալ-տնտեսագիտական դասընթացների
13	վերակենդանացման,ինտենսիվ թերապիայի
14	վարակիչ հիվանդությունների
	ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
1	մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի,
2	հիգիենայի և մարդու էկոլոգիայի
3	մանրէաբանության և իմունաբանության
4	դեղաբանության
	ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
1	Մարզադահլիճ
2	Մարզահրապարակ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. ՈՒսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: ՈՒսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: ՈՒսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. ՈՒսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. ՈՒսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՂԿ-5-13-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակականն գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար հաղորդակցության դերն ու նշանակությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ճիշտ է ներկայացնում շփման և անձնական հաղորդակցման ձևերն ու բաղադրիչները,

	3) ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցման եղանակներն ու բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ճիշտ է ուղղորդում նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները ճիշտ է օգտագործում գործնական հաղորդակցության մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, մեթոդական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևեր
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում հետաքրքրություններ և հաճոյախոսում, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և

	նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևեր
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվիաշխատանքային շփումների համար: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունական գործընկերության համար

Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՑՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-13-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի,

	գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ գործնական աշխատանք՝ 54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. տիրապետի համակարգչային տեխնիկային և օպերացիոն համակարգին, 2. խմբագրի և ֆորմատավորել տեքստեր, 3. խմբագրի և նկարազարդել գրաֆիկական օբյեկտներ, 4. կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով, 5. կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով, 6. կարողանա համացանցում աշխատել:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Տիրապետել համակարգչային տեխնիկայի և կիրառել օպերացիոն համակարգը
Կատարման չափանիշներ	1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scaner, projector, fax, պատճենման սարք և այլն), 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), 6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում

	9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական և ինքնուրույն առաջադրանքների միջոցով: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն, պատճենելու, տեղափոխելու, հատկությունները դիտելու, արխիվացնելու և ընդլայնելու, որոնելու գործողություններ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր
Կատարման չափանիշներ	1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական և ինքնուրույն առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն

	գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Պատրաստել և խմբագրել աղյուսակներ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական և ինքնուրույն առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ կատարել՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ

ՈՒսումնառության արդյունք 4	Խմբագրել և նկարազարդել գրաֆիկական օբյեկտներ
Կատարման չափանիշներ	1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է կանոնավոր պատկերներ, 3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 5) գծագրում է տեքստային բլոկներ, 6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորել ու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Կազմակերպել ցուցադրություն համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական և ինքնուրույն առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝

	թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ: Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 6	Կարողանալ աշխատել համացանցում
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է, «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածքը, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ

	հասցեականության: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-13-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ սովորողի մեջ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 3. ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները՝ ըստ հիմնական բնագավառների, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, ▪ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, ▪ հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, ▪ էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, ▪ կենցաղային հիմանական սարքերի անվտանգության կանոնները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառներն ու հետևանքները, 2) ճիշտ է ներկայացնում արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ճիշտ է ներկայացնում առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ճիշտ է ներկայացնում կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումների բաղադրիչները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ ևիրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը,

	3) ճիշտ է կատարում արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողությունը, 4) ճիշտ է կատարում արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողությունը, 5) ճիշտ է կատարում այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողությունները, 6) ճիշտ է կատարում վիրակապման և անշարժացման գործողությունը՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ճիշտ է ներկայացնում թունավորման տարբեր դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողությունները՝ ըստ դեպքերի: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողությունը, ▪ արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողությունը, ▪ այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողությունները, ▪ վիրակապման և անշարժացման գործողությունը՝ տարբեր կոտրվածքների դեպքում, ▪ թունավորման տարբեր դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները, Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՑԻԵՆՏԻ ԿՐԹՈՒՄ»

Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ծանոթացնել ուսանողին պացիենտի ուսուցման հիմնական խնդիրներին,տալ տեսական գիտելիքներ և գործնական ունակություններ, որոնց օգնությամբ ուսանողը կկարողանա նպաստել անհատի առողջության պահպանմանը, ամրապնդմանը և կյանքի որակի բարձրացմանը՝ սովորեցնելով նրան իր ապրելակերպը փոխելու միջոցով կանխարգելել հիվանդություններն ու վնասվածքները, կառավարել հիվանդությունների ընթացքը:
Մոդուլի տևողությունը	18 ժամ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի ուսուցման բովանդակությունը, նպատակները, ուսուցման ոլորտները և ձևերը, արդյունավետ ուսուցմանը նպաստող գործոններն ու նախապայմանները, 2. ներկայացնի ուսուցման գործընթացի փուլերը, ուսուցման արդյունավետության գնահատումը, 3. ներկայացնի կրթական ծրագրի խնդիրը և ակտիվորեն ներգրավի պացիենտին ու նրա ընտանիքին՝ իր առողջական հարցերի լուծման գործողությունների մեջ, 4. ներկայացնի բուժքրոջ դերը մարդկանց առողջապահական կրթման, վնասակար սովորությունների դեմ պայքարի հարցում, առողջ ապրելակերպի ձևավորումը հասուն տարիքում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ուսուցման բովանդակությունը, նպատակները, ուսուցման ոլորտները և ձևերը, արդյունավետ ուսուցմանը նպաստող գործոններն ու նախապայմանները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տիրապետում ուսուցման բովանդակությանը և ուսուցման նպատակներին, 2) ճիշտ է ներկայացնում նպատակներին հասնելու նախապայմանները, 3) ճիշտ է ներկայացնում ուսուցման ոլորտները և իրականացնում ուսուցումն այդ ոլորտներում (ճանաչողական,

	էմոցիոնալ, հոգեշարժական), 4) ճիշտ է ներկայացնում ուսուցման ձևերը(անհատական, կոլեկտիվ), 5) ճիշտ է ներկայացնում արդյունավետ ուսուցմանը նպաստող գործոնները և նախապայմանները (ցանկություն, պատրաստակամություն, մտավոր վիճակ, հիշողություն, ուշադրություն):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի միջոցով: Ուսանողը ցուցադրելու է ուսուցման տարբեր ոլորտներում (ճանաչողական, էմոցիոնալ, հոգեշարժական) խորհրդատվություն կատարելու ունակությունը: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. • ուսուցման բովանդակությունը և նպատակները, • ուսուցման ոլորտները (ճանաչողական, էմոցիոնալ, հոգեշարժական), ▪ արդյունավետ ուսուցմանը նպաստող գործոնները և նախապայմանները (ցանկություն, պատրաստակամություն, մտավոր վիճակ, հիշողություն, ուշադրություն): Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, մեթոդական գրականություն, մշակված թեմաներ, անհրաժեշտ պարագաներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ուսուցման գործընթացի փուլերը, ուսուցման արդյունավետության գնահատումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տիրապետում ուսուցման գործընթացի փուլերին, 2) ճիշտ է իրականացնում ուսուցման գործընթացը, հաշվի առնելով՝ յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունը, 3) ճիշտ է ներկայացնում ուսուցման արդյունավետության գնահատումը (ինֆորմացիայի յուրացում, հմտությունների ցուցադրում):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է

	ուսուցման գործընթացի կազմակերպման ունակությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունը: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ ուսուցման գործընթացի փուլերը (1-պացիենտի և նրա ընտանիքի անդամների ելակետային գիտելիքների գնահատում, 2- ուսուցման ոլորտի ընտրություն, ուսուցման նպատակների և բովանդակության պլանավորում, 3-ուսուցման պլանի իրագործում, 4- ուսուցման վերջնական արդյունքների գնահատում): Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, մեթոդական գրականություն, մշակված թեմաներ, անհրաժեշտ պարագաներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել կրթական ծրագրի խնդիրը և ակտիվորեն ներգրավել պացիենտին և նրա ընտանիքին իր առողջական հարցերի լուծման գործողությունների մեջ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պացիենտի հետ անմիջական հաղորդակցության հմտությունները և օգնություն ցուցաբերելուն նպաստող փոփոխությունները, 2) ճիշտ է ներկայացնում և կատարում պացիենտի կրթման գործընթացում խոչընդոտների բացահայտումը և դրանց հաղթահարումը, 3) ճիշտ է ներկայացնում և տիրապետում ուսուցման ձևերը և մեթոդները , առողջական խնդիրները պարզ և մատչելի բացատրելու ունակությունը, 4) ճիշտ է ներկայացնում պացիենտի և նրա ընտանիքի անդամների ուսուցման առանձնահատկությունների գնահատումը, 5) ճիշտ է ներկայացնում ընտանիքների առանձնահատկությունները, 6) ճիշտ է բացատրում հիվանդության վտանգավոր նշանների ճանաչումը և համապատասխան գործողությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի, գործնական հանձնարարությունների միջոցով:

	Ուսանողը ցուցադրելու է պացիենտի և նրա ընտանիքի անդամների ուսուցման առանձնահատկությունների գնահատման, հիվանդության վտանգավոր նշանների ճանաչման և համապատասխան միջոցառումների իրականացման ունակությունը: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ՝ ▪ պացիենտի կրթման գործընթացում խոչընդոտների բացահայտումը և դրանց հաղթահարումը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, մեթոդական գրականություն, մշակված թեմաներ, անհրաժեշտ պարագաներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել բուժքրոջ դերը մարդկանց առողջապահական կրթման, վնասակար սովորությունների դեմ պայքարի հարցում, առողջ ապրելակերպի ձևավորումը հասուն տարիքում:
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ծխելու, թմրամոլության, ալկոհոլամոլության մասին՝ որպես վնասակար սովորություններ, 2) ճիշտ է իրականացնում խորհրդատվություն վնասակար սովորություններից ձերբազատվելու համար, 3) ճիշտ է կազմում և իրականացնում ‹‹Փոփոխման ծրագիր››, 4) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ դերը մարդկանց առողջապահական կրթման հարցում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի միջոցով: Ուսանողը ցուցադրելու է խորհրդատվության անցկացումը վնասակար սովորություններից ձերբազատվելու, <<Փոփոխման ծրագիր>> իրականացնելու ունակությունը: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ՝ ▪ ծխելը, թմրամոլությունը, ալկոհոլամոլությունը, որպես վնասակար սովորություններ, ▪ բուժքրոջ դերը մարդկանց առողջապահական կրթման հարցում: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, մեթոդական գրականություն, մշակված թեմաներ, անհրաժեշտ պարագաներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԻԵՏՈԼՈԳԻԱ ԵՎ ՍՆՈՒՑՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-002
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել պացիենտների կերակրման, սնուցման մեթոդները, եղանակները և հմտությունները, ինչպես նաև հիվանդների սնուցման կազմակերպման առանձնահատկությունները:
Մոդուլի տևողությունը	18 ժամ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001 մոդուլը:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի սննդի բաղադրությունը և էներգետիկ արժեքը,ռացիոնալ ադեքվատ և դիետիկ սնուցման սկզբունքները, որոշել ջրային հավասարակշռությունը (բալանս), 2. ներկայացնի պացիենտի սնուցման կազմակերպումը ստացիոնարում, ծանր հիվանդների կերակրումը գդալով և խմոցով, արհեստական սնուցման ձևերը, կիրառման ցուցումները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել սննդի բաղադրությունը և էներգետիկ արժեքը, ռացիոնալ ադեքվատ և դիետիկ սնուցման սկզբունքները, որոշել ջրային հավասարակշռությունը (բալանս)
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սննդի բաղադրությունը և էներգետիկ արժեքը (կալորիականությունը), 2) ճիշտ է սահմանում անկողնային ռեժիմում գտնվող հիվանդի և առողջ մարդու օրվա էներգետիկ պահանջները,

	3) ճիշտ է ներկայացնում ռացիոնալ,ադեքվատ և դիետիկ սնուցման սկզբունքները, 4) ճիշտ է սահմանում ջրային հավասարակշռության պահպանման կարևորությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականցվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կտրվեն թեստային առաջադրանքներ սննդի բաղադրության, էներգետիկ արժեքի, ռացիոնալ, ադեքվատ, դիետիկ սնուցման առանձնահատկությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս հաշվելու է օրգանիզմի ջրային հավասարակշռությունը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնական և մեթոդական գրականություն, գործնական պարապմունքների տետրեր, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել պացիենտի սնուցման կազմակերպումը հիվանդանոցում, ծանր հիվանդների կերակրումը գդալով և խմոցով, արհեստական սնուցման ձևերը, կիրառման ցուցումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պացիենտի սնուցման կազմակերպումը ստացիոնարում, 2) ճիշտ է իրականացնում ծանր հիվանդների կերակրումը անկողնում գդալով և խմոցով՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ, 3) ճիշտ է ներկայացնում և իրականացնում արհեստական սնուցման եղանակները՝ զոնդով, պարէնթերալ, սնուցող հոգնայի և գաստրոստոմի միջոցով, 4) ճիշտ է ներկայացնում այս եղանակների կիրառման ցուցումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականցվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կտրվեն թեստային առաջադրանքներ արհեստական սնուցման եղանակների, ցուցումների,

Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի կատարման միջոցով: Ուսանողը ցուցադրելու է անթրոպոմետրիայի, նյարդահոգեկան և շարժողական ֆունկցիաների գնահատման, կրծքով կերակրման, կոփման տարբեր եղանակների կիրառման ունակությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ կրծքի շրջանի տևողությունը, երեխայի անատոմիա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ▪ նյարդա-հոգեբանական, ֆիզիկական և սոցիալական զարգացման օրինաչափությունները (խոսք,

	շարժողական ունակություն, խաղ, զբաղմունք), ▪ հիմնական պահանջների բավարարման եղանակները /շնչել, ջերմություն, սնուցում, քուն/, ▪ կոփիչ և զարգացնող միջամտությունների անհրաժեշտությունը, ▪ ֆիզիկական զարգացման գնահատումը, մարդաչափական տվյալներով, ▪ կրծքով կերակրման առավելությունները և անհրաժեշտ կաթի քանակի որոշմանը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ, տեսաֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ՝ ՄՍՈՒՐԱՅԻՆ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՎԱՂ ԴՊՐՈՑԱԿԱՆ, ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-010
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել մարդու կյանքի շրջանները: Տարիքային անատոմիո-ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հիմնական պահանջները, դրանց բավարարման, ինչպես նաև առողջության պահպանման, ամրապնդման ուղիները և եղանակները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001 մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

	1. ներկայացնի մսուրային և նախադպրոցական շրջանների տարիքային ժամկետները, անատոմիա - ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիմնական պահանջները, ներկայացնել այս շրջանների դաստիարակչական միջոցները, ֆիզիկական և նյարդա-հոգեկան զարգացման առանձնահատկությունները 2. ներկայացնի վաղ դպրոցական շրջանի տարիքային ժամկետները, անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիմնական պահանջները, յուրահատուկ դաստիարակչական միջոցները: Ներկայացնի վաղ դպրոցական տարիքի երեխաների նյարդահոգեական, սոցիալական և ֆիզիկական զարգացումը 3. ներկայացնի դեռահասության շրջանի տարիքային սահմանումները, այս շրջանին բնորոշ ֆիզիոլոգիական և հոգեկան առանձնահատկությունները, հիմնական պահանջները, սեռական հասունության նշանները, մանկու- թյունից հասուն տարիք անցման պրոբլեմները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել մսուրային և նախադպրոցական շրջանների տարիքային ժամկետները, անատոմիա - ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիմնական պահանջները, ներկայացնել այս շրջանների դաստիարակչական միջոցները, ֆիզիկական և նյարդահոգեկան զարգացման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մսուրային և նախադպրոցական շրջանների տարիքային ժամկետները և նրանց անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում մսուրային և նախադպրոցական շրջանների երեխաների դաստիարակչական միջոցները, 3) ճիշտ է սահմանում մոր ուսուցումը, դաստիարակել երեխաների մոտ ճիշտ ուտելու ունակությունները, սեղանի շուրջ երեխայի վարքի հիմնական կանոնները, տարիքակիցների հետ շփվելու կուլտուրան, 4) ճիշտ է սահմանում այս տարիքային խմբերի երեխաների հիմնական կենսական պահանջների (շնչելու, սնուցման, շարժման, շփման, անձնական հիգիենայի, խաղի, անվտանգության), ուսումնասիրությունը և դրանց բավարարման եղանակները,

	5) ճիշտ է սահմանում մսուրային և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական և նյարդահոգեկան զարգացումը, ուսումնասիրում է երեխայի խոսքը, շարժողական ունակությունները, 6) ճիշտ է ներկայացնում մարդաչափական չափումների կատարումը և ֆիզիկական զարգացման գնահատումը, 7) ճիշտ է սահմանում այս տարիքային խմբերի երեխաների կոփման, մերսման, մարմնամարզության կարևորությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի կատարման միջոցով: Ուսանողը ցուցադրելու է տվյալ տարիքային խմբերի երեխաների օրվա ռեժիմի և սննդակարգի ճիշտ կազմակերպման, հիգիենիկ լոգանքների, կոփման, մերսման, մարմնամարզության կատարման ունակությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ բոլոր օրգան համակարգերի անատոմիա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները այս տարքային խմբերի երեխաների մոտ • մսուրային և նախադպրոցական շրջանների երեխաների դաստիարակչական միջոցները ▪ մոր ուսուցումը, երեխաների մոտ ճիշտ ուտելու ունակության դաստիարակումը, սեղանի շուրջը երեխայի վարքի հիմնական կանոնները, տարիքակիցների հետ շփվելու հմտությունները ▪ մսուրային և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական և նյարդա-հոգեկան զարգացումը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, դերային խաղերի սցենարներ, պատկերազարդ ատլասներ, տեսաֆիլմ, պաստառներ, ճաշացանկեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել վաղ դպրոցական շրջանի տարիքային ժամկետները, անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիմնական պահանջները, յուրահատուկ դաստիարակչական միջոցները: Ներկայացնել վաղ դպրոցական տարիքի երեխաների նյարդա-հոգեական, սոցիալական և ֆիզիկական զարգացումը

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում վաղ դպրոցական շրջանի տարիքային ժամկետները անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում այս տարիքային խմբի դաստիարակչական միջոցների ընտրությունը, կիրառումը (զրույց, օրինակ, պատիժ), 3) ճիշտ է սահմանում վաղ դպրոցական տարիքի երեխաների հիմնական պահանջները և դրանց բավարարման միջոցները (սնուցում, անձնական հիգիենա, շարժման, շփման, սովորելու, անվտանգություն), 4) ճիշտ է ներկայացնում վաղ դպրոցական տարիքի երեխաների նյարդահոգեկան, սոցիալական և ֆիզիկական զարգացման գնահատումը և բացահայտում է առողջության ռիսկի գործոնները, 5) ճիշտ է սահմանում վաղ դպրոցական տարիքի երեխաների մարդաչափական չափումները և համեմատում տարիքային նորմայի հետ, 6) ճիշտ է ներկայացնում երեխայի դպրոց գնալու ադապտացիան և անվտանգ շրջակա միջավայրի ապահովման անհրաժեշտությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի կատարման միջոցով: Ուսանողը ցուցադրելու է վաղ դպրոցական շրջանի երեխայի սնուցումը և ռեժիմը կազմակերպելու, անթրոպոմետրիայի, տարիքային նորմաներից շեղումների հայտնաբերման, անձնական հիգիենայի ճիշտ կազմակերպման, կրթման վերաբերյալ ձեռք բերած ունակությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի յուրացման ծրագրային մանրամասներ. ▪ վաղ դպրոցական շրջանի տարիքային ժամկետները անատոմիա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և զարգացման առանձնահատկությունները, ▪ վաղ դպրոցական տարիքի երեխաների դաստիարակչական միջոցների ընտրությունը, կիրառումը (զրույց, օրինակ, պատիժ), ▪ վաղ դպրոցական տարիքի երեխաների հիմնական պահանջները և դրանց բավարարման միջոցները (սնուցում, անձնական հիգիենա, շարժման, շփման, սովորելու, անվտանգության), ▪ վաղ դպրոցական տարիքի երեխաների նյարդա-հոգեկան, սոցիալական և ֆիզիկական զարգացման գնահատումը և առողջության ռիսկի գործոնների բացահայտումը:

	Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ, կիրառվեղ փաստաթղթային ձևաթերթեր, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել դեռահասության շրջանի տարիքային սահմանումները, այս շրջանին բնորոշ ֆիզիոլոգիական և հոգեկան առանձնահատկությունները, հիմնական պահանջները, սեռական հասունության նշանները, մանկությունից հասուն տարիք անցման պրոբլեմները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դեռահասության շրջանի տարիքային սահմանումը այս շրջանին բնորոշ ֆիզիոլոգիական և հոգեկան առանձնհատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում աղջիկների և տղաների սեռական հասունացումն ըստ արտաքին սեռական հատկանիշների, 3) ճիշտ է ներկայացնում դեռահասների անձնական հիգիենայի կանոնները և հնարավոր ֆիզիոլոգիական փոփոխությունները, 4) ճիշտ է ներկայացնում դաստիարակչական միջոցները (գրականություն, սպորտ), 5) ճիշտ է ներկայացնում դեռահաս ծնող փոխհարաբերությունները, հնարավոր բարդությունները, 6) ճիշտ է սահմանում և գնահատում դեռահասի բնավորությունը, վարքը, հոգեկան վիճակը, 7) ճիշտ է ներկայացնում առողջությանը սպառնացող ռիսկի գործոնները (խմել, ծխել, թմրամոլություն), 8) ճիշտ է ներկայացնում օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական փոփոխությունները, և վաղ սեռական կյանքի վտանգավորությունը և բացասական հետևանքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողը ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու դեռահասի անձնական հիգիենայի, սնուցման կազմակերպման, օրվա ռեժիմի կանոնակարգման, սեռական հասունացման գնահատման,

	հնարավոր ախտաբանական վիճակների բացահայտման, ա.ֆ.ա.-ի գնահատման ըստ օրգան համակարգերի, ուսուցման և դաստիարակման վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի յուրացման ծրագրային մանրամասներ՝ ▪ Դեռահասության շրջանի տարիքային սահմանումը այս շրջանին բնորոշ ֆիզիոլոգիական և հոգեկան առանձնահատկությունները ▪ Աղջինկերի և տղաների սեռական հասունացումը ըստ արտաքին սեռական հատկանիշների ▪ Դեռահասների անձնական հիգիենայի կանոնները և հնարավոր ֆիզիոլոգիական փոփոխությունները ▪ Դեռահաս- ծնող փոխհարաբերությունները, հնարավոր բարդությունները ▪ Դեռահասի բնավորությունը, վարքը, հոգեկան վիճակը ▪ Դեռահասի օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական փոփոխությունները և վաղ սեռական կյանքի վտանգավորությունն ու բացասական հետևանքները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ՝ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԵՎ ԿՆՈՋ ԱՆԱՏՈՄՈ-ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-011
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել մարդու կյանքի շրջանները: Տարիքային անատոմո-ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, նրա հիմնական պահանջները, դրանց բավարարման, ինչպես նաև առողջության պահպանման, ամրապնդման ուղիները և եղանակները:

Մոդուլի տևողությունը	18 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001 մոդուլը:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի կնոջ և տղամարդու սեռական օրգանների կառուցվածքը, յուրաքանչյուր օրգանի նշանակությունը սեռական կյանքում, վերարտադրողական պրոցեսում և ծննդաբերության ժամանակ, ներկայացնի արական և իգական սեռական հորմոնների կենսաբանական ազդեցությունը, 2. ներկայացնի ինտիմ հարաբերությունների նշանակությունը, սեռական խանգարումները կանանց և տղամարդկանց մոտ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները և սեռական կյանքի ազդեցությունը հոգեսոմատիկ վիճակի վրա , 3. ներկայացնի ընտանեկան կյանքի սոցիալ-հոգեբանական ասպեկտները, սահմանի ընտանիքի պլանավորման ծառայությունների աշխատանքը, ներկայացնի անցանկալի հղիության կանխարգելումը, հակաբեղմնավորիչ միջոցների տեսակները և նրանց օպտիմալ ընտրությունը, 4. ներկայացնի հղիության նշանները, ֆիզիոլոգիական հղիության ընթացքը, տևողությունը, սահմանի կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, հղի կնոջ հիմնական պահանջները և դրանց բավարարումը, հղի կնոջ անձնական հիգիենան, ռացիոնալ ռեժիմը և շարժողական ակտիվությունը, 5. ներկայացնի ֆիզիոլոգիական ծննդաբերության ընթացքը, շրջանների տևողությունը, հետծննդյան շրջանի ընթացքը, սահմանի կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, ներկայացնի հետծննդյան շրջանում կնոջ հիգիենան, խնամքի առանձնահատկությունները ծննդաբերության ժամանակ և հետծննդյան շրջանում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել կնոջ և տղամարդու սեռական օրգանների կառուցվածքը, յուրաքանչյուր օրգանի նշանակությունը

	սեռական կյանքում, վերարտադրողական պրոցեսում և ծննդաբերության ժամանակ, ներկայացնել արական և իգական սեռական հորմոնների կենսաբանական ազդեցությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կնոջ և տղամարդու սեռական օրգանների կառուցվածքը և հիգիենան, 2) ճիշտ է սահմանում յուրաքանչյուր օրգանի նշանակությունը և դերը սեռական կյանքում (վերարտադրողական պրոցես, ծննդաբերություն), 3) ճիշտ է ներկայացնում արական և իգական սեռական հորմոնները և դրանց կենսաբանական ազդեցությունը, 4) ճիշտ է սահմանում և հաշվառում հնարավոր բեղմնավորման օրերը՝ վարելով դաշտանային օրացույց, 5) ճիշտ է ներկայացնում վնասակար գործոնները և դրանց ազդեցությունը օվոգենեզի և սպերմատոգենեզի վրա:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը հաշվարկելու է հնարավոր բեղմնավորման օրերը՝ վարելով դաշտանային օրացույց, որոշելու է դաշտանային պարբերաշրջանը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. • Կնոջ և տղամարդու սեռական օրգանների կառուցվածքը և հիգիենան • Յուրաքանչյուր օրգանի նշանակությունը և դերը սեռական կյանքում (վերարտադրողական պրոցես, ծննդաբերություն) • Արական և իգական սեռական հորմոնները և նրանց կենսաբանական ազդեցությունը ▪ Վնասակար գործոնները և դրանց ազդեցությունը օվոգենեզի, սպերմատոգենեզի և մարդու վերարտադրողական առողջության վրա: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բաժանողական նյութեր, մշակված հարցաշարեր, պաստառներ, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 0 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ինտիմ հարաբերությունների նշանակությունը, սեռական խանգարումները կանանց և տղամարդկանց մոտ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները և սեռական կյանքի

	ազդեցությունը հոգեսոմատիկ վիճակի վրա
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ինտիմ հարաբերությունների նշանակությունը, և սահմանում սեքսուալ ներդաշնակություն, դիսհարմոնիա հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում սեռական խանգարումները և խանգարումների բացասական ազդեցությունը մարդու հոգեսոմատիկ վիճակի վրա, 3) ճիշտ է տիրապետում սեռական կյանքի հիգիենա հասկացությանը, 4) ճիշտ է սահմանում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները և դրանց կանխարգելման եղանակները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողն ընտրում է չորս պատասխանից մեկ ճիշտը, որոնք վերաբերվում են ինտիմ հարաբերությունների նշանակությանը, սեռական խանգարումներին, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին, հոգեսոմատիկ վիճակի վիա սեռական կյանքի ազդեցությանը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ ինտիմ հարաբերությունների նշանակությունը, <<Սեքսուալ ներդաշնակություն և դիսհարմոնիա>> հասկացությունները, ▪ սեռական խանգարումների տեսակները, ▪ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բաժանողական նյութեր, մշակված հարցաշարեր, պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել ընտանեկան կյանքի սոցիալ-հոգեբանական ասպեկտները, ընտանիքի պլանավորման ծառայությունների աշխատանքը, անցանկալի հղիության կանխարգելումը, հակաբեղմնավորիչ միջոցների

	տեսակները և նրանց օպտիմալ ընտրությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ժամանակակից հասարակության մեջ ընտանիքի դերը, նրա պրոբլեմները, 2) ճիշտ է սահմանում ընտանիքի պլանավորման ծառայության աշխատանքի հիմնական սկզբունքները, 3) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորումը որպես բնակչության վերարտադրողական առողջության պահպանման պետական ծրագիր, 4) ճիշտ է ներկայացնում տարբեր հակաբեղմնավորիչ միջոցների թերություններն ու առավելությունները և բուժքրոջ դերը արհեստական վիժման կանխարգելման հարցում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի միջոցով: Ուսանողը կատարելու է անցանկալի հղիությունը կանխող խորհրդատվություն, ընտրելու է հակաբեղմնավորիչ որևէ միջոց: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ ժամանակակից ընտանիքի պրաբլեմները, ▪ անցանկալի հղիության կանխարգելումը, ▪ ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցները, թերություններն ու առավելությունները և բուժքրոջ դերը արհեստական վիժման կանխարգելման հարցում: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բաժանողական նյութեր, դերային խաղի սցենարներ, պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել հղիության նշանները, ֆիզիոլոգիական հղիության ընթացքը, տևողությունը, սահմանել կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, հղի կնոջ հիմնական պահանջները և դրանց բավարարումը, հղի կնոջ անձնական հիգիենան, ռացիոնալ ռեժիմը և շարժողական ակտիվությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում ֆիզիոլոգիական հղիության նշանները, ընթացքը և տևողությունը,

	2) ճիշտ է սահմանում հղի կնոջ օրգանիզում տեղի ունեցող փոփոխությունները, նրա հիմնական պահանջները և դրանց բավարարումը, 3) ճիշտ է սահմանում հղի կնոջ անձնական հիգիենայի, ռացիոնալ օրվա ռեժիմի, շարժողկան ակտիվության նշանակությունը, 4) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորման կենտրոնների աշխատանքային սկզբունքները, կնոջ վերարտադրողական առողջության կարևորությունը, 5) ճիշտ է սահմանում մանկաբարձի դերը, քարոզչության կարևորությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի միջոցով: Ուսանողը կատարելու է խորհրդատվություն հղի կնոջ անձնական հիգիենայի, ռացիոնալ սնուցման և շարժողական ակտիվության վերաբերյալ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ Բեղմնավորման տեղը և մեխանիզմները: ▪ Ֆիզիոլոգիական հղիության ընթացքի տևողությունը: ▪ Հղիության նշանները և օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը խորհրդատվությունը կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բաժանողական նյութեր, մշակված հարցաշարեր, պաստառներ, դերային խաղի սցենարներ, տեսաֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել ֆիզիոլոգիական ծննդաբերության ընթացքը, շրջանների տևողությունը, հետծննդյան շրջանի ընթացքը, սահմանել կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, ներկայացնել հետծննդյան շրջանում կնոջ հիգիենան, խնամքի առանձնահատկությունները ծննդաբերության ժամանակ և հետծննդյան շրջանում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ֆիզիոլոգիական ծննդաբերության ընթացքը, տևողությունը, շրջանները, 2) ճիշտ է սահմանում հետծննդյան շրջանի ընթացքը,

	3) ճիշտ է ներկայացնում խնամքի կարևորությունը ծննդաբերության և հետծննդյան շրջաններում, 4) ճիշտ է ներկայացնում կնոջ օրգանիզմում տեղի ունեցած փոփոխությունները և տալիս է անհրաժեշտ խորհուրդներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի միջոցով: Ուսանողը կատարելու է խորհրդատվություն ծննդաբերության և հետծննդյան շրջանների, կնոջ օրգանիզմում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ ֆիզիոլոգիական ծննդաբերության ընթացքը, ▪ հետծննդյան շրջանի ընթացքը, կնոջ հիգիենան, ▪ քույրական խնամքի կարևորությունը ծննդաբերության և հետծննդյան շրջաններում: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը խորհրդատվությունը կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բաժանողական նյութեր, դերային խաղի սցենարներ, մշակված հարցաշարեր, պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ՝ ԿԼԻՄԱԿՏԵՐԻԿ ԵՎ ԾԵՐՈՒՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆԱՏՈՄՈ-ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-012
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել մարդու կյանքի շրջանները: Տարիքային անատոմիո-ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հիմնական պահանջները, դրանց բավարարման, ինչպես նաև առողջության պահպանման, ամրապնդման ուղիները և եղանակները:
Մոդուլի տևողությունը	18 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ

	գործնական աշխատանք՝ 10 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001 մոդուլը:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի կանաց և տղամարդկանց օրգանիզմում տեղի ունեցած փոփոխությունները կլիմակտերիկ շրջանում, ներկայացնի այս շրջանի ընթացքը և առանձնահատկությունը կնոջ և տղամարդու մոտ, սահմանի առողջ ապրելակերպի ազդեցությունը կլիմակտելիկ շրջանի ընթացքի վրա, 2. ներկայացնի ծերացման մեխանիզմը, տարիքային խմբերի դասակարգումը, սահմանել վաղ ծերությանը նպաստող գործոնները, ներկայացնի գերոնտոլոգիա և գերիաթրիա հասկացողությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել կանաց և տղամարդկանց օրգանիզմում տեղի ունեցած փոփոխությունները, կլիմակտերիկ շրջանում, ներկայացնել այս շրջանի ընթացքը և առանձնահատկությունը կնոջ և տղամարդու մոտ, սահմանել առողջ ապրելակերպի ազդեցությունը կլիմակտելիկ շրջանի ընթացքի վրա
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կլիմակտերիկ շրջանում օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, 2) ճիշտ է ներկայացնում կլիմակտերիկ շրջանը մարդու կյանքում՝ որպես առանձնահատուկ շրջան, 3) ճիշտ է սահմանում այս շրջանի առանձնահատկությունները կանաց և տղամարդկանց մոտ, վերարտադրողական ֆունկցիայի մարում, հոգեկան պրոբլեմներ և այլն, 4) ճիշտ է սահմանում առողջ ապրելակերպի ազդեցությունը, կլիմակտերիկ շրջանի բարենպաստ ընթացքի վրա:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու կլիմակտերիկ շրջանում կանանց և տղամարդկանց օրգանիզմում տեղի ունեցած փոփոխությունների, կնոջ և տղամարդու մոտ այս շրջանի ընթացքի, առողջ ապրելակերպի վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ.

	▪ կլիմաքսի առաջացման հետ կապված հոգեբանական պրոբլեմները, ▪ կնոջ մոտ վերարտադրողական ֆունկցիայի մարումը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բաժանողական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ծերացման մեխանիզմը, տարիքային խմբերի դասակարգումը, սահմանել վաղ ծերությանը նպաստող գործոնները, ներկայացնել գերոնտոլոգիա և գերիաթրիա հասկացողությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տիրապետում տարիքային խմբերի դասակարգմանը և սահմանում ծերացման մեխանիզմը, 2) ճիշտ է սահմանում վաղաժամ ծերությունը նպաստող գործոնները և դրանց անցանկալի հետևանքները, 3) ճիշտ է ներկայացնում գերիատրիա և գերոնտոլոգիա հասկացողությունները, 4) ճիշտ է ներկայացնում տարեց, ծերունական տարիքում օրգան համարագերի կողմից փոփոխությունները (սիրտ անոթային, մարսողական, էնդոկրին, նյարդային միզային և անհատի հոգեբանական փոփոխությունները (ընկալման, մտածողության, հիշողության), 5) ճիշտ է սահմանում սպասարկման բազմաթիվ առանձնահատկությունները և օգնության կազմակերպման մեթոդները, 6) ճիշտ է ներկայացնում ‹‹էվթանազիա›› և ‹‹մահ›› հասկացությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու ծերացման մեխանիզմների, տարիքային խմբերի դասակարգման, վաղաժամ ծերացմանը նպաստող գործոնների, <<Գերոնտոլոգիա և գերիատրիա>>, <<Էվթանազիա>> և <<Մահ>> հասկացությունների վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ <<Գերոնտոլոգիա և գերիատրիա>> հասկացությունները ,

	▪ տարիքային խմբերի դասակարգումը, տարեցների անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ▪ ծերացման մեխանիզմները, ▪ վաղաժամ ծերացմանը նպաստող գործոնները, ▪ <<Էվթանազիա>> և <<Մահ>> հասկացությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բաժանողական նյութեր, պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-013
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել տարբերակել միկրոօրգանիզմներն՝ ըստ իրենց հիմնական հատկանիշների, անցկացնել հետազոտություններ, պատկերացում ունենալ իմունիտետի և նրա գործոնների, վարակի աղբյուրի, տարածման ուղիների մասին, իրականացնել վարակի տարածման կանխարգելիչ միջոցառումներ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 34 ժամ գործնական աշխատանք՝ 38 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի միկրոօրգանիզմներն՝ ըստ իրենց ձևաբանական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական հատկանիշների և դրանց հետազոտման եղանակները,

	2. իրականացնի բժշկական կազմակերպություններում նախավարակազերծող, վարակազերծող, մանրէազերծող միջոցառումներ, կատարի նրանց որակի սանիտարամանրէաբանական հսկողություն, ինչպես նաև իմունականխանգելիչ, քիմիոկանխարգելիչ և բուժիչ միջոցառումներ, 3. բացատրի ախտածին կոկերի, կորինեբակտերիաների, միկրոբակտերիաների, ախտածին կլոստրիդիումների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները, իրականացնի նրանց մանրեաբանական հետազոտությունը և կանխարգելիչ միջոցառումները, 4. բացատրի աղիքային բակտերիաների ընտանիքի, մալարիայի հարուցչի առանձնահատկությունները, փոխանցման ուղիներն և իրականացնի դրանց մանրեաբանական հետազոտությունը, կանխարգելիչ միջոցառումները, 5. բացատրի զոոնոզ ինֆեկցիաների հարուցիչների և վիրուսների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները, իրականացնի նրանց մանրեաբանական հետազոտությունը և կանխարգելիչ միջոցառումները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել միկրոօրգանիզմներն՝ ըստ իրենց ձևաբանական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական հատկանիշների և դրանց հետազոտման եղանակներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում միկրոօրգանիզմների դերը և գործնական նշանակությունը մարդու կյանքում, 2) ճիշտ է դասակարգում և տարբերակում միկրոօրգանիզմներն ըստ իրենց ձևաբանական հատկանիշների, 3) ճիշտ է նկարագրում, հետազոտում և տարբերակում միկրոօրգանիզմներն ըստ իրենց ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների, 4) ճիշտ է ներկայացնում հետազոտվող նյութի հավաքման և տեղափոխման կանոնակարգը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու մարդու կյանքում միկրոօրգանիզմների դերի և նշանակության, ըստ իրենց ձևաբանական հատկանիշների, դրանց դասակարգման և տարբերակման, հետազոտվող նյութի հավաքման և տեղափոխման կանոնների վերաբերյալ հարցեր:

	Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. • Միկրոօրգանիզմների դերը և գործնական նշանակությունը մարդու կյանքում • Միկրոօրգանիզմներն ըստ իրենց ձևաբանական, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների • Հետազոտվող նյութի հավաքման և տեղափոխման կարգը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ անհրաժեշտ ցուցադրական պարագաներ, մեթոդական և տեղեկատու գրականություն,ուսումնառության նյութեր, պաստառներ, տեսաֆիլմ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել լաբորատորիաներում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Իրականացնել բժշկական կազմակերպություններում նախավարակազերծող, վարակազերծող, մանրէազերծող միջոցառումներ, կատարել նրանց որակի սանիտարամանրէաբանական հսկողություն, ինչպես նաև իմունականխանգելիչ, քիմիոկանխարգելիչ և բուժիչ միջոցառումներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը միկրոօրգանիզմների վրա, 2) ճիշտ է պատրաստում վարակազերծող լուծույթ, իրականցնում է աշխատատեղի, ձեռքերի, ամանեղենի, օժանդակ նյութերի վարակազերծում, 3) ճիշտ է կիրառում գոլորշային, չորացնող, տինդալացման հականեխող սարքերը, 4) ճիշտ է բացատրում ինֆեկցիա, ինֆեկցիոն և էպիդեմիկ պրոցես հասկացությունները և նրանց գործոնները, 5) ճիշտ է բացատրում իմունիտետի գործոնները և նրանց հետազոտումը, 6) ճիշտ է կազմակերպում և իրականացնում վարակիչ հիվանդությունների իմունականխարգելումը, քիմիոկանխարգելիչ և բուժիչ միջոցառումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը ցուցադրելու է վարակազերծող լուծույթների պատրաստման, կիրառման, գոլորշային չորացնող սարքերի ճիշտ

	գործածության վերաբերյալ կարողությունները, <<Միկրոօրգանիզմների զգայունության որոշումը թղթյա սկավառակների միջոցով>> փորձի կատարման ճիշտ հաջորդականությունը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ վարակազերծման տեսակները և եղանակները, ▪ վարակիչ հիվանդությունների իմունոկանխարգելումը ինֆեկցիա, ինֆեկցիոն և էպիդեմիկ պրոցես հասկացությունները և նրանց գործոնները, ▪ քիմիոկանխարգելիչ և բուժիչ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, առաջացած բարդությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր: Թույլատրելի են ոչ էական թերություններ և բացթողումներ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, համապատասխան լաբորատոր սարքավորումներ, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Բացատրել ախտածին կոկերի, կորինեբակտերիաների, միկրոբակտերիաների, ախտածին կլոստրիդիումների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները, իրականացնել նրանց մանրեաբանական հետազոտությունը և կանխարգելիչ միջոցառումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում ախտածին կոկերի մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 2) ճիշտ է նկարագրում կորինեբակտերիաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 3) ճիշտ է նկարագրում միկոբակտերիաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական

	առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 4) ճիշտ է նկարագրում ախտածին կլոստրիդիումների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու ախտածին կոկերի, կորինեբակտերիաների, կլոստրիդիումների, միկոբակտերիաների մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաբանական առանձնահատկությունների, փոխանցման ուղիների, առաջացրած հիվանդությունների վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ կիրառվող վակցինաները և իմուն շիճուկները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, համապատասխան լաբորատոր սարքավորումներ, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Բացատրել աղիքային բակտերիաների ընտանիքի, մալարիայի հարուցչի առանձնահատկությունները, փոխանցման ուղիներն և իրականացնել նրանց մանրեաբանական հետազոտությունը, կանխարգելիչ միջոցառումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում սալմոնելաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 2) ճիշտ է նկարագրում շիգելաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները,

	առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 3) ճիշտ է նկարագրում էշերիխիաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 4) ճիշտ է նկարագրում խոլերայի վիբրիոնի մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 5) ճիշտ է նկարագրում պլազմոդիումի մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու աղիքային բակտերիաների ընտանիքի, մալարիայի հարուցչի մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաբանական առանձնահատկությունների, փոխանցման ուղիների, աղիքային բակտերիաների ընտանիքի, մալարիայի հարուցչի մանրէաբանական հետազոտման եղանակների, կանխարգելման սկզբունքների վերաբերյալ հարցեր: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, համապատասխան լաբորատոր սարքավորումներ, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Բացատրել զոոնոզ ինֆեկցիաների հարուցիչների և վիրուսների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները, իրականացնել նրանց մանրեաբանական հետազոտությունը և կանխարգելիչ միջոցառումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում բրուցելլաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական

	առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 2) ճիշտ է նկարագրում սիբիրյան խոցի հարուցչի մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 3) ճիշտ է նկարագրում ժանտախտի և տուլարեմիայի հարուցիչների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, նրանց մանրեաբանական հետազոտումը և կանխարգելումը, 4) ճիշտ է նկարագրում վիրուսների կառուցվածքը, քիմիական կազմը, դասակարգումը առաջացրած հիվանդությունները, լաբորատոր ախտորոշման առանձնահատկությունները և կանխարգելումը, բակտերիոֆագեր:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու զոոնոզ ինֆեկցիաների հարուցիչների մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաբանական առանձնահատկությունների, փոխանցման ուղիների, վիրուսների քիմիական կազմի, առաջացրած հիվանդությունների, զոոնոզ ինֆեկցիաների հարուցիչների մանրէաբանական հետազոտման եղանակների, կանխարգելմանը, վիրուսների կանխարգելման սկզբունքների վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ կիրառվող վակցինաները և իմուն շիճուկները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, համապատասխան լաբորատոր սարքավորումներ, պաստառներ, տեսանյութեր, ատլասներ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 6 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-014
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել՝ դեղաձևերը, տալ դեղի բնութագիրն՝ ըստ նրանց ֆարմակոկինետիկ և ֆարմակոդինամիկ հատկանիշների, իմանալ դեղերի դուրս գրման սկզբունքները դեղատոմսում, կարողանալ օգտվել տեղեկագրերից:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. տարբերակի և ցուցադրի դեղորայքային ձևերը, 2. ներկայացնի դեղի դուրս գրման սկզբունքները և անհրաժեշտության դեպքում դուրս գրի դեղատոմս, 3. ներկայացի ֆարմակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի հիմնական դրույթները և հասկացողությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Տարբերակել և ցուցադրել դեղորայքային ձևերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է խմբավորում դեղերի բազմության միջից՝ կարծր, հեղուկ, փափուկ դեղաձևերը, 2) ճիշտ է բացատրում դեղորայքային ձևերի կառուցվածքային առանձնահատկությունները, 3) ճիշտ է ներկայացնում դեղորայքային ձևերի կիրառման և պահպանման պայմանները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարություն կատարելու միջոցով: Ուսանողը խմբավորում է դեղերի բազմությունից կարծր, հեղուկ, փափուկ դեղաձևերը:

	Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ կարծր դեղաձևեր՝ պատրաստման և կիրառման առանձնահատկությունները, պահպանման պայմանները, ▪ հեղուկ դեղաձևեր՝ տեսակները, պատրաստման և կիրառման առանձնահատկությունները, պահպանման պայմանները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է, թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, աղյուսակներ, ուսումնառության նյութեր, ցուցադրական նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել դեղի դուրս գրման սկզբունքները և անհրաժեշտության դեպքում դուրս գրել դեղատոմս
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դեղատոմսի ձևերը, կառուցվածքը, 2) ճիշտ է բացատրում դեղատոմսում առկա կրճատումները, օգտագործման եղանակները՝ պահպանելով դեղատոմսի դուրս գրման կանոնները, 3) ճիշտ է օգտվում մասնագիտական տեղեկագրերից, աննոտացիաներից:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարություն կատարելու միջոցով: Ուսանողը դուրս է գրում դեղատոմսեր՝ պահպանելով դուրս գրման կանոնները, կիրառելով նախատեսված կրճատումները, օգտվում է մասնագիտական տեղեկագրերից, անոտացիաներից: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ դեղատոմսի ձևերը, կառուցվածքը, ▪ դեղատոմսում առկա կրճատումները, օգտագործման եղանակները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ, թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ:
Մեթոդաբանությունը և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է

ռեսուրսները	ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, կիրառվող դեղատոմսերի նմուշներ, պաստառներ, աղյուսակներ, ուսումնառության նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել ֆարմակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի հիմնական դրույթները և հասկացողությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ներմուծման ուղիները՝ բացատրելով առանձնահատկությունները և օրգանիզմում առաջացած փոփոխությունները դեղերի կրկնակի ներմուծման ժամանակ և զուգորդված կիրառման ժամանակ, 2) ճիշտ է ներկայացնում դեղերի ազդեցության տեսակները, տարրաբաշխման վրա ազդող գործոնները, արտազատման ուղիները, 3) ճիշտ է տարբերակում դեղաչափի (դոզայի) տեսակները՝ նշելով առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու ֆարմակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի հիմնական դրույթների՝ դեղերի ներմուծման ուղիները և օրգանիզմում առաջացած փոփոխությունները դեղանյութերի կրկնակի ներմուծման և զուգորդված կիրառման ժամանակ, դեղերի ազդեցության տեսակների, տարրաբաշխմանը և նրա վրա ազդող գործոնների, դեղերի արտազատման ուղիների, դեղանյութերից առաջացած բարդությունների և կողմնակի երևույթների՝ ընտելացում, գերզգայնություն, կախվածություն, կուտակում, տերատոգենություն, ինչպես նաև դեղաչափի և նրա տեսակների վերաբերյալ հարցեր: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական դեղորայք, ուսումնառության նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՆՅԱՐԴԱՅԻՆ, ՇՆՉԱՌԱԿԱՆ, ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ	

ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԴԵՂԵՐԸ, ՀԱԿԱԲԱԿՏԵՐԻԱԼ, ՀԱԿԱՍՆԿԱՅԻՆ, ՀԱԿԱՆԵԽԻՉ ԵՎ ՔԻՄԻՈԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԴԵՂԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-015
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել դասակարգել դեղերը խմբերի և ենթախմբերի՝ ըստ օրգանիամակարգերի, նյութափոխանակության, մանրէների, ախտաբանական վիճակների վրա ունեցած ազդեցության:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Ընդհանուր դեղաբանություն» ՄԲԳ-5-13-014 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգի վրա ազդող դեղերը՝ ըստ խմբերի և ենթախմբերի, 2. ներկայացնի շնչառական, սիրտ-անոթային համակարգի վրա ազդող դեղերը՝ ըստ խմբերի և ենթախմբերի, 3. ներկայացնի և դասակարգել հականեխիչները (հակասեպտիկներ), հակաբակտերիալ քիմիոթերապևտիկ և հականսկային դեղերը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգի վրա ազդող դեղերը՝ ըստ խմբերի և ենթախմբերի
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում տվյալ խմբերի դեղերը,

	2) ճիշտ է ներկայացնում այս դեղերի ազդեցության մեխանիզմը, 3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը, նշելով կիրառման առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում այս դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և վերջիններիս կանխման եղանակները, 5) ճիշտ է ներկայացնում այս դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները, 6) ճիշտ է դուրս գրում այս խմբի դեղերը դեղատոմսում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու այս խմբերի դեղերի նշանակման ցուցումների, հակացուցումների, գերդոզավորումից առաջացած թունավորման նշանների, առաջին բուժօգնության սկզբունքների, դեղատոմսերի դուրս գրման վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող դեղամիջոցներ՝ դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կիրառման առանձնահատկությունները, ցուցումները, հակացուցումները, կողմնակի երևույթները, գերդոզավորումից առաջացած բարդությունները և առաջին բուժօգնությունը, հոմանիշ դեղերը, ▪ ծայրամասային նյարդային համակարգի վրա ազդող դեղամիջոցներ՝ դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կիրառման առանձնահատկությունները, ցուցումները, հակացուցումները, կողմնակի երևույթները, գերդոզավորումից առաջացած բարդությունները և առաջին բուժօգնությունը, հոմանիշ դեղերը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, ուսումնառության նյութեր, ցուցադրական նյութեր,դեղերի

	նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել շնչառական, սիրտ-անոթային համակարգի վրա ազդող դեղերը՝ ըստ խմբերի և ենթախմբերի
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում տվյալ խմբերի դեղերը, 2) ճիշտ է ներկայացնում այս դեղերի ազդեցության մեխանիզմը, 3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը, նշելով կիրառման առանձնահատկությաւնները, 4) ճիշտ է ներկայացնում այս դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և վերջիններիս կանխման եղանակները, 5) ճիշտ է ներկայացնում այս դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները, 6) ճիշտ է դուրս գրում այս խմբի դեղերը դեղատոմսում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու այս դեղերի խմբերի դասակարգման, ազդեցության մեխանիզմի, դոզավորման, սպասվող բարդությունների, կողմնակի երևույթների և վերջիններիս կանխման եղանակների, ցուցումների, հակացուցումների, գերդոզավորումից առաջացած թունավորման նշանների, առաջին բուժօգնության սկզբունքների, դեղատոմսերի դուրս գրման վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասները. ▪ շնչական համակարգի վրա ազդող դեղամիջոցներ՝ դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կիրառման առանձնահատկությունները, ցուցումները, հակացուցումները, կողմնակի երևույթները, գերդոզավորումից առաջացած բարդությունները և առաջին բուժօգնությունը, հոմանիշ դեղերը, ▪ սիրտ-անոթային համակարգի վրա ազդող դեղամիջոցներ՝ դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կիրառման առանձնահատկությունները, ցուցումները, հակացուցումները, կողմնակի երևույթները, գերդոզավորումից առաջացած բարդությունները և առաջին բուժօգնությունը, հոմանիշ դեղերը

	Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, դեղերի նմուշներ, ուսումնառության նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել և դասակարգել հականեխիչները (հակասեպտիկներ), հակաբակտերիալ քիմիոթերապևտիկ և հակասնկային դեղերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում տվյալ խմբերի դեղերը, 2) ճիշտ է ներկայացնում այս դեղերի ազդեցության մեխանիզմը, 3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը, նշելով կիրառման առանձնահատկությաւնները, 4) ճիշտ է ներկայացնում այս դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և վերջիններիս կանխման եղանակները, 5) ճիշտ է ներկայացնում այս դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները, 6) ճիշտ է դուրս գրում այս խմբի դեղերը դեղատոմսում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու այս դեղերի խմբերի դասակարգման, ազդեցության մեխանիզմի, դոզավորման, սպասվող բարդությունների, կողմնակի երևույթների, ցուցումների, հակացուցումների, գերդոզավորումից առաջացած թունավորման նշանների, առաջին բուժօգնության սկզբունքների, դեղատոմսերի դուրս գրման վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասները. ▪ անտիսեպտիկներ՝ հականեխիչներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կիրառման

	առանձնահատկությունները, ցուցումները, հակացուցումները, կողմնակի երևույթները, ▪ հակաբակտերիալ՝ քիմիոթերապևտիկ դեղամիջոցներ՝ դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կիրառման առանձնահատկությունները, ցուցումները, հակացուցումները, կողմնակի երևույթները, հոմանիշ դեղերը, ▪ հակասնկային դեղամիջոցներ՝ դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կիրառման առանձնահատկությունները, ցուցումները, հակացուցումները, կողմնակի երևույթները, հոմանիշ դեղերը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, դեղերի նմուշներ, ուսումնառության նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝8 ժամ
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղի սցենարներ, պաստառ, տեսաֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել մարդու համակողմանի պահանջները՝ ըստ Մասլոուի և Հենդերսոնի, ներկայացնել քույրական գործընթացի մոդելները և փուլերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մարդու կենսական կարևոր պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում մարդու պահանջների ստորակարգումը ըստ Մասլոուի և դասակարգումը ըստ Հենդերսոնի, 3) ճիշտ է ներկայացնում քույրական գործընթացը, նրա էությունը մոդելները և էտապները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու ըստ Մասլոուի մարդու պահանջների ստորոկարգմանը և ըստ Հենդերսոնի պահանջների դասակարգմանը, քույրական խնամքի պլան կազմելու և քույրական գործընթաց իրականացնելու վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են ադյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ Մասլոուի հերիարխիան և Հենդերսոնի մոդելի կիրառումը քույրական գործում ▪ <<Քույրական ախտորոշում>> հասկացողությունը

	▪ պացիենտի պահանջները, պրոբլեմները, խնամքի նպատակները, քույրական միջամտությունը և արդյունքների գնահատումը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղի սցենարներ, պաստառ, ստենդ, բաժանողական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-023
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ ներհիվանդանոցային վարակի, նրա կանխարգելման, հետազոտության համար նյութի վերցման մասին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ գործնական աշխատանք՝ 54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001 մոդուլը:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի ‹‹Ներհիվանդանոցային վարակ›› հասկացությունը՝ նրա կանխարգելման և վերահսկման միջոցները, 2. ներկայացնի ‹‹Ախտահանում›› հասկացությունը, ախտահանման տեսակները, ձևերը և եղանակները, պատրաստի ախտահանիչ լուծույթներ և կիրառել դրանք, պահպանել անվտանգության կանոնները, 3. ներկայացնի գործիքների նախամանրէազերծման փուլերը, ներկայացնել որակի ստուգումը (արյուն, ճարպ, քլոր, լվացող լուծույթ), բացատրի ‹‹Մանրէազերծում›› հասկացողությունը, մեթոդները, տեսակները

	և ռեժիմները, 4. ներկայացնի վիրուսային հեպատիտները՝ բացառությամբ Ա-ի, և ՄԻԱՎ վարակի փոխանցումը և կանխարգելումը, սահմանել հսկողության նախազգուշական ունիվերսալ միջոցները, 5. ներկայացնի մանրէաբանական հետազոտության համար նմուշի վերացման կարգը, նպատակը, կանոնները, ճիշտ պահպանումը և տեղափոխումը բակտերիոլոգիական լաբորատորիա, ինչպես նաև բացատրի նախազգուշական միջոցները կենսահեղուկի հետ աշխատելիս:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ‹‹Ներհիվանդանոցային վարակ›› հասկացությունը՝ նրա կանխարգելման և վերահսկման միջոցները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում ‹‹ներհիվանդանոցային վարակ›› հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում ինֆեկցիոն գործընթացը, ռիսկի խմբերը, տիրոջ ընկալության վրա ազդող գործոնները, ինֆեկցիոն պրոցեսի շղթան, հարուցիչները և նրանց փոխանցման ձևերը, 3) ճիշտ է տիրապետում ներհիվանդանոցային վարակի կանխարգելմանը ուղղված նախազգուշական ունիվերսալ միջոցներին: Արյան և կենսաբանական հեղուկների հետ աշխատելիս պահպանում է ընդհանուր նախազգուշական միջոցներ, 4) ճիշտ է ներկայացնում ձեռքերի լվացման մակարդակները և իրականացնում ձեռքերի հիգիենիկ լվացումը յուրաքանչյուր պրոցեդուրայից առաջ և հետո, 5) ճիշտ է սահմանում պաշտպանողական հագուստի կարևորությունը և իրականացնում դրանց (բժշկական գլխարկը, խալաթ, դիմակ, ձեռնոց ակնոց) հանգնելն ու հանելը, 6) ճիշտ է սահմանում սուր, կտրող, ծակող գործիքների հետ աշխատելիս անվտանգության կանոնների պահպանումը, 7) ճիշտ է իրականացնում ընդունարանի սանիտարահիգիենիկ միջոցառումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու <<Ներհիվանդանոցային վարակ>> հասկացության, ինֆեկցիոն պրոցեսի շղթայի, վարակի փոխանցման եղանակների, կանխարգելման միջոցների

	վերաբերյալ հարցեր:: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ Ն.հ.վ-ի ռիսկի խմբերը: ▪ տիրոջ ընկալության վրա ազդող գործոնները ▪ Ն.հ.վ-ի կանխարգելման համար նախազգուշական միջոցառումները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, պատկերազարդ ատլասներ, բաժանողական նյութեր պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ‹‹Ախտահանում›› հասկացությունը, ախտահանման տեսակները, ձևերը և եղանակները, պատրաստել ախտահանիչ լուծույթներ և կիրառել դրանք, պահպանել անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ‹‹Ախտահանում›› հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում ախտահանման տեսակները, ձևերը, եղանակները, 3) ճիշտ է իրականացնում ախտահանիչ լուծույթի պատրաստումը և կիրառումը (գործիքներ, սարքավորումներ, խնամքի պարագաներ, տարածքներ), 4) ճիշտ է իրականացնում բժշկական նշանակություն ունեցող տարբեր գործիքների և տարածքների ախտահանում, 5) ճիշտ է տիրապետում անվտանգության կանոններին լուծույթներ պատրաստելի և կիրառելիս:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է ախտահանիչ լուծույթների պատրաստումը և կիրառումը, խնամքի պարագաների ախտահանումը, տարածքների ախտահանումը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ <<Ախտահանում>> հասկացության էությունը,

	▪ ախտահանման տեսակները, ձևերը, եղանակները, ▪ անվտանգության կանոնները լուծույթներ պատրաստելի և կիրառելիս: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ դիտողական պարագաներ, բաժանողական նյութեր, պաստառներ, ստենդ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել գործիքների նախամանրէազերծման փուլերը, ներկայացնել որակի ստուգումը (արյուն, ճարպ, քլոր, լվացող լուծույթ), բացատրել ‹‹Մանրէազերծում›› հասկացողությունը, մեթոդները, տեսակները և ռեժիմները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է իրականացնում գործիքների նախամանրէազերծումը, 2) ճիշտ է իրականացնում նախամանրէազերծման որակի հսկողություն, 3) ճիշտ է ներկայացնում ‹‹Մանրէազերծում›› հասկացությունը, 4) ճիշտ է ներկայացնում մանրէազերծման մեթոդները, միջոցները, եղանակները և ռեժիմները, 5) ճիշտ է տիրապետում մանրէազերծման որակի վերահսկման ձևերին, 6) ճիշտ է ներկայացնում կենտրոնացված մանրէազերծման բաժանմունքի կառուցվածքը, ֆունկցիաները և աշխատանքային սկզբունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու գործիքների նախամանրէազերծմա փուլերի, որակի հսկողության, <<Մանրէազերծում>> հասկացության, մանրէազերծման մեթոդների, միջոցների, եղանակների և ռեժիմների վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ գործիքների նախամանրէազերծումը, որակի հսկողությունը, ▪ <<Մանրէազերծում>> հասկացությունը, մեթոդները, միջոցները, եղանակները և ռեժիմները, ▪ կենտրոնացված մանրէազերծման բաժանմունքի կառուցվածքը, ֆունկցիաները և աշխատանքային

	սկզբունքները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, բաժանողական նյութեր, պաստառներ, պատկերազարդ ատլասներ, ստենդ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել վիրուսային հեպատիտները՝ բացառությամբ Ա-ի, և ՄԻԱՎ վարակի փոխանցումը և կանխարգելումը, սահմանել հսկողության նախազգուշական ունիվերսալ միջոցները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում վիրուսային հեպատիտների՝ բացառությամբ Ա-ի և ՄԻԱՎ վարակի փոխանցման ձևերը, 2) ճիշտ է իրականացնում բուժհաստատություններում վարակի կանխարգելումը, 3) ճիշտ է ներկայացնում կանխարգելիչ ունիվերսալ միջոցների պահպանումը և սահմանում հսկողություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է վիրուսային հեպատիտների՝ բացառությամբ Ա-ի, և ՄԻԱՎ վարակի փոխանցման և կանխարգելման ձևերի, ձեռքերի լվացման մակարդակների, մանրէազերծված ձեռնոցների հագնելու և հանելու վերաբերյալ ունակությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, բաժանողական նյութեր, պաստառներ, պատկերազարդ ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել մանրէաբանական հետազոտության համար նմուշի վերացման կարգը, նպատակը, կանոնները, ճիշտ պահպանումը և տեղափոխումը բակտերիոլոգիական լաբորատորիա, ինչպես նաև բացատրել

	նախազգուշական միջոցները կենսահեղուկի հետ աշխատելիս
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մանրէաբանական հետազոտության համար նմուշի վերացման նպատակը, տեխնիկան և կանոնները, 2) ճիշտ է վերցնում նմուշը բակ. հետազոտության համար, 3) ճիշտ է ներկայացնում նմուշի ճիշտ պահպանումը և ուղարկումը բակ. լաբորատորիա, 4) ճիշտ է իրականացնում նախազգուշական միջոցառումները կենսահեղուկի հետ աշխատելիս:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է արյան, մեզի, կղանքի, խորխի, քթից, բկանցքից նմուշի վերցնելը մանրէաբանական հետազոտության, պահպանման և տեղափոխման կանոնները, կենսահեղուկների հետ աշխատելիս նախազգուշական կանոնները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ մանրէաբանական հետազոտության համար նմուշի վերցման նպատակը, տեխնիկան և կանոնները, ▪ նմուշի պահպանումը և ուղարկումը մանրէաբանական լաբորատորիա: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, բաժանողական նյութեր, պաստառներ, պատկերազարդ ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ՝ ՄԱՐՄՆԻ ԲԻՈՄԵԽԱՆԻԿԱ, ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՈՒՆԱՎՈՐ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎՐԱ ԵՎ ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-024
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ, սովորեցնել բիոմեխանիկայի ճիշտ պահպանումը, ծանր հիվանդների խնամքը, թունավոր և վնասակար նյութերի ազդեցությունը բուժքրոջ առողջության վրա, պացիենտի ընդունումը

	բուժհաստատություն, ֆունկցիոնալ վիճակի գնահատումը, օգնությունը տենդի ժամանակ, քույրական գործընթացի կազմակերպումը տարբեր իրավիճակներում:
Մոդուլի տևողությունը	54 ժամ գործնական աշխատանք՝ 54ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001, «Դիետոլոգիա և սնուցում» ՄԲԳ-5-13-002 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի ‹‹Մարմնի բիոմեխանիկա›› հասկացությունը, նկարագրի պատճառները, որոնք բերում են մեջքի մկանների և ողնաշարի վնասվածքների, 2. ներկայացնի բուժհաստատություններում թունավոր և վնասակար գործոնների ազդեցությունը քույրական անձնակազմի առողջության վրա, իրականացնի դրանց կանխարգելումը, 3. ներկայացնի պացիենտի ընդունումը բուժկանխարգելիչ հիմնարկություն, ընդունարանի աշխատանքի սկզբունքները, կառուցվածքը և բուժքրոջ գործառույթները, ներկայացնի բուժհաստատության բուժպահպանողական ռեժիմը և տիպերը, 4. Բացատրի ծանր հիվանդների խնամքը, անձնական հիգիենան, սնուցումը, սպիտակեղենի փոխումը, սահմանել ‹‹Անկողնային կոմֆորտ›› հասկացողությունը, ներկայացնի պառկելահարուկների սահմանումը և կանխարգելումը: 5. ներկայացնի պացիենտի ֆունկցիոնալ վիճակի գնահատումը՝ պուլս, զարկերակային ճնշում, շնչառության և ջերմության չափումը, ներկայացնի տենդի տեսակները և շրջանները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ‹‹Մարմնի բիոմեխանիկա›› հասկացությունը, նկարագրել պատճառները, որոնք բերում են մեջքի մկանների և ողնաշարի վնասվածքների

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ‹‹Մարմնի բիոմեխանիկա›› հասկացողությունը, 2) ճիշտ է տիրապետում պատճառներին, որոնք բերում են մեջքի մկաների և ողնաշարի վնասվածքների, 3) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ մարմնի բիոմեխանիկան նստած, կանգնած և ծանրություն տեղափոխելիս, 4) ճիշտ է իրականացնում պացենտի տեղափոխումը մահճակալից աթոռին և հակառակը, մահճակալից պատգարակին և հակառակը, 5) ճիշտ է իրականացնում հիվանդի տեղաշարժումը անկողնում (կողքի վրա, փորի վրա, Սիմսի դիրք, Ֆաուլերի դիրք, մահճակալի եզրին և դեպի գլխամաս):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է մարմնի բիոմեխանիկան նստած, կանգնած և ծանրություն տեղափոխելիս, պացիենտի տեղափոխումը մահճակալից աթոռին և հակառակը, մահճակալից պատգարակին և հակառակը, հիվանդի տեղաշարժումը անկողնում (կողքի վրա, փորի վրա, Սիմսի դիրք, Ֆաուլերի դիրք, մահճակալի եզրին և դեպի գլխամաս): Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ <<Մարմնի բիոմեխանիկա>> հասկացությունը, մեջքի մկաների և ողնաշարի վնասվածքների պատճառները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, բաժանողական նյութեր, պաստառներ, պատկերազարդ ատլասներ, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել բուժհաստատություններում թունավոր և վնասակար գործոնների ազդեցությունը քույրական անձնակազմի առողջության վրա, իրականացնել դրանց կանխարգելումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացանում բոլոր թունավոր և վնասակար գործոնները, որոնք ազդում են քույրական անձնակազմի առողջության վրա (դեղեր, մաքրող և լվացող և ախտահանող միջոցներ. անզգայացնող գազեր, ճառագայթում, վարակ),

	2) ճիշտ է իրկայացնում թունավոր և վնասակար գործոններից խուսափելու միջոցները, պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու քույրական անձնակազմի առողջության վրա թունավոր և վնասակար գործոնների (դեղամիջոց, մաքրող և լվացող և ախտահանող միջոցներ. անզգայացնող գազեր, ճառագայթում, վարակ), դրանց կանխարգելման վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ բուժքրոջ առողջության վրա թունավոր և վնասակար գործոնների ազդեցությունը, դրանց կանխարգելումը, ▪ ճառագայթման և անզգայացնող գազերի անբարենպաստ ազդեցությունը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, բաժանողական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել պացիենտի ընդունումը բուժկանխարգելիչ հիմնարկություն, ընդունարանի աշխատանքի սկզբունքները, կառուցվածքը և բուժքրոջ գործառույթները, ներկայացնել բուժհաստատության բուժպահպանողական ռեժիմը և տիպերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում և իրականացնում պացիենտի ընդունումը և գրանցումը, 2) ճիշտ է ներկայացնում ընդունարանի բուժքրոջ աշխատանքի սկզբունքները, ընդունարանի կառուցվածքը, ֆունկցիաները և սանիտարահիգիենիկ ռեժիմը, 3) ճիշտ է տիրապետում քույրական անձնակազմի գործունեությանը ստացիոնարի ընդունարանում (մաշկի, լորձաթաղանթի, մազածածկ հատվածների զննում, ջերմաչափում, սան մշակում), 4) ճիշտ է իրականացնում պացիենտի տեղափոխումը բաժանմունք (պատգարակ, սայլաթոռ, ձեռքի վրա, ոտքով), 5) ճիշտ է ներկայացնում բուժհաստատության բուժպահպանողական ռեժիմը,

	6) ճիշտ է ներկայացնում բուժհաստատությունները և նրանց աշխատանքի սկզբունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի միջոցով: Ուսանողը ցուցադրելու է ընդունարանում բուժքրոջ աշխատանքի և գործառույթների, պացիենտի մասնակի կամ լրիվ սանմշակման, ոջլոտության հայտնաբերման և առաջնային մշակման, բաժանմունք տեղափոխման վերաբերյալ ձեռք բերած ունակությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ պացիենտին ստացիոնար ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, ▪ պացիենտի մասնակի կամ լրիվ սանմշակումը, ▪ պացիենտի տեղափոխումը բուժական բաժանմունք, ▪ ոջլոտության հայտնաբերում և առաջնային մշակում, ▪ բուժկանխարգելիչ հաստատությունների տիպերը և բուժպահպանողական ռեժիմը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մշակված հարցաշարեր, պաստառներ բաժանողական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Բացատրել ծանր հիվանդների խնամքը, անձնական հիգիենան, սնուցումը, սպիտակեղենի փոխումը, սահմանել ‹‹Անկողնային կոմֆորտ›› հասկացողությունը, ներկայացնել պառկելահարուկների սահմանումը և կանխարգելումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է իրականացնում ծանր հիվանդի անձնական հիգիենան՝ մաշկի, մազերի, գլխի, եղունգների, ձեռքերի, ոտքերի, բերանի խոռոչի, քթի, ականջների, աչքերի, շեքի խնամքը, պացիենտի սափրումը, 2) ճիշտ է իրականացնում պացիենտի մասնակի և լրիվ սանիտարական մշակումը, անձնական և անկողնու սպիտակեղենի փոխումը, 3) ճիշտ է ներկայացնում պառկելահարուկների սահմանումը, նպաստող գործոնները, զարգացման շրջանները, առաջացման տեղերը,

	4) ճիշտ է իրականացնում պառկելահարուկների ռիսկի գնահատումն ըստ Նորտոնի սանդղակի, 5) ճիշտ է իրականացնում պառկելահարուկների կանխարգելում և բուժում, 6) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը պառկելահարուկների ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է ծանր հիվանդի մասնակի և լրիվ սանիտարական մշակման, անձնական հիգիենայի՝ մաշկի, մազերի, գլխի, եղունգների, ձեռքերի, ոտքերի, բերանի խոռոչի, քթի, ականջների, աչքերի շեքի խնամքի, պացիենտի սափրման, անձնական և անկողնու սպիտակեղենի փոխման, ըստ Նորտոնի սանդղակի պառկելահարուկների ռիսկի գնահատման վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ <<Անկողնային կոմֆորտ>> հասկացողությունը, ▪ անձնական և անկողնու սպիտակեղենի փոխումը, ▪ ծանր հիվանդի անձնական հիգիենան, ▪ պառկելահարուկների սահմանումը, նպաստող գործոնները, զարգացման շրջանները, առաջացման տեղերը, ▪ պառկելահարուկների կանխարգելման միջոցները և բուժման սկզբունքները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մշակված հարցաշարեր, պաստառներ, ստենդ, բաժանողական նյութեր, պատկերազարդ ատլասներ, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել պացիենտի ֆունկցիոնալ վիճակի գնահատումը՝ պուլս, զարկերակային ճնշում, շնչառության և ջերմության չափումը, ներկայացնել տենդի տեսակները և շրջանները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է իրականացնում պացիենտի պուլսի և շնչառության հաշվում, զարկերակային ճնշման և ջերմության չափում,

	2) ճիշտ է ներկայացնում տենդի տեսակները և շրջանները, 3) ճիշտ է իրականացնում տենդող հիվանդի խնամքն ըստ շրջանների, 4) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը տենդի ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է զարկերակային ճնշման, ջերմաչափման, պուլսի և շնչառության որոշման, ջերմության թերթիկում նրանց գրանցման, ջերմող հիվանդի խնամքի վերաբերյալ ձեռք բերած ունակությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. • ջերմակարգավորման մեխանիզմները, մարմնի ջերմաստիճանի կախվածությունը տարբեր գործոններից, ▪ Զ/ճ ցուցանիշները նորմայում, չափումը և գրանցումը ջերմության թերթիկում, ▪ պուլսի հետազոտման տեղերը, հաշվումը և գրանցումը ջերմության թերթիկում, ▪ շնչառության տիպերը, հաշվումը և գրանցումը ջերմության թերթիկում, ▪ տենդի տեսակները, շրջանները, տենդող հիվանդի խնամքը, մարմնի ջերմաստիճանի չափումը և գրանցումը ջերմության թերթիկում, ▪ Օգտագործված պարագաների ախտահանման մեթոդները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մշակված հարցաշարեր, պաստառներ, ստենդ, բաժանողական նյութեր, պատկերազարդ ատլասներ, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 18 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ՝ ԴԵՂԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՀՈԳՆԱՆԵՐԸ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈՒՂԱԿՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-025
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ, սովորեցնել պարզագույն ֆիզիոթերապևտիկ պրոցեդուրաները,

	դեղորայքների ներմուծման եղանակները, հոգնաների կատարումը, ստոմով հիվանդների խնամքը, զոնդային պրոցեդուրաները, պացիենտներին նախապատրաստելը լաբորատոր և գործիքային քննություններին, ինչպես նաև քույրական գործընթացի կազմակերպումը տարբեր կլինիկական իրավիճակներում:
Մոդուլի տևողությունը	72 ժամ գործնական աշխատանք՝ 72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001, «Դիետոլոգիա և սնուցում» ՄԲԳ-5-13-002 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի ‹‹Պարզագույն ֆիզիոթերապիա›› հասկացությունը, տեսակները, ջրաբուժությունը, թթվածնաբուժությունը, սառի և տաքի ազդեցությունը 2. տիրապետի դեղերի դուրս գրմանը, պահպանմանը և բաժանմանը ստացիոնարում և պոլիկլինիկայում, դեղի օրգանիզմ ներմուծման ուղիներին և եղանակներին 3. ներկայացնի դեղերի պարէնթերալ (ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներերակային) ներմուծման եղանակները 4. ներկայացիլ գազահան խողովակի և տարբեր հոգնաների կատարման տեխնիկան, դրանց ցուցումները և հակացուցումները, միզապարկի կաթետերիզացիայի կատարումը, բարդությունների կանխարգելումը 5. տիրապետի ‹‹Ստոմ›› հասկացությանը, տեսակներին, իրականացնել խնամք ստոմով պացիենտի նկատմամբ, նախապատրաստի պացիենտներին լաբորատոր և գործիքային հետազոտություններին, ներկայացնի ստամոքսի զոնդավորման պրոցեդուրաները, կանխել բարդությունները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ‹‹Պարզագույն ֆիզիոթերապիա›› հասկացությունը, տեսակները, ջրաբուժությունը, թթվածնաբուժությունը, սառի և տաքի ազդեցությունը

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ‹‹Պարզագույն ֆիզիոթերապիա›› հասկացությունը, տեսակները, 2) ճիշտ է իրականացնում տաք և սառը թրջոցների, ջեռակի, սառցեպարկի, կոմպրեսների կիրառումը, 3) ճիշտ է իրականացնում թթվածնաբուժություն թթվածնային կաթետերով, կանյուլայով, դիմակով և բարձով, 4) ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնները թթվածնի հետ աշխատելիս, 5) ճիշտ է իրականացնում ջրաբուժություն տարբեր պացիենտների համար:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է սառը թրջոցի, տաք և տաքացնող կոմպրեսների, ջեռակ և սառցե պարկ դնելու, թթվածնաբուժության վերաբերյալ ձեռք բերած ունակությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. • <<Պարզագույն ֆիզիոթերապիա>> հասկացողությունը, տեսակները, ազդեցության մեխանիզմը, ցուցումները, հակացուցումները, հնարավոր բարդությունները, ▪ ջրաբուժության տարբեր պրոցեդուրաները, ▪ տաք և սառը թրջոցների, ջեռակի, սառցեպարկի, կոմպրեսների կիրառումը, ▪ թթվածնաբուժություն՝ թթվածնային կաթետերով, կանյուլայով, դիմակով և բարձով: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մշակված հարցաշարեր, պաստառներ, ստենդ, պատկերազարդ ատլասներ,բաժանողական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Տիրապետել դեղերի դուրս գրմանը, պահպանմանը և բաժանմանը ստացիոնարում և պոլիկլինիկայում, դեղի օրգանիզմ ներմուծման ուղիներին և եղանակներին
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում և իրականացնում դեղերի դուրս գրում, պահպանում և բաժանում, 2) ճիշտ է սահմանում դեղերի օրգանիզմ ներմուծման ուղիները և եղանակները՝ արտաքին եղանակ (մաշկ, լորձաթաղանթ, աչք, ականջ, քիթ), Էնթերալ եղանակ-բերանով (per os) լեզվի տակ sublingra) ուղիղ աղիքով (per

	rectum) և պարէնթերալ՝ հարաղիքային եղանակ (ներարկումներ), 3) ճիշտ է իրականացնում դեղի ներմուծման արտաքին և էնթերալ (ներքին) եղանակները, 4) ճիշտ է ներկայացնում դեղի էնթերալ եղանակի առավելությունները և թերությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը: Թեստերում ընդգրկված են լինելու դեղամիջոցների դուրս գրման և ստացման կանոնների, պահպանման կարգի, բաժանման եղանակների, օրգանիզմ ներմուծման ուղիների, էնթերալ ներմուծման եղանակի առավելությունների և թերությունների վերաբերյալ հարցեր: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ դեղերի դուրս գրումը, պահպանումը և բաժանումը, ▪ դեղերի ներմուծման արտաքին (մաշկ, լորձաթաղանթ, աչք, ականջ, քիթ) և Էնթերալ եղանակները-բերանով (per os) լեզվի տակ sublingva) ուղիղ աղիքով (per rectum) ▪ պացիենտի ուսուցումը դեղամիջոցի հիմնական և հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին, նրա փոխազդեցությունը սննդի հետ ▪ դեղերի հետ աշխատելու կանոնների պահպանումը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է 80% ճշգրտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մշակված հարցաշարեր, պաստառներ, ստենդ,մուլյաժներ, պատկերազարդ ատլասներ, բաժանողական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել դեղերի պարէնթերալ (ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներերակային) ներմուծման եղանակները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ներարկիչների և ասեղների տեսակները, 2) ճիշտ է իրականացնում դեղերի նոսրացումը, դեղանյութի հավաքումը ամպուլայից և սրվակից,

	3) ճիշտ է իրականացնում ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներերակային շիթային և կաթիլային ներարկումներ, պերֆերիկ երակների կաթետերիզացիա և երակից արյան բացթողում, 4) ճիշտ է պահպանում ասեպտիկայի կանոնները ներարկումներ կատարելիս, 5) ճիշտ է ներկայացնում ներարկումներից առաջացած բարդությունները և իրականացնում դրանց կանխարգելում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է դեղերի նոսրացումը և լուծումը, հավաքումը ամպուլայից և սրվակից, հակաբիոտիկների նոսրացումը, դեղամիջոցների պարէնթերալ (ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներերակային՝ շիթային և կաթիլային) ներմուծման եղանակների կատարման տեխնիկան : Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. • ներարկիչների և ասեղների տեսակները, ▪ դեղերի նոսրացումը և լուծումը, հավաքումը ամպուլայից և սրվակից, ▪ ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներերակային շիթային և կաթիլային ներարկումներ, պերիֆերիկ երակների կաթետերիզացիա, երակից արյան բաց թողում, ▪ ասեպտիկայի կանոնների պահպանումը ներարկումներ կատարելիս, ▪ ներարկումներից առաջացած բարդությունների կանխարգելում, առաջին օգնության ցուցաբերում: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մշակված հարցաշարեր, պաստառներ, ստենդ, բաժանողական նյութեր, մուլյաժներ,պատկերազարդ ատլասներ, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 24 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել գազահան խողովակի և տարբեր հոգնաների կատարման տեխնիկան, դրանց ցուցումները և հակացուցումները, միզապարկի կաթետերիզացիայի կատարումը, բարդությունների կանխարգելումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հոգնայի սահմանումը և տեսակները, /մաքրող, յուղային, հիպերտոնիկ, սիֆոնային, դեղորայքային, սնուցող,

	2) ճիշտ է տիրապետում գազահան խողովակի դրման և հոգնաների կատարման տեխնիկային, 3) ճիշտ է ներկայացնում հոգնաների ցուցումները, հակացուցումները հնարավոր բարդությունները և իրականացնում դրանց կանխարգելում, 4) ճիշտ է ներկայացնում միզապարկի կաթետերիզացիաի ցուցումները, ընթացքը, կաթետրների տեսակները, 5) ճիշտ է իրականացնում կաթետրի անցկացման գործողությունը տղամարդկանց և կանաց մոտ, պացիենտի խնամքը մշտական կաթետրի ժամանակ, բարդությունների կանխարգելումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է գազահան խողովակի տեղադրման և տարբեր հոգնաների, միզապարկի կաթետերիզացիայի կատարման տեխնիկան: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ հոգնաների, գազահան խողովակի կիրառման, միզապարկի կաթետերիզացիայի կատարման նպատակը, ցուցումները և հակացուցումները, առաջացող հնարավոր բարդությունների կանխարգելումը, ▪ անմիզապահությունով տառապող պացիետների խնամքը, ▪ փափուկ միանվագ և Ֆոլեի մշտական կաթետերով միզապարկի կաթետերիզացիա: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մշակված հարցաշարեր,մուլյաժներ, պաստառներ, բաժանողական նյութեր, պատկերազարդ ատլասներ, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Տիրապետել ‹‹Ստոմ›› հասկացությանը, տեսակներին, իրականացնել խնամք ստոմով պացիենտի նկատմամբ, նախապատրաստել պացիենտներին լաբորատոր և գործիքային հետազոտություններին, ներկայացնել ստամոքսի զոնդավորման պրոցեդուրաները, կանխել բարդությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ‹‹Ստոմ›› հասկացությանը, տեսակները, ցուցումները, 2) ճիշտ է իրականացնում ստոմով հիվանդների խնամք, 3) ճիշտ է նախապատրաստում հիվանդին լաբորատոր և գործիքային հետազոտություններ անցկացնելիս,

	4) ճիշտ է իրականացնում ստամոքսի զոնդավորում՝ լվացման և լաբորատոր հետազոտության նպատակով:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է ստոմով հիվանդների խնամքը, պացիենտին գործիքային և լաբորատոր հետազոտություններին նախապատրաստելու խորհրդատվությունը, ստամոքսի լվացման և զոնդավորման, 12 մատնյա աղու զոնդավորման տեխնիկան, առաջին մինչբժշկական օգնությունը ստամոքս- աղիքային տրակտի արյունահոսությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. • <<Ստոմ>> հասկացությունը, տեսակները, ցուցումները, լաբորատոր և գործիքային հետազոտությունների նպատակները, ցուցումները, դիզուրիաների և դեֆեկացիայի տեսակները, ստամոքսի լվացման, զոնդավորման ցուցումները, հակացուցումները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ,մուլյաժ, մշակված հարցաշարեր, պաստառներ, բաժանողական նյութեր, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 18 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ՝ ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ, ՀԵՆԴԵՐՍՈՆԻ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-026
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ, սովորեցնել կատարել սիրտ-թոքային վերակենդանացում, մահացող հիվանդի խնամք, ինչպես նաև քույրական գործընթացի իրականացում հինգ փուլերով յուրաքանչյուր խանգարված պահանջի ժամանակ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ

Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Պացիենտի կրթում» ՄԲԳ-5-13-001, «Դիետոլոգիա և սնուցում» ՄԲԳ-5-13-002 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի սիրտ-թոքային վերակենդանացումը, կլինիկական մահվան նշանները, տուժածին հայտնաբերման դեպքում գործողությունների հաջորդականությունը և առանձնահատկությունները 2. տիրապետի կորուատ, վիշտ, մահ սահմանմանը, ներկայացնի ամոքիչ բուժման սկզբունքները, իրականցնի մահացող հիվանդի պոլիատիվ խնամքը և դիակի հետ վարվելու կարգը 3. ներկայացնի Հենդերսոնի մոդելի կիրառումը, պահանջների դասակարգումը և դրանց բավարարմանն ուղղված միջոցառումները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել սիրտ-թոքային վերակենդանացումը, կլինիկական մահվան նշանները, տուժածին հայտնաբերման դեպքում գործողությունների հաջորդականությունը և առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է իրականացնում առանց կյանքի նշանների տուժածի նկատմամբ գործողությունների կարգը, 2) ճիշտ է իրականացնում սիրտ-թոքային վերակենդանացման հմտությունները (1 փրկարար) (2 փրկարար), 3) ճիշտ է իրականացնում հասուն տարիքի մարդու, մինչև 8 տարեկան երեխայի և նորածնի սիրտ թոքային վերակենդանացումը, 4) ճիշտ է իրականացնում շնչուղիների ազատումը օտար մարմնից՝ տուժածը գիտակից է, անգիտակից է, տուժածը հղի և գեր կին է, 5) ճիշտ է ներկայացնում կլինիկական մահվան նշանները (պուլսի և շնչառության բացակայություն, բբային ռեֆլեքսի բացակայություն):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է սիրտ-թոքային վերակենդանացում 1 և 2 փրկարարների միջոցով, մինչև 8 տարեկան երեխայի և նորածնի սիրտ-

	թոքային վերակենդանացումը, շնչուղիների ազատումը օտար մարմնից, երբ տուժածը գիտակից է, անգիտակից է, տուժածը հղի կին է և տուժածը գեր է: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ Սիրտ-թոքային վերակենդանացում CAB փուլերով, ▪ Կլինիկական մահվան նշանների բացահայտումը / պուլսի և շնչառության բացակայություն, բբային ռեֆլեքսի բացակայություն/: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մուլյաժ, մշակված հարցաշարեր, պաստառներ, բաժանողական նյութեր, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Տիրապետել կորուստ, վիշտ, մահ սահմանմանը, ներկայացնել ամոքիչ բուժման սկզբունքները, իրականցնել մահացող հիվանդի պոլիատիվ խնամքը և դիակի հետ վարվելու կարգը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կորուստ, վիշտ, մահ սահմանումը, կորստի հետ կապված ապրումների հինգ շրջանները, 2) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ դերը մահվան դատապարտված մարդու պահանջների բավարարման հարցում՝ իրականացնելով պոլիատիվ խնամք, 3) ճիշտ է տիրապետում և ցուցաբերում աջակցություն մահացող մարդու ընտանիքին և հարազատներին, 4) ճիշտ է ներկայացնում հոսպիսի աշխատանքային սկզբունքները, 5) ճիշտ է ներկայացնում դիակի հետ վարվելու կարգը և փասթաթղթերի լրացումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է դերային խաղերի միջոցով: Ուսանողը ցուցադրելու է մահամերձ հիվանդի խնամքը, հոգեբանական աջակցությունը հարազատներին, դիակի հետ վարվելու կարգը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. ▪ կորուստ, վիշտ, մահ սահմանումը, կորստի հետ կապված ապրումների հինգ շրջանները, ▪ պալիատիվ խնամք, հոսպիսի աշխատանքային սկզբունքները:

	Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մուլյաժ, մշակված հարցաշարեր, բաժանողական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել Հենդերսոնի մոդելի կիրառումը, պահանջների դասակարգումը և դրանց բավարարմանն ուղղված միջոցառումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մարդու պահանջների դասակարգումն ըստ Հենդերսոնի, 2) ճիշտ է տիրապետում քույրական խնամքի ցուցաբերման հմտություններին, 3) ճիշտ է ներկայացնում քույրական գործընթացի հինգ հաջորդական փուլերը, յուրաքանչյուր փուլի կարևորությունը, 4) ճիշտ է իրականացնում պացիենտի կարևորագույն պահանջների(նորմալ շնչելու, սնվելու, խմելու, արտաթորման, շարժման, հանվել հագնվելու, ջերմաստիճանի պահպանման, անձնական հիգիենայի, քնի, անվտանգության, շփման և աշխատանքի) անբավարարության ժամանակ քույրական գործընթացը, 5) ճիշտ է ներկայացնում ցավի տեսակները, ցավազգացողությունը, իրականացնում է ցավի ինտենսիվության գնահատում՝ ելնելով գնահատման սանդղակներից, 6) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը ցավ ունեցող պացիենտների նկատմամբ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողը վեր է հանելու պացիենտի խանգարված պահանջները, դնելու է քույրական ախտորոշում և ըստ քույրական պլանի կատարելու է քույրական գործընթացի իրականացում տարբեր պահանջների խանգարման ժամանակ, գնահատելու է ցավի ինտենսիվությունը ըստ սանդղակի, ցուցաբերելու է օգնություն ցավի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝ ▪ Պացիենտի պահանջների բավարարման գնահատում տարբեր պահանջների խանգարման ժամանակ, քույրական ախտորոշում ▪ Պացիենտի պրոբլեմները, քույրական խնամք պլանավորումը, նպատակների ձևակերպումը,

	միջամտությունների ծավալը և տևողությունը, վերջնական արդյունքների գնահատումը տարբեր պահանջների խանգարման ժամանակ ▪ Քույրական գործընթացը ցավի ժամանակ, ցավը թեթևացնող միջոցառումների կատարում: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը տրված իրավիճակում ճիշտ է կողմնորոշվում և առաջա-դրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, մուլյաժ, մշակված հարցաշարեր, պաստառներ,ցավի ինտենսիվության սանդղակներ, քույրական խնամքի պլան, բաժանողական նյութեր, կինոֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 24 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ՝ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԼԵՐԳՈՋՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-027
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ»

	ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Ընդհանուր հոգեբանություն» ՄԲԳ-5-13-018, «Բժշկական հոգեբանություն» ՄԲԳ-5-13-019 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. տիրապետի ‹‹Թերապիայի›› զարգացման պատմությանը, հիվանդների հետազոտման եղանակներին, շնչառական օրգանների հիվանդություններին, նրանց առաջացման պատճառներին, կլինիկային, ախտորոշման մեթոդներին, բարդություններին, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքներին 2. ներկայացնի սուր ալերգոզները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Տիրապետել ‹‹Թերապիայի›› զարգացման պատմությանը, հիվանդների հետազոտման եղանակներին, շնչառական օրգանների հիվանդություններին, նրանց առաջացման պատճառներին, կլինիկային, ախտորոշման մեթոդներին, բարդություններին, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքներին
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում թերապիայի նշանակությունը մանկաբարձական պրակտիկայում, 2) ճիշտ է հավաքում տեղեկատվություն շնչական համակարգի հիվանդություններով պացիենտներից, 3) ճիշտ է նախապատրաստում լաբորատոր և գործիքային քննություններին (սպիրոգրաֆիա, պիկֆլյուոմետրիա, ռենտգեն հետազոտություն, բրոնխոսկոպիա, արյան, մեզի, խորխի հետազոտություն), 4) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը բրոնխիտների, թոքաբորբերի, բրոնխիալ ասթմայի, պլևրիտների, տուբերկուլյոզի ժամանակ, 5) ճիշտ է կատարում խնամքի մանիպուլյացիաները, 6) ճիշտ է ուսուցանում պացիենտին և ընտանիքի անդամներին խնամքի և ինքնախնամքի տարրերը, 7) ճիշտ է ուսուցանում դեղորայքի ընդունման առանձնահատկությունները, 8) ճիշտ է իրականացնում անհետաձգելի մինչբժշկական օգնությունը բրոնխիալ ասթմայի և թոքի արյունահոսության ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների

	կատարման միջոցով: Ուսանողին կտրվեն թեստային առաջադրանքներ հիվանդ, հիվանդություն, էթիոլոգիա, պաթոգենեզ, ախտանիշ, ախտանշակոմպլեքս, հիվանդության ընթացք, ախտորոշում հասկացությունների, պացիենտի սուբյեկտիվ և օբյեկտիվ հետազոտությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը շնչառա -կան օրգանների հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. ▪ հիվանդ, հիվանդություն հասկացությունը, ▪ էթիոլոգիա, պաթոգենեզ հասկացությունը, ▪ ախտանիշ, համախտանիշ հասկացությունը, ▪ ախտորոշում, բուժում, կանխարգելում հասկացությունը, ▪ բրոնխիտ, թոքաբորբ, բրոնխային ասթմա, պլևրիտ, թոքի տուբերկուլոզ, ▪ շնչառական համակարգի հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, կանխարգելիչ աշխատանքները , ▪ հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ, թոքի մուլյաժ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական աշխատանք՝ 30 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել սուր ալերգոզները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ալերգիկ ռեակցիաների առաջացման մեխանիզմը, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը դեղորայքային հիվանդության, եղնջացանի, Քվինկեի այտուցի, անաֆիլակտիկ շոկի ժամանակ, 3) ճիշտ է կատարում խնամքի մանիպուլյացիաները, 4) ճիշտ է իրականացնում անհետաձգելի մինչբժշկական օգնություն Քվինկեի այտուցի, անաֆիլակտիկ շոկի ժամանակ, 5) ճիշտ է ուսուցանում սննդակարգի առանձնահատկությունները, 6) ճիշտ է ուսուցանում դեղորայքի ընդունման կարգը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը սուր ալերգոզների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. ▪ անաֆիլակտիկ շոկը, Կվինկեի այտուցը, եղնջացանը հղիների մոտ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել շաքարային դիաբետով հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ՝ ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ԵՎ ՈՍԿՐԱՀՈԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-028
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին

	հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, հղության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Ընդհանուր հոգեբանություն» ՄԲԳ-5-13-018, «Բժշկական հոգեբանություն» ՄԲԳ-5-13-019 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները, 2. ներկայացնի ոսկրահոդային համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) ճիշտ է նախապատրաստում պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (էլեկտրասրտագրություն, ռենտգեն հետազոտություն, արյան, մեզի հետազոտություններ),

	3) ճիշտ է իրականացնում զարկերակային ճնշման չափումը, պուլսի և շնչառության որոշումը, 4) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը ռևմատիզմի, սրտի արատների, զարկերակային հիպերտենզիայի, սրտի իշեմիկ հիվանդության, աթերոսկլերոզի, ստենոկարդիայի, միոկարդի ինֆարկտի, սուր սրտային և անոթային անբավարարության ժամանակ, 5) ճիշտ է կատարում բուժքրոջ անկախ և կախյալ գործողությունները, 6) ճիշտ է ուսուցանում պացիենտին և ընտանիքի անդամներին խնամքի և ինքնախնամքի տարրերը, 7) ճիշտ է ուսուցանում դեղորայքի ընդունման առանձնահատկությունները, 8) ճիշտ է ուսուցանում սննդակարգի առանձնահատկությունները, 9) ճիշտ է իրականացնում անհետաձգելի մինչբժշկական օգնությունը հիպերտոնիկ կրիզի, սրտային ասթմայի, ստենոկարդիայի, միոկարդի ինֆարկտի, ուշագնացության, կոլապսի և շոկի ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. ▪ ռևմատիզմ, սրտի արատներ, զարկերակային հիպերտենզիա, աթերոսկլերոզ, սուր անոթային անբավարարություն, ստենոկարդիա, սրտամկանի ինֆարկտ, սուր սրտային անբավարություն, ▪ սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, կանխարգելիչ աշխատանքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 8 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 30 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ոսկրահոդային համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ոսկրահոդային համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) ճիշտ է նախապատրաստում պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (ռենտգեն հետազոտություն, արյան, մեզի հետազոտություններ), 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը ռևմատոիդ պոլիարթրիտի, պարբերական հիվանդության ժամանակ, 4) ճիշտ է կատարում խնամքի մանիպուլյացիաները, 5) ճիշտ է ուսուցանում դեղորայքի ընդունման առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ոսկրահո -դային համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. ▪ ռևմատոիդ պոլիարթրիտ, պարբերական հիվանդություն, ▪ ռևմատոիդ պոլիարթրիտով և պարբերական հիվանդությամբ տառապող հղիների և ծննդկանների խնամքը, կանխարգելիչ աշխատանքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել հիվանդների ցուցադրում

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ՝ ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-029
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, իմանալ հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Ընդհանուր հոգեբանություն» ՄԲԳ-5-13-018, «Բժշկական հոգեբանություն» ՄԲԳ-5-13-019 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի մարսողական համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները, 2. ներկայացնի արյան հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարսողական համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մարսողական հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) ճիշտ է նախապատրաստում պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (ռենտգեն հետազոտություն, ստամոքսի զոնդավորում, արյան, մեզի, կղանքի, լեղու հետազոտություններ), 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը գաստրիտների, խոցային հիվանդության, էնտերիտների, կոլիտների, լեղուղիների հիվանդությունների, քրոնիկական հեպատիտների ժամանակ, 4) ճիշտ է կատարում բուժքրոջ անկախ և կախյալ գործողությունները, 5) ճիշտ է ուսուցանում պացիենտին և ընտանիքի անդամներին խնամքի և ինքնախնամքի տարրերը, 6) ճիշտ է ուսուցանում դեղորայքի ընդունման առանձնահատկությունները, 7) ճիշտ է ուսուցանում սննդակարգի առանձնահատկությունները, 8) ճիշտ է իրականացնում անհետաձգելի մինչբժշկական օգնությունը ստամոքսի արյունահոսության, լեղաքարային խիթի ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը մարսողական համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. ▪ գաստրիտ, խոցային հիվանդություն, քրոնիկական հեպատիտ, քրոնիկական խոլեցիստիտ, լեղաքարային հիվանդություն, քրոնիկական կոլիտ, քրոնիկական էնտերիտ, դիսբակտերիոզ, ▪ մարսողական համակարգի հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, կանխարգելիչ աշխատանքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, տեսաֆիլմեր, պատկերազարդ ատլասներ, պաստառներ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել արյան հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում արյան հիվանդություններով տառապող պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) ճիշտ է նախապատրաստում պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին, 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը անեմիաների, լեյկոզների ժամանակ, 4) ճիշտ է կատարում խնամքի մանիպուլյացիաները, 5) ճիշտ է ուսուցանում դեղի ընդունման կանոնները, 6) ճիշտ է խնամում լեյկոզով հիվանդ պացիենտներին:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը արյունա -ստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. ▪ սակավարյունություն, լեյկոզ, ▪ արյունաստեղծ համակարգի հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, կանխարգելիչ աշխատանքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ,

	գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ՝ ՆԵՐՋԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՋԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-030
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Ընդհանուր հոգեբանություն» ՄԲԳ-5-13-018, «Բժշկական հոգեբանություն» ՄԲԳ-5-13-019 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի արտազատական համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները, 2. ներկայացնի ներզատական համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել արտազատական համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում արտազատական համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) ճիշտ է նախապատրաստում պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին, 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը գլոմերուլոնեֆրիտների, պիելոնեֆրիտների, երկամաքարային հիվանդության ժամանակ, 4) ճիշտ է ուսուցանում դեղի ընդունման կանոնները, 5) ճիշտ է ուսուցանում սննդակարգի առանձնահատկությունները, 6) ճիշտ է կատարում խնամքի մանիպուլյացիաները, 7) ճիշտ է իրականացնում անհետաձգելի մինչբժշկական օգնությունը երիկամային խիթի ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը արտազատական համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. • գլոմերուլոնեֆրիտ, պիելոնեֆրիտ,երիկամաքարային հիվանդություն, • արտազատական համակարգի հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, կանխարգելիչ աշխատանքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ:

	Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ներզատական համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էնդոկրին համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) ճիշտ է նախապատրաստում պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (գլյուկոմետրիա, մեզում շաքարի որոշում, T_3 T_4, ՏՏԳ- որոշում), 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը հիպոֆիզի հիվանդությունների, դիֆուզ տոքսիկ խպիպի, հիպոթիրեոզի, էնդեմիկ խպիպի, շաքարային դիաբետի ժամանակ, 4) ճիշտ է ուսուցանում սննդակարգի առանձնահատկությունները, 5) ճիշտ է ուսուցանում դեղի ընդունման առանձնահատկությունները հղիության ժամանակ, 6) ճիշտ է կատարում խնամքի մանիպուլյացիաները, 7) ճիշտ է իրականացնում առաջին մինչբժշկական օգնությունը կոմաների ժամանակ, 8) ճիշտ է ուսուցանում պացիենտին ճարպակալման կանխարգելմանը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ներզա -տական համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ. ▪ շաքարային դիաբետ, թիրեոտոքսիկոզ, հիպոթիրեոզ, էնդեմիկ խպիպ, ճարպակալում, ▪ արտազատական համակարգի հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, կանխարգելիչ աշխատանքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է

	ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել ստացիոնարում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՆԵՈՆԱՏԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ, ՎԱՂ ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ»

Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-031
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) անկաբուժության պատմությունը, երեխաների բուժկանխարգելիչ օգնության կազմակերպման հիմնական սկզբունքները: Նեոնատալ ծառայության կազմակերպումը և պտղի անտենատալ պահպանումը, քույրական գործընթացը նեոնատալոգիայում, նորածնային բաժանմունքի ինֆեկցիոն անվտանգությունը, սանիտարահամաճարակային ռեժիմի առանձնահատկությունները, անհետաձգելի իրավիճակները նորածինների մոտ, նորածնային շրջանի հիմնական հիվանդությունները, 2) սնուցման սուր և խրոնիկ խանգարումների զարգացման պատճառները, կլինիական ձևերը, դիետայի կազմակերպման հիմունքները, բուժման սկզբունքները և սխեմաները, 3) ռախիտի, սպազմոֆիլիայի, էքսուդատիվ կատառալ դիաթեզի ժամանակակից բնորոշումը, պատճառները, նպաստող գործոնները, կլինիկական արտահայտությունները, բուժման, խնամքի և կանխարգելման սկզբունքները, 4) շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկական նշանները, բարդությունները, ախտորոշումը, բուժման

	սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 32 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Մարդու կենսագործունեության փուլերը» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի երեխաների բժշկական օգնության կազմակերպումը, 2. կազմակերպի հիվանդ երեխաների խնամքը նորածնային շրջանի և կրծքի հասակի երեխաների հիվանդությունների ժամանակ, 3. բացատրի սնուցման սուր և քրոնիկ խանգարումների զարգացման պատճառները, կլինիական ձևերը, դիետայի կազմակերպման հիմունքները, բուժման սկզբունքները և սխեմաները, 4. ներկայացնի ռախիտի, սպազմոֆիլիայի, էքսուդատիվ կատառալ դիաթեզի ժամանակակից բնորոշումը, պատճառները, նպաստող գործոնները, կլինիկական արտահայտությունները, բուժման, խնամքի և կանխարգելման սկզբունքները, 5. ներկայացնի շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկական նշանները, բարդությունները, ախտորոշումը, բուժման սկզբունքները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել երեխաների բժշկական օգնության կազմակերպումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում քույրական գործընթացի փուլերի առանձնահատկությունները մանկաբուժությունում, 2) իշտ է սահմանում անհաս նորածին հասկացությունը, անհասության պատճառները և նշանները,

	3) ճիշտ է տեսակավորում առողջական խմբերը, ներկայացնում 0-1 և 1-ից բարձր երեխաների տեղամասում վարման և հսկման սկզբունքները, 4) ճիշտ է կազմակերպում անհասի տաքացումը և կերակրումը, անթրոպոմետրիան, կատարում անհրաժեշտ սննդի քանակության հաշվարկ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ցուցադրում է անհաս նորածնի կերկրման եղանակները, տաքացման մեթոդները, կատարում է անհրաժեշտ սննդի քանակի հաշվարկ, կարողանում է խմբավորել երեխաներին՝ ըստ առողջական խմբերի: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ քույրական գործընթացի փուլերի առանձնահատկությունները մանկաբարձությունում, ▪ անհաս նորածին, անհասության պատճառները և նշանները, ▪ երեխաների առողջական խմբերը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե գործնական առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումն իրականացվում էտեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման ալգորիթմներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ, անհրաժեշտ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Կազմակերպել հիվանդ երեխաների խնամքը նորածնային շրջանի և կրծքի հասակի երեխաների հիվանդությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում նորածնային ասֆիքսիայի պատճառները, աստիճանները, վերակենդանացման միջոցառումները, իրականացնում ասֆիքսիայով ծնված նորածնի խնամքը, կատարում նորածնի շնչուղիների անցանելիության վերականգնում, նորածնի արհեստական շնչառություն, կազմակերպում ասֆիքսիայի կանխարգելումը, 2) ճիշտ է նակրագրում ծննդաբերական վնասվածքների պատճառները, կլինիկական նշանները, բուժման և

	խնամքի սկզբունքները, ցուցադրում սառցե պարկի կիրառումը, զոնդով կերակրումը, ներերակային, կաթիլային ներարկումը, կազմակերպում ծննդաբերական վնասվածքների կանխարգելումը, 3) ճիշտ է նկարագրում նորածնային հեմոլիտիկ հիվանդության պատճառները, ձևերը, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման, բուժման սկզբունքները, ցուցադրում զոնդով կերակրելը, ներերակային կաթիլային ներարկումը, իրականացնում հիվանդ երեխայի խնամքը, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ, 4) ճիշտ է նկարագրում նորածինների և կրծքի հասակի երեխաների մաշկի և պորտի ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն հիվանդությունները, սեպսիս հիվանդությունը, բացատրում հիվանդությունների առաջացման պատճառները, զարգացման մեխանիզմը, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, իրականացնում քույրական խնամքը, կատարում բուժական լոգանք, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը նորածնա -յին շրջանի և կրծքի հասակի երեխաների հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ նորածնային ասֆիքսիա, ▪ հեմոլիտիկ հիվանդություն, ▪ ծննդաբերական վնասվածքներ, ▪ նորածնային սեպսիս, ▪ մաշկի և պորտի հիվանդություններ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, պաստառներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքն անցկացնել մանկական հիվանդանոցում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Բացատրել սնուցման սուր և քրոնիկ խանգարումների զարգացման պատճառները, կլինիական ձևերը, դիետայի կազմակերպման հիմունքները, բուժման սկզբունքները և սխեմաները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է հավաքում երեխաների մասին տեղեկությունները, իրականացնում քույրական գործընթացը, օռալ ռեհիդրատացիան, ներերակային կաթիլային ներարկումը, սննդաբուժումը, անթրոպոմետրիան, 2) ճիշտ է որոշում ջրազրկման աստիճանը, ցուցաբերում օգնություն փսխման ժամանակ, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը սնուցման սուր և քրոնիկ խանգարումների, դիետայի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ սուր և քրոնիկ խանգարումների առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ▪ ջրազրկման նշանները, ▪ ջրազրկման գնահատումը, ▪ օգնությունը փսխման ժամանակ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմուքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, տեսաֆիլմ, պաստառներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, դերային խաղերի սցենարներ, ցենտիլային աղյուսակներ, հավասարաչափ, կշեռք:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել ռախիտի, սպազմոֆիլիայի, էքսուդատիվ կատառալ դիաթեզի ժամանակակից բնորոշումը, պատճառները, նպաստող գործոնները, կլինիկական արտահայտությունները, բուժման, խնամքի և

	կանխարգելման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայցանում ռախիտի բնորոշումը, պատճառները, նպաստող գործոնները, հիմնական կլինիկական արտահայտությունները, սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ բուժման սկզբունքները, իրականցնում քույրական գործընթացը, կատարում մերսման և մարմնամարզության կոմպլեքսները, կազմակերպում սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ կանխարգելումը, 2) ճիշտ է ներկայացնում սպազմոֆիլիայի պատճառները, կլինիկական արտահայտությունները, կապը ռախիտի հետ, բուժման սկզբունքները, իրականացնում քույրական գործընթացը, ցուցադրում անհետաձգելի օգնությունը լարինգոսպազմի և ցնցումների ժամանակ, ինտուբացիայի և տրախեոստոմիայի կատարման մեթոդիական, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ, 3) ճիշտ է ներկայացնում էքսուդատիվ կատառալ դիաթեզի առաջացման պատճառները, կլինիակական արտահայտությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, իրականցնում քույրական գործընթացը, կազմակերպում խանմքը և սնուցումը, կանխարգելումը, դիսպանսեր հսկողությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ռախիտի, սպազմոֆիլիայի, էքսուդատիվ կատառալ դիաթեզի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները՝ ▪ ռախիտի բնորոշումը, պատճառները, նպաստող գործոնները, կլինիկական արտահայտությունները ▪ սպազմոֆիլիայի պատճառները, կլինիկական արտահայտությունները, կապը ռախիտի հետ ▪ էքսուդատիվ կատառալ դիաթեզի առաջացման պատճառները, կլինիակական արտահայտությունները Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պաստառներ, պատկերազարդ ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկական նշանները, բարդությունները, ախտորոշումը, բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկական նշանները, բարդությունները, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը շնչառական հիվանդությունների ժամանակ, իրականցնում օգնությունը հիպերթերմիայի, կեղծ կրուպի, բրոնխիալ ասթմայի նոպայի ժամանակ, կազմակերպում մեկուսացման միջոցառումներ սուր շնչառական ինֆեկցիաների ժամանակ, 3) ճիշտ է կազմակերպում շնչառական հիվանդությունների բարդությունների կանխարգելումը և դիսպանսեր հսկողությունը, կատարում հակաբիոտիկները հաշվարկում և ներարկում, շնչառության հաճախականության որոշում և գրանցում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը շնչառա -կան համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ▪ շնչառական համակարգի հիվանդությունների (սուր շնչառական ինֆեկցիաներ, ռինիտ, անգինա, լարինգիտ, օտիտ, բրոնխիտ, թոքաբորբ, բրոնխիալ ասթմա) էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկական նշանները, բարդությունները, ▪ «մանկական դժվարաշնչության ժամանակ հիվանդությունների ինտեգրացված վարում»-ը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պաստառներ, պատկերազարդ ատլասներ, տեսաֆիլմ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ՝ ՍՏԱՄՈՔՍ-ԱՂԻՔԱՅԻՆ, ԱՐՅԱՆ ԵՎ ԱՐՅՈՒՆԱՍՏԵՂԾ, ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ, ՄԻԶԱՅԻՆ, ՆԵՐԶԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-032
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) ստամոքս-աղիքային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների դասակարգումը, պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 2) արյան և արյանաստեղծ համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների զարգացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 3) սիրտ-անոթային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, սրտի բնածին արատ- ների և ռևմատիզմի առաջացման պատճառները, կլինիկան ախտորոշումը, բուժման սկզբունքները, 4) միզային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, գլոմերուլոնեֆրիտի և պիելոնեֆրիտի առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 5) ներզատական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, շաքարային դիաբետի առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, բուժման և կանխարգելման մեթոդները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝48 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Մարդու կենսագործունեության փուլերը» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի

	հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի ստամոքս-աղիքային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների դասակարգումը, պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 2. ացատրի արյան և արյանաստեղծ համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների զարգացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 3. բացատրի սիրտ-անոթային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, սրտի բնածին արատների և ռևմատիզմի առաջացման պատճառները, կլինիկան ախտորոշումը, բուժման սկզբունքները, 4. բացատրի միզային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, գլոմերուլոնեֆրիտի և պիելոնեֆրիտի առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 5. բացատրի ներզատական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, շաքարային դիաբետի առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, բուժման և կանխարգելման մեթոդները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել ստամոքս-աղիքային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների դասակարգումը, պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ստամոքս-աղիքային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների դասակարգումը, առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը ստամոքս-աղիքային համակարգի հիվանդությունների

	ժամանակ, անհետաձգելի օգնությունը թունավորումների և փսխման ժամանակ, 3) ճիշտ է վերցնում կենսաբանական նյութը լաբորատոր հետազոտության համար, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ստամոքս-աղիքային համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ ստամոքս-աղիքային համակարգի հիվանդությունների (բերանաբորբե, կաթնախտ, սուր և քրոնիկական գաստրիտ, հելմինթոզներ) առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, բարդությունները, բուժման սկզբունքները, ▪ անհետաձգելի օգնությունը թունավորումների և փսխման ժամանակ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պաստառներ, պատկերազարդ ատլասներ, տեսաֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Բացատրել արյան և արյանաստեղծ համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների զարգացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում արյան և արյանաստեղծ համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկություն- ները, հիվանդությունների զարգացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը արյան և արյանաստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ, անհետաձգելի օգնությունը քթային արյունահոսությունների, հոդերի արյանազեղումների ժամանակ,

	3) ճիշտ է նկարագրում դիսպանսեր հսկողությունը արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ, 4) ճիշտ է իրականացնում կանխարգելիչ միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդություններ (սակավարյունություն, սուր լեյկոզ, հեմոագիկ դիաթեզներ) առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, բարդությունները, բուժման սկզբունքները, ▪ անհետաձգելի օգնությունը քթային արյունահոսությունների, հոդերի արյանազեղումների ժամանակ, ▪ դիսպանսեր հսկողությունը արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պաստառներ, ատլասներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքի մի մասն անցկացնել արյունաբանական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք ՝12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Բացատրել սիրտ-անոթային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, սրտի բնածին արատների և ռևմատիզմի առաջացման պատճառները, կլինիկան ախտորոշումը, բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, սրտի բնական արատների և ռևմատիզմի առաջացման պատճառները, կլինիկան ախտորոշումը, բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների ժամանակ,

	որոշում պուլսի առանձնահատկությունները, զարկերակային ճնշումը, 3) ճիշտ է կատարում բիցիլինի ներարկումը, 4) ճիշտ է իրականացնում անհետաձգելի օգնությունը ուշագնացության, կոլապսի ժամանակ, 5) ճիշտ է իրականացնում կանխարգելիչ միջոցառումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ սիրտ-անոթային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ▪ սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների (սրտի բնածին արատներ, ռևմատիզմ) առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, բարդությունները, բուժման սկզբունքները, կանխարգելումը, ▪ անհետաձգելի օգնությունը ուշագնացության, կոլապսի ժամանակ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, սլայդներ, պաստառներ, ատլասներ, գործնական միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Բացատրել միզային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, գլոմերուլոնեֆրիտի և պիելոնեֆրիտի առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում միզային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, գլոմերուլոնեֆրիտի և պիելոնեֆրիտի առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը միզային համակարգի հիվանդությունների ժամանակ,

	3) ճիշտ է իրականացնում մեզի հավաքումը հետազոտությունների համար, կազմում դիետաներ, 4) ճիշտ է իրականացնում հիվանդների դիսպանսեր հսկողությունը և կանխարգելիչ միջոցառումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը միզային համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ միզային համակարգի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ▪ գլոմերուլոնեֆրիտի և պիելոնեֆրիտի առաջացման պատճառները, կլինիկական ախտանշանները, բարդությունները, բուժման և խնամքի սկզբունքները, ▪ հիվանդների դիսպանսեր հսկողությունը և կանխարգելիչ միջոցառումները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների և ախտորոշման համար կենսաբանական նյութը վերցնելու անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պաստառներ, ատլասներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքն անցկացնել նեֆրոլոգիական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Բացատրել ներզատական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, շաքարային դիաբետի առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, բուժման և կանխարգելման մեթոդները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ներզատական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, շաքարայի դիաբետի առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, բուժման և կանխարգելման մեթոդները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը շաքարային դիաբետի ժամանակ, 3) ճիշտ է իրականացնում արյան և մեզի մեջ շաքարի քանակի որոշումը, կատարում ինսուլինի ենթամաշկային

	ներարկում, կազմում համապատասխան դիետա, ցուցաբերում անհետաձգելի օգնություն կոմաների ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ներզատական համակարգի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ ներզատական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ▪ շաքարային դիաբետի առաջացման պատճառները, կլինիկական ախտանշանները, բարդությունների, բուժման, խնամքի, սնուցման առանձնահակությունները, ▪ անհետաձգելի օգնությունը կոմաների ժամանակ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների և ախտորոշման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պաստառներ, ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ՝ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ, ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ, ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ՕԴԱ-ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-033
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) երեխաների խնամքի կազմակերպմանը ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ, 2) տուբերկուլոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմանական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները, 3) դիֆթերիայի, կապույտ հազի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշ- ման և բուժման սկզբունքները,

	4) մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, 5) քութեշի, կարմրուկի, կարմրախտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, բուժման սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Մարդու կենսագործունեության փուլերը» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. տիրապետի երեխաների խնամքի կազմակերպմանը՝ ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ, 2. բացատրի տուբերկուլոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմանական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները, 3. բացատրի դիֆթերիայի, կապույտ հազի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, 4. բացատրի մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, 5. բացատրի քութեշի, կարմրուկի, կարմրախտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, բուժման սկզբունքները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Տիրապետել երեխաների խնամքի կազմակերպմանը՝ ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կազմակերպում վարակիչ հիվանդությունների կազխարգելումը երեխաների մոտ, ներկայացնում ակտիվ իմունիզացիայի, պատվաստանյութերի հետ վարվելու հիմանական սկզբունքները, սարցային շղթան,

	հետպատվաստումային բարդությունները, 2) ճիշտ է կատարում վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, կանխարգելիչ պատվաստումները, լրացնում շտապ հաղորդման քարտ, ցուցաբերում օգնություն հետպատվաստումային բարդությունների ժամանակ, կազմակերպում հակահամաճարակային միջոցառումներ ինֆեկցիայի օջախում, կատարում ընթացիկ և եզրափակիչ ախտահանում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ինֆեկցի -ոն հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ վարակիչ հիվանդությունների կազխարգելումը երեխաների մոտ, ▪ կանխարգելիչ պատվաստումները, հետպատվաստումային բարդությունները, ▪ պատվաստանյութերի պահպանման, տեղափոխման, ներմուծման եղանակները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, սլայդներ, պաստառներ, ատլասներ, տեսաֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Բացատրել տուբերկուլոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմանական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տուբերկուլոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմանական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը տուբերկուլյոզի ժամանակ, կատարում և գանհատում ՄԱԹՈՒ-ի փորձը, կատարու ԲՑԺ պատվաստում, հավաքում խորխը և վարակազերծում, նախապատրաստում ռենտգեն հետազոտության և բրոնխոսկոպիայի,

	3) ճիշտ է իրականացնում կանխարգելիչ միջոցառումները և տուբերկուլոզով հիվանդացության իջեցմանն ուղղված միջոցառումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը տուբերկուլոզի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ տուբերկուլոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմանական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները, ▪ կանխարգելիչ միջոցառումները և տուբերկուլոզի ժամանակ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, ախտորոշման, կանխարգելման և միջամտություննե -րի կատարման համար անհրաժեշտ պարագաներ, պաստառներ, ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Բացատրել դիֆթերիայի, կապույտ հազի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դիֆթերիայի, կապույտ հազի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը, կարանտինային միջոցառումները, կենսաբանական նյութի վերցնումը հետազոտությունների համար, հակադիֆթերիտիկ շիճուկի ներարկումը, հնգավալենտ պատվաստանյութի իրականացումը, ցուցաբերում բուժօգնություն կրուպի ժամանակ, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը

	դիֆթերիայի, կապույտ հազի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ դիֆթերիայի, կապույտ հազի էպիդեմիոլոգիան, առաջացման պատճառները, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժուման սկզբունքները խնամքը, կանխարգելումը, ▪ հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անհրաժեշտ պարագաներ, պաստառներ, սլայդներ, ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Բացատրել մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի ժամանակ, ստուգում մենինգիալ ախտանիշները, վերցնում կենսաբանական նյութը հետազոտությունների համար, կյազմակերպում կարանտինայի միջոցառումներ, կատարում ԿԿԽ պատվաստում, կազմակերպում հակահամաճարակային միջոցառումներ ինֆեկցիայի օջախում, կատարում ընթացիկ և եզրափակիչ վարակազերծում, նախապատրաստում լյումբալ պունկցիայի համար անհարժեշտ պարագաները, կազմակերպում հիվանդի խնամքը պունկցիայից հետո:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները.

	▪ մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, ▪ հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը ինֆեկցիայի օջախում: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցա -դրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, կանխարգելման և միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, պաստառներ, ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Բացատրել քութեշի, կարմրուկի, կարմրախտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում քութեշի, կարմրուկի, կարմրախտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը քութեշի, կարմրուկի, կարմրախտի ժամանակ, կատարում ԿԿԻՎ պատվաստում, ներարկում հակակարմրուկային գամա-գլոբուլին, կազմակերպում կարանտինային միջոցատումներ կատարում ընթացիկ վարակազերծում ինֆեկցիայի օջախում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը քութեշի, կարմրուկի, կարմրախտի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ քութեշի, կարմրուկի, կարմրախտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, բուժման սկզբունքները, ▪ կարանտինային միջոցատումների կազմակերպումը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, միջամտությունների կատարման համար

	անհրաժեշտ պարագաներ, պաստառներ, սլայդներ, ատլասներ, տեսաֆիլմ, պատվաստանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂԻՔԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԸ, ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-034
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) սուր դիարեային հիվանդությունների, աղիքային վարակների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, 2) վիրուսային հեպատիտների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, 3) պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները,
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Մարդու կենսագործունեության փուլերը» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի սուր դիարեային հիվանդությունները, աղիքային վարակների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, 2. բացատրի վիրուսային հեպատիտների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, 3. բացատրի պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման

	սկզբունքները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել սուր դիարեային հիվանդությունները, աղիքային վարակների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում աղիքային վարակների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, վարակման կանոննորը և տալիս գաղափար դիսբակտերիոզի մասին, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը սուր դիարեային հիվանդությունների, աղիքային վարակների ժամանակ, օռալ ռեհիդրատացիան, ստամոքսի լվացումը և մաքրող հոգնան, հավաքում կենսաբանական նյութը հետազոտությունների նպատակով, դիսպանսեր հսկողություն, կազմակերպում կարանտինային և կանխարգելիչ միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը սուր դիարեային հիվանդությունների, աղիքային վարակների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ աղիքային վարակների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, ▪ գաղափար դիսբակտերիոզի մասին, ▪ դիսպանսեր հսկողությունը, կարանտինային և կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը, ▪ «փորլուծային հիվանդությունների ինտեգրացված վարման» ծրագիրը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, պաստառներ, սլայդներ, ատլասներ, տեսաֆիլմ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 6 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝10 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Բացատրել վիրուսային հեպատիտների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում վիրուսային հեպատիտների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը վիրուսային հեպատիտների ժամանակ, գնահատում կղանքի և մեզի բնույթը, վերցնում արյուն բիոքիմիական հետազոտության նպատակով, կատարում պատվաստում և կրկնապատվաստում հեպատիտ Բ-ի դեմ, 3) ճիշտ է կազմակերպում կարանտինային և կանխարգելիչ միջոցառումները, դիսպանսեր հսկողությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը վիրուսա -յին հեպատիտների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ վիրուսային հեպատիտների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, ▪ կարանտինային և կանխարգելիչ միջոցառումները, դիսպանսեր հսկողությունը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, ախտորոշման, կանխարգելման և միջամտությունների կատարման համար անհրաժեշտ պարագաներ, պաստառներ, սլայդներ, ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Բացատրել պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները,

	2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը պոլիոմիելիտի ժամանակ, կատարում պատվաստում և կրկնապատվաստում պոլիոմիելիտի դեմ, ստուգում ջլային ռեֆլեքսները և կազմակերպում կարանտիանային և կանխարգելիչ միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը պոլիոմիելիտի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները. ▪ պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, ▪ կարանտիանային և կանխարգելիչ միջոցառումները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, պարագաներ, պաստառներ, սլայդներ, ատլասներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
	ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-035
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) վիրաբուժության զարգացման և կայացման էտապները, ժամանակակից վիրաբուժության և վիրաբուժական ծառայության կազմակերպման սկզբունքները, բուժքրոջ վիրաբուժական գործունեությունը, 2) վիրաբուժական վարակ հասկացությունը, վարակի կանխարգելման եղանակները, տեսակները, ապանեխումը և հականեխումը, 3) արյունահոսությունը, նրա պատճառները, տեսակները, արյունահոսության նախնական և վերջնական դադարեցումը,

	4) ինֆուզիա, տրանսֆուզիա, 5) ցավազրկումը, նրա տեսակները, բարդությունները, 6) շուրջ վիրահատական գործընթացը՝ նախա և հետվիրահատական շրջանները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Դեղաբանություն» ՄԲԳ-5-13-014, ՄԲԳ-5-13-015, ՄԲԳ-5-13-016, «Մանրէաբանություն, «Վիրուսաբանություն և իմունաբանություն» ՄԲԳ-5-13-013, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի վիրաբուժության զարգացման և կայացման էտապները, ներհիվանդանոցային վիրաբուժական վարակի կանխարգելումը, 2. սահմանի արյունահոսությունը, առաջացման պատճառները, տեսակները, ընդհանուր և տեսային ախտանշանները, նախնական և վերջնական դադարեցման եղանակները, հնարավոր բարդությունները, 3. նկարագրի ինֆուզիայի և տրանսֆուզիայի դերը, դոնոր հասկացությունը, արյան խմբերը, ռեզուս գործոնը, դրանց որոշումը, համատեղելիության փորձերը արյան փոխներարկման եղանակները, ձևերը, ինֆուզիայի և տրանսֆուզիայի հնարավոր բարդությունները, կանխարգելումը, արյան փոխներարկման ցուցումները և հակացուցումները, 4. բացատրի ցավը, ցավազկումը, ցավազրկման տեսակները, ընդհանուր և տեղային ցավազրկման տեսակները, նարկոզի փուլերը, բարդությունները և կանխարգելումը, 5. բացատրի վիրաբուժական վիրահատությունների տեսակները, նկարագրել նախավիրահատական շրջանը, փուլերը, պացիենտի նախապատրաստումը անհետաձգելի, շտապ, պլանային վիրահատությունների, վիրահատության էտապները, վիրաբուժական գործիքները, հետվիրահատական

	շրջանը, հնարավոր բարդությունները և կանխումը, 6. բացատրի դեսմուրգիան, որպես գիտություն վիրակապությունների մասին, վիրակապերի հիմնական տեսակները, նպատակները, սկզբունքները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել վիրաբուժության զարգացման և կայացման էտապները, ներհիվանդանոցային վիրաբուժական վարակի կանխարգելումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում վիրաբուժության զարգացման և կայացման էտապները, ժամանակակից վիրաբուժության և վիրաբուժական ծառայության կազմակերպման սկզբունքները, բուժքրոջ վիրաբուժական գործունեությունը, 2) ճիշտ է բացատրում վարակ և վիրաբուժական վարակ հասկացությունները, վարակի կանխարգելման եղանակները, ապանեխումը, հականեխումը, 3) ճիշտ է իրականացնում օդակաթիլային, կոնտակտային, իմպլանտացիոն վարակի կանխարգելումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ վիրաբուժության զարգացման և կայացման էտապների, ժամանակակից վիրաբուժության և վիրաբուժական ծառայության կազմակերպման սկզբունքների, մանկաբարձի վիրաբուժական գործունեության, վարակ և վիրաբուժական վարակ հասկացությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է վարակի կանխարգելման եղանակները, հականեխումը և նրա տեսակների, ապանեխումը և նրա տեսակները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ քիմիական հականեխող նյութերի հիմնական խմբերը, կիրառումը, ▪ դրենավորում, նպատակը, տեսակները, ▪ օդակաթիլային, կոնտակտային և իմպլանտացիոն վարակի կանխարգելումը, ▪ վիրաբուժական գործիքների վարակազերծումը, նախամանրէազերծումային մշակումը, նախամանրէազերծու- մային մշակման որակը ստուգելու փորձեր, մանրէազերծման եղանակները,

	▪ ձեռքերի վիրաբուժական մշակման կատարում, ▪ վիրակապական նյութերի պատրաստում և տեղավորում բիքսում, ▪ վիրահատական արտահագուստ /մանրէազերծ խալաթ/, մանրէազերծ ձեռնոցներ հագնելու և վիրաբույժին հագցնելու տեխնիկայի մշակում, ▪ մանրէազերծ մեծ սեղանի պատրաստում, վիրահատական դաշտի մշակում: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում, թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, քիմիական հականեխող նյութեր, վիրաբուժական գործիքներ, անհրաժեշտ պարագաներ, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր: Նպատակահարմար է պարապմունքների մի մասը վիրաբուժական ստացիոնարում, վիրահատական բլոկում, վիրակապարանում անցկացնել:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Սահմանել արյունահոսությունը, առաջացման պատճառները, տեսակները, ընդհանուր և տեղային ախտանշանները, նախնական և վերջնական դադարեցման եղանակները, հնարավոր բարդությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնորոշում արյունահոսությունը, առաջացման պատճառները, նկարագրում արյունահոսության տեսակները, ընդհանուր և տեղային ախտանշանները արյան կորստի չափանիշները, 2) ճիշտ է իրականացնում արյունահոսության նախնական դադարեցումը, տարբեր եղանակներով, 3) ճիշտ է ներկայացնում արյունահոսության վերջնական դադարեցման եղանակները, 4) ճիշտ է ներկայացնում արյունահոսության հնարավոր բարդությունները, 5) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը արյունահոսությունների ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը արյունահոսությունների ժամանակ:

	Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ արյունահոսության առաջացման պատճառները, արյունահոսության տեսակները, արյան կորստի չափանիշները, ▪ արյունահոսության ընդհանուր և տեղային ախտանշանները, հնարավոր բարդությունները, ▪ արյունահոսության նախնական դադարեցման եղանակները, ▪ արյունահոսության վերջնական դադարեցման եղանակները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, անհրաժեշտ պարագանե , արյունականգ պատրաստուկներ, տեսաֆիլմ, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Նկարագրել ինֆուզիայի և տրանսֆուզիայի դերը, դոնոր հասկացությունը, արյան խմբերը, ռեզուս գործոնը, դրանց որոշումը, համատեղելիության փորձերը արյան փոխներարկման եղանակները, ձևերը, ինֆուզիայի և տրանսֆուզիայի հնարավոր բարդությունները, կանխարգելումը, արյան փոխներարկման ցուցումները և հակացուցումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դոնոր և դոնորություն հասկացությունները, արյան հետ աշխատելու առանձնահատկությունները, 2) ճիշտ է նկարագրում ինֆուզիայի և տրանսֆուզիայի դերը, կատարում արյան խմբերի և ռեզուս գործոնի որոշումը, համատեղելիության փորձերը, բացատրում արյան փոխներարկման եղանակները և ձևերը, տիրապետում արյան փոխներարկման տեխնիկային, ցուցադրում արյան պատրաստուկները և արյան փոխարինողները, որոշում արյան պիտանելիությունը, 3) ճիշտ է ներկայացնում արյան փոխներարկման ցուցումները և հակացուցումները, ինֆուզիայի և տրանսֆուզիայի հնարավոր բարդությունները, դրանց կանխարգելումը:

Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ինֆուզիայի և տրանսֆուզիայի դերի, դոնոր և դոնորություն հասկացության, արյան և ռեզուս գործոնի, արյան փոխներարկման եղանակների և ձևերի, արյան փոխներարկման ցուցումների և հակացուցումների, ինֆուզիայի և տրանսֆուզիայի հնարավոր բարդությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է արյան փոխներարկման տեխնիկան, ցուցադրում արյան պատրաստուկները և արյան փոխարինողները, որոշում արյան խմբային և ռեզուս պատկանելիությունը, որոշում արյան պիտանելիությունը, արյան փոխներարկում ստացող հիվանդի խնամքը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ արյան հետ աշխատելու առանձնահատությունները, ▪ արյան փոխներարկման բարդությունների կանխարգելումը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում, թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, արյան խմբերը որոշելու համար անհրաժեշտ պարագաներ, միանգամյա օգտագործման ինֆուզիայի և տրանսֆուզիայի համակարգ, արյան փոխարինողներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Բացատրել ցավը, ցավազկումը, ցավազրկման տեսակները, ընդհանուր և տեղային ցավազրկման տեսակները, նարկոզի փուլերը, բարդությունները և կանխարգելումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում ցավը, ցավազրկումը, նկարագրում ցավազրկման տեսակները, ներկայացնում նարկոզի համար կիրառվող հեղուկ և գազային նարկոտիկ նյութերը, նկարագրում ցավազրկման բարդությունները և

	դրանց կանխարգելումը, 2) ճիշտ է ներկայացնում նարկոզի փուլերը պատրաստում անեսթեզիստի սեղանը, անհրաժեշտ գործիքներ և նյութեր տեղային ցավազրկման համար, 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը ընդհանուր և տեղային ցավազրկումով հիվանդի մոտ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ցավի, ցավազրկման, ցավազրկման տեսակների, նարկոզի փուլերի, ցավազրկման բարդությունների և կանխարգելման վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ընդհանուր և տեղային ցավազրկումով հիվանդի մոտ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ ընդհանուր ցավազրկում, տեսակները՝ ինհալացիոն և ոչ ինհալացիոն, ▪ տեղային ցավազրկում, տեսակները, ▪ ողնուղեղային ցավազրկում, ▪ մանկաբարձի պարտականությունները պացիենտին նարկոզի նախապատրաստելու ընթացքում, ▪ նարկոզի համար կիրառվող հեղուկ և գազային նորկոտիկ նյութերը, Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, անհրաժեշտ գործիքներ և պարագաներ, նյութեր՝ ցավազրկման համար ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Բացատրել վիրաբուժական վիրահատությունների տեսակները, նկարագրել նախավիրահատական շրջանը,

	փուլերը, պացիենտի նախապատրաստումը անհետաձգելի, շտապ, պլանային վիրահատությունների, վիրահատության էտապները, վիրաբուժական գործիքները, հետվիրահատական շրջանը, հնարավոր բարդությունները և կանխումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում վիրահատության տեսակները, սահմանում նախավիրահատական շրջանը, դրա փուլերը, նախապատրաստում պացիենտին անհետաձգելի, շտապ, պլանային վիրահատությունների, 2) ճիշտ է կատարում հիմնական բուժական պրոցեդուրաները, նկարագրում վիրահատության էտապները, ցուցադրում վիրաբուժական գործիքները, 3) ճիշտ է սահմանում հետվիրահատական շրջանը, այդ շրջանում կատարում հիվանդի խնամքի հետ կապված հիմնական գործողությունները, նկարագրում առաջացող հնարավոր բարդությունները և դրանց կանխարգելումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ վիրաբուժական վիրահատությունների տեսակների, նախավիրահատական շրջանի և դրա փուլերի, վիրահատության էտապների, վիրաբուժական գործիքների, հետվիրահատական շրջանի, առաջացող բարդությունների և դրանց կանխարգելման վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է պացիենտի նախապատրաստումը անհետաձգելի, շտապ, պլանային վիրահատությունների, հիմնական բուժական պրոցեդուրաները, հետվիրահատական շրջանում հիվանդի խնամքի հետ կապված գործողությունները, վիրաբուժական գործիքները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ սահմանել նախավիրահատական շրջանը, ▪ սահմանել հետվիրահատական շրջանը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, հականեխող լուծույթներ, վիրակապական

	նյութեր, խնամքի պարագաներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերախաղ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք6	Բացատրել դեսմուրգիան, որպես գիտություն վիրակապությունների մասին, վիրակապերի հիմնական տեսակները, նպատակները, սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում դեսմուրգիան, դրա տեսակները, նպատակները, սկզբունքները, 2) ճիշտ է կատարում տարբեր մարմնամասերի վիրակապություններ, տիրապետում փափուկ և կոշտ վիրակապությունների հիմանական տեսակների կապերի դրման կանոններին, 3) ճիշտ է կատարում գիպսի որակի ստուգման փորձերը, պատրաստում գիպսյա բինտեր, ժամանակին ճանաչում և կանխում սխալ վիրակապության հետևանքով առաջացած բարդությունները, 4) ճիշտ է իրականացնում վիրակապված հիվանդների խնամքը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեսմուրգիայի, վիրակապերի հիմնական տեսակների, նպատակների, սկզբունքների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է տարբեր մարմնամասերի վիրակապությունները, փափուկ և կոշտ վիրակապությունների հիմանական տեսակների կապերի դրման կանոնները, գիպսի որակի ստուգման փորձերը, գիպսյա բինտերի պատրաստումը, վիրակապված հիվանդի խնամքը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ ճանաչել և կանխել սխալ վիրակապության հետևանքով առաջացած բարդությունները, Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, անհրաժեշտ պարագաներ, վիրակապական նյութեր, տեսաֆիլմ, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերախաղ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել վիրակապարանում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 0 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-036
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) վիրաբուժական վնասվածքների պատճառները, կլինիկական դրսևորումները, ախտորոշման եղանակները, բարդությունները, բուժման և խնամքի սկզբունքները, կանխարգելումը, նախավիրահատական և հետվիրահատական շրջանների ընթացքը և խնամքի առանձնահատկությունները, 2) ուռուցքաբանական օգնության կազմակերպումը, 3) իրագործել և փաստագրել վիրաբուժական հիվանդություններով և վնասվածքներով հիվանդների խնամքի գործընթացի առանձին փուլերը, ցուցաբերել առաջին օգնություն վիրաբուժական անհետաձգելի իրավիճակներում, տիրապել քույրական միջամտությունների տեխնիկային վիրաբուժությունում, 4) դեսմոգրաֆիայի հիմունքները, 5) վիրաբուժական վարակի դասակարգումը, տեղային և ընդհանուր ախտանշանները, բուժման եղանակները, 6) մեռուկացումը, առաջացման պատճառները, տեսակները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 48 ժամ

Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Դեղաբանություն» ՄԲԳ-5-13-014, ՄԲԳ-5-13-015, ՄԲԳ-5-13-016, «Մանրէաբանություն, «Վիրուսաբանություն և իմունաբանություն» ՄԲԳ-5-13-013, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բնութագրի վնասվածքը, դրանց դասակարգումը, նկարագրի վնասվածքային շոկը, հակաշոկային միջոցառումները, նկարագրել բաց և փակ վնասվածքները, այրվածքը, այրվածքային հիվանդությունը, էլեկտրահարությունը, ցրտակարությունը 2. բնութագրի վիրաբուժական վարակը, դասակարգումը, ներթափանցման ուղիները, տեղային և ընդհանուր ախտանշանները, բուժման սկզբունքները 3. բնութագրի մեռուկացումը, առաջացման պատճառները, տեսակները, երակների վարիկոզ լայնացումը, էնդարտերիտը, խոցը, խուղակը 4. բնութագրի ուռուցք և ուռուցքաբանություն հասկացությունները, առաջացման տեսությունները, նախաքաղցկեղային վիճակներ հասկացությունը, նորագոյացությունների դասակարգումը, բուժման եղանակները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բնութագրել վնասվածքը, դրանց դասակարգումը, նկարագրել վնասվածքային շոկը, հակաշոկային միջոցառումները, նկարագրել բաց և փակ վնասվածքները, այրվածքը, այրվածքային հիվանդությունը, էլեկտրահարությունը, ցրտակարությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնորոշում վնասվածքը, դրա դասակարգումը, վնասվածքային շոկը, հակաշոկային միջոցառումները, 2) ճիշտ է գնահատում վանսվածք ունեցող պացիենտի վիճակը, վնասվածքի բնույթն ու տեղակայումը, 3) ճիշտ է նկարագում փակ և բաց վնասվածքները, ցուցաբերում առաջին բուժօգնությունը, կատարում տրանսպորտային անշարժացում,

	4) ճիշտ է նկարագրում այրվածքը, այրվածքային հիվանդությունը, էլեկտրահարությունը, ցրտահարությունը, ցուցաբերում առաջին բուժօգնություն, որոշում այրվածքի խորության աստիճանը և մակերեսը, 5) ճիշտ է նկարագրում վնասվածքներով պացիենտների բուժման հիմնական սկզբունքները, 6) ճիշտ է նկարագրում քույրական գործընթացը տարբեր վնասվածքներով հիվանդների մոտ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը տարբեր վնասվածքներով հիվանդների մոտ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ փակ վնասվածքներ՝ սալջարդ, մկանների պատռվածք, ջլերի պատռվածք, հյուսվածքների ձգվածություն, կրաշ համախտանիշ, հոդախախտ, ▪ կոտրվածքներ՝ դասակարգումը, կլինիկական նշանները, առաջին բուժօգնությունը, բուժում, ▪ բաց վնասվածքներ՝ վերքեր, դասակարգումը, կլինիկական նշանները, առաջին բուժօգնությունը, բուժումը, հիվանդների խնամքը, ▪ այրվածքներ, տեսակները, այրվածքի խորության և մակերեսի որոշումը, առաջին բուժօգնությունը, բուժման սկզբունքները, հիվանդների խնամքը, ▪ էլեկտրահարություն, առաջացման պատճառները, կլինիկական նշանները, առաջին օգնությունը, բուժումը, խնամքը, ▪ ցրտահարություն՝ առաջացման պատճառները, կլինիկական նշանները, առաջին բուժօգնությունը, բուժման սկզբունքները, հիվանդների խնամքը, ▪ գլխի փակ վնասվածքներ (գլխուղեղի ցնցում, սալջարդ, ճնշում), ▪ գլխի հիմի կոտրվածք, ▪ կրծքավանդակի վնասվածքներ, կողերի կոտրվածք, պնևմոթորաքս, հեմոթորաքս, ▪ ողնաշարի և կոնքի վնասվածքներ, ▪ առաջին բուժօգնության ցուցաբերումը և բուժման սկզբունքները տարբեր վնասվածքների դեպքում: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, բեկակալներ /շինա/, անհրաժեշտ պարագաներ,գործիքներ, հականեխող նյութեր, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերախաղ: Նպատակահարմար է գործնական ուսուցման որոշակի մաս անցկացնել վնասվածքաբանական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Բնութագրել վիրաբուժական վարակը, դասակարգումը, ներթափանցման ուղիները, տեղային և ընդհանուր ախտանշանները, բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում վիրաբուժման վարակը, դասակարգումը, ներթափանցման ուղիները, տեղային և ընդհանուր ախտանշանները, 2) ճիշտ է նկարագրում տեղային վիրաբուժական վարակը, դրա տեսակները բուժման եղանակները, 3) ճիշտ է նկարագրում ընդհանուր և անաէրոբ վիրաբուժական վարակները դրանց հիմանական կլինիկական ախտանշանները, կատարում փայտացման և գազային գանգրենայի յուրահատուկ և ոչ յուրահատուկ կանխարգելում, նկարագրում դրանց բուժման եղանակները, կատարում վիրաբուժական վարակով հիվանդների գործիքային վիրակապություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ վիրաբուժական վարակի, դասակարգման, ներթափանցման ուղիների, տեղային և ընդհանուր ախտանշանների, բուժման սկզբունքների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը վիրաբուժման վարակների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ տեղային վիրաբուժական վարակ՝ թարախապալար, կարբունկալ, թարախակույտ, ֆլեգմոնա, հիդրադենիտ, լիմֆադենիտ, լիմֆանգիտ, կարմիրր քամի, օստեոմիելիտ, ֆլեբիտ և տրոմբոֆլեբիտ,

	մատնաշունչ, մաստիտ, ▪ ընդհանուր վարակ՝ սեպսիս, ▪ անաէրոբ վարակ՝ գազային փտախտ, փայտացում, ▪ վիրաբուժական վարակների առաջացման պատճառները, ընդհանուր տեղային ախտանշանները, բուժման սկզբունքները, ▪ փայտացման և գազային փտախտի յուրահատուկ և ոչ յուրահատուկ կանխարգելումը, ▪ թարախային վիրաբուժական բաժանմունքում աշխատանքի առանձնահատկությունները, ▪ գործիքային վիրակապության տեխնիկան: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, վիրակապական, հականեխող նյութեր, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ: Նպատակահարմար է գործնական ուսուցման որոշակի մաս անցկացնել թարախային վիրաբուժական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Բնութագրել մեռուկացումը, առաջացման պատճառները, տեսակները, երակների վարիկոզ լայնացումը, էնդարտերիտը, խոցը, խուղակը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում մեռուկացումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական նշանները, բուժման սկզբունքները, իրականացնում քույրական գործընթացը մեռուկացման տարբեր ախտանիշներ ունեցող հիվանդների մոտ, պառկելախոցերի կանխարգելումը, վիրաբուժական մշակումը, վիրակապությունը, ծայրատի վիրակապությունը, 2) ճիշտ է տիրապետում էլաստիկ բինտով կապ դնելու տեխնիկային, իրականացնում տրոֆիկ խոցեր ունեցող հիվանդների խնամքը և վերքերի մշակումը,

	3) ճիշտ է նկարագրում երակների վարիկոզ լայնացում և էնդարտերիտ հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական նշանները, կանխարգելման և բուժման սկզբունքները, 4) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը անոթային հիվանդություններով պացիենտի մոտ, 5) ճիշտ է նկարագրում խոցը և խուղակը, առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկական նշանները, կանխարգելումը և բուժման սկզբունքները, 6) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը խոցի և խուղակի ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը անոթային հիվանդությունով, խոցով և խուղակով պացիենտի մոտ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ մեռուկացման տեսակները՝ փտախտ /չոր և թաց/, ինֆարկտ, ▪ երակների վարիկոզ լայնացում և էնդարտերիտ, ▪ խոցեր և խուղակներ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, վիրակապական նյութեր, էլաստիկ բինտեր, հականեխող նյութեր, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ: Նպատակահարմար է գործնական ուսուցումն անցկացնել նաև վիրաբուժական անոթային բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Բնութագրել ուռուցք և ուռուցքաբանություն հասկացությունները, առաջացման տեսությունները, նախաքաղցկեղային վիճակներ հասկացությունը, նորագոյացությունների դասակարգումը, բուժման եղանակները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում ուռուցք և ուռուցքաբանություն հասկացությունները, բացատրում առաջացման տեսությունները, նկարագրում նախաքաղցկեղային վիճակները, դասակարգում նորագոյացությունները,

	բացատրում չարորակ ուռուցքների զարգացման փուլերը, կատարում չարորակ և բարորակ ուռուցքների տարբերակում ըստ կլինիկական նշանների, ներկայացնում բուժման եղանակները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը նորագոյացություններով պացիենտների մոտ, տիրապետում դեոնթոլոգիայի առանձնահատկություններին օնկոլոգիայում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը նորագոյացություններով պացիենտների մոտ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ բարորակ և չարորակ նորագոյացություններ, նրանց տարբերակումը՝ ըստ կլինիկական նշանների, ▪ ախտորոշման մեթոդներն օնկոլոգիայում, ▪ վիրահատական, ճառագայթային բուժում, քիմիաթերապիա, հորմոնաթերապիա, ▪ կրծքագեղձի ուռուցքային հիվանդություններ, ▪ դեոնթոլոգիայի առանձնահատկություններն օնկոլոգիայում: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ: Նպատակահարմար է գործնական ուսուցման որոշակի ժամանակահատված անցկացնել օնկոլոգիական բաժանմունքում կամ հիվանդանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱՎՈՐ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-037
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել սուր որովայն համախտանիշ հասկացողությունը, սուր որովայն առաջացնող հիմնական հիվանդությունները, միզասեռական համակարգի հիմնական վիրաբուժական

	հիվանդությունները, ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդությունները, վահանաձև գեղձի հիվանդությունները, առավել հաճախ հանդիպող բնածին արատները և մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Դեղաբանություն» ՄԲԳ-5-13-014, ՄԲԳ-5-13-015, ՄԲԳ-5-13-016, «Մանրէաբանություն, «Վիրուսաբանություն և իմունաբանություն» ՄԲԳ-5-13-013, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի սուր որովայն համախտանիշ հասկացությունը, սուր որովայն առաջացնող հիմնական հիվանդությունները և վնասվածքները, 2. բացատրի ուռոլոգիա հասկացությունը, նկարագրի միզասեռական համակարգի հիմնական վիրաբուժական հիվանդությունները և վնասվածքները, 3. նկարագրի ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդությունները, 4. նկարագրի վահանաձև գեղձի հիվանդությունները, 5. նկարագրի առավել հաճախ հանդիպող բնածին արատները և մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել սուր որովայն համախտանիշ հասկացությունը, սուր որովայն առաջացնող հիմնական հիվանդությունները և վնասվածքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում սուր որովայն համախտանիշ առաջացնող որովայնի վիրաբուժական հիվանդությունները,

	առաջացման պատճառները, հիմնական կլինիկական նշանները, ախտորոշման և բուժման հիմնական սկզբունքները, իրականացնում առաջին բուժօգնությունը, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը սուր որովայն համախտանիշ առաջացնող որովայնային վիրաբուժական հիվանդությունների ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը սուր որովայն համախտանիշ առաջացնող որովայնային վիրաբուժական հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ որովայնապատի փակ և բաց վնասվածքներ, ▪ որովայնի խոռոչի օրգանների վնասվածքներ, ▪ պերիտոնիտ՝ տարածված և սահմանափակ, ▪ որովայնի ճողվածքներ, օղակված ճողվածք, բնածին ճողվածք, ▪ ստամոքսի և տասներկումատնյա աղու խոցային հիվանդություն, բարդություններ, ▪ խոլեցիստիտ և լեղաքարային հիվանդություն, ▪ որդանման ելունի բորբոքում՝ ապենդիցիտ, ▪ ենթաստամոքսային գեղձի բորբոքում՝ պանկրեատիտ, ▪ աղիների սուր անանցանելիություն՝ դինամիկական և մեխանիկական, Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, վիրակապական նյութեր, հականեխող նյութեր, անհրաժեշտ պարագաներ, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր: Նպատակահարմար է գործնական ուսուցման որոշակի ժամեր անցկացնել որովայնային վիրաբուժական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 10 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 18 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Բացատրել ուռոլոգիա հասկացությունը, նկարագրել միզասեռական համակարգի հիմնական վիրաբուժական հիվանդությունները և վնասվածքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում ուռոլոգիա հասկացությունը, միզասեռական համակարգի հիմական վիրաբուժական հիվանդությունները և վնասվածքները, հիմնական ախտանշանները, իրականացնում առաջին ուժօգնությունը դրանց ժամանակ, 2) ճիշտ է նկարագրում ախտորոշման և բուժման հիմնական սկզբունքները միզասեռական համակարգի վիրաբուժական հիվանդությունների և վնասվածքների դեպքում, 3) ճիշտ է ճանաչում հետվիրահատական շրջանի հանրավոր բարդությունները, նակրագրում սուր միզակապության պատճառները, նշանները, կատարում առաջին բուժօգնություն, իրականացնում միզապարկի կաթետերացում, քույրական գործընթացը ետվիրահատական շրջանում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը միզասեռական համակարգի հիմնական վիրաբուժական հիվանդությունների և վնասվածքնեի ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ երիկամների փակ վնասվածքներ, ▪ միզապարկի վնասվածքներ, ▪ երիկամաքարային հիվանդություն, երիկամային խիթ, ▪ միզապարկի բորբոքում՝ ցիստիտ, ▪ շագանակագեղձի ադենոմա, ▪ սուր միզակապություն: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, հականեխող, վիրակապական նյութեր,անհրաժեշտ պարագաներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և

	տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր: Նպատակահարմար է գործնական պարապմունքների մի մասն իրականացնել ուռոլոգիայի բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Նկարագրել ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, ախտանիշները, բուժման սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը նախա և հետվիրահատական շրջաններում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդություններ ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ սրբանի ճաք, ▪ հարուղիղ աղու բջջանքի թարախային բորբոքում՝ պարապրոկտիտ, ▪ թութք, ▪ ուղիղ աղու քաղցկեղ, Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, վիրակապական, հականեխող նյութեր, անհրաժոշտ պարագաներ, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր: Նպատակահարմար է գործնական պարապմունքների մի մասն իրականացնել պրոկտոլոգիական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Նկարագրել վահանաձև գեղձի հիվանդությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում խպիպը և թիրեոտոքսիկոզը, առաջացման պատճառները, հիմանական կլինիկական նշանները, խպիպի աստիճանները, կանխարգելումը, բուժման հիմնական սկզբունքները, 2) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը նախա և հետվիրահատական շրջաններում, խպիպի և թիրեոտոքսիկոզի ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը վահանաձև գեղձի հիվանդությունների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ խպիպ, տեսակները՝ էնդեմիկ, էպիդեմիկ, սպորադիկ, ▪ դիֆուզ տոքսիկ խպիպ (թիրեոտոքսիկոզ, Բազեդովյան հիվանդութուն): Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, վիրակապական, հականեխող նյութեր, անհրաժեշտ պարագաներ, ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր: Նպատակահարմար է գործնական պարապմունքների մի մասն իրականացնել վիրաբուժական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Նկարագրել առավել հաճախ հանդիպող բնածին արատները և մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում առավել հաճախ հանդիպող բնածին արատները (գայլի երախ, նապաստակի շուրթ, նյարդային խողովակի բնածին արատներ),

	2) ճիշտ է ներկայացնում մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում վիրաբուժական միջամտություն պահանջող մանկական հիվանդությունների և բնածին արատների հիմնական նշանները, 4) ճիշտ է ներկայացնում և կատարում երեխայի նախապատրաստումը վիրահատության, 5) ճիշտ է ներկայացնում խնամքի առանձնահատկություններևը հետվիրահատական շրջանում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է քույրական գործընթացի կազմակերպումը առավել հաճախ հանդիպող բնածին արատների և մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակների ժամանակ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ առավել հաճախ հանդիպող բնածին արատներ (գայլի երախ, նապաստակի շուրթ, սպինա բիֆիդա) ▪ մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, վիրաբուժական գործիքներ, վիրակապական, հականեխող նյութեր, բեկակալներ /շինա/, անհրաժեշտ պարագաներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, գործողությունների կատարման ալգորիթմներ, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքների մի մասն անցկացնել մանկական վիրաբուժական բաժանմունքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԲԺՇԿԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԵՎ ԴԵՈՆՏՈԼՈԳԻԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԱՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԱՏՈՄՈ-ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՆ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ, ՀՂԻՈՒԹՅԱՆ

ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-038
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) վերարտադրողական պրոցեսի փիլիսոփայությունը,բժշկական էթիկան և դեոնտոլոգիան մանկաբարձության մեջ, մասնագիտական հաղորդակցման առանձնահատկությունները, 2) ծննդօգնության իրականացնող բժշկական կազմակերպությունների կառուցվածքը, բժշկական օգնության դասակարգումն՝ ըստ 3 մակարդակի, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությունը, ներհիվանդանոցային վարակի կանխարգելումը ծննդօգնության իրականացնող բժշկական կազմակերպություններում, սանիտարահամաճարակային ռեժիմը: Մանկաբարձի դերը մայրության անվտանգության ապահովման, մոր և մանկան պերինատալ հիվանդացության և մահացության իջեցման գործում, դիսպանսեր հսկողությունը, խորհրդատվությունը, լուսավորչական և առողջապահական կրթական աշխատանքները: Նախաբժշկական օգնության հմտությունները, մասնագիտական ձևաթղթերի և ուղեգրերի լրացումը, 3) վերարտադրողական համակարգի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Կնոջ կյանքի տարբեր շրջանները և այդ փուլերում հիգիենային ներկայացվող պահանջները, դաշտանային ֆունկցիա, պարբերաշրջան և դաշտան, կնոջ կոնքի առանձնահատկությունները, 4) բեղմնավորման ֆիզիոլոգիան: Պտղի զարգացման ճգնաժամային փուլերը, հասուն և անհաս պտղի նշանները: Պտղի գլուխի առանձնահատկությունները՝ որպես ծննդաբերության օբյեկտ, նրա չափերը, 5) հղիության ընթացքում կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները: Հղիության վաղ և ուշ (I և II կես) շրջաններում հղիության ախտորոշումը: Մանկաբարձությունում առավել հաճախ կիրառվող հիմնական հասկացողությունները, բնորոշումները և հմտությունները: Հղի կնոջ սննդի և հիգիենայի վերաբերյալ խորհրդատվությունը:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 28 ժամ գործնական աշխատանք՝ 44 ժամ

Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնեի մանկածնման ֆունկցիայի փիլիսոփայությունը, էթիկան և դեոնտոլոգիան մանկաբարձության մեջ և մասնագիտական հաղորդակցման առանձնահատկությունները, 2. ներկայացնեի ծննդօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների կառուցվածքը, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությունը և սանիտարահամաճարակային ռեժիմը, նկարագրի մանկաբարձի դերը մայրության անվտանգության ապահովման մեջ, տիրապետի մոր և մանկան պերինատալ հիվանդացության և մահացության իջեցման գործողություններին, դիսպանսեր հսկողությանը, խորհրդատվությանը, լուսավորչական և առողջապահական կրթական աշխատանքներին, նախաբժշկական օգնության հմտություններին, մասնագիտական ձևաթղթերի և ուղեգրերի լրացմանը, 3. նկարագի վերարտադրողական համակարգի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, կնոջ կյանքի տարբեր շրջանները և նրանց հիգիենան, սահմանի դաշտանային ֆունկցիա, դաշտանային պարբերաշրջան, դաշտան հասկացությունները, նկարագրի կնոջ կոնքի առանձնահատկությունները 4. ներկայացնի բեղմնավորման ֆիզիոլոգիան, պտղի զարգացման ճգնաժամային փուլերը, հասուն և անհաս պտղի նշանները, պտղի գլխի առանձնահատկություններն ու նրա չափերը, 5. ներկայացնի հղիության ընթացքում կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, հղիության վաղ շրջանի (I կես) ախտորոշումը, այս շրջանին բնորոշ մանկաբարձական բնորոշումները, տիրապետի տերմիններին և հմտություններին, հղի կնոջ սննդի և հիգիենայի վերաբերյալ խորհրդատվությանը, 6. ներկայացնի հղիության ուշ (II կես) շրջանում ի հայտ եկող նշանները, հղիության ուշ շրջանի ախտորոշումը, տիրապետի հիմնական մանկաբարձական բնորոշումներին, տերմիններին և հմտություններին:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի կատարումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել մանկաբնման ֆունկցիայի փիլիսոփայությունը, էթիկային և դեոնտոլոգիային մանկաբարձության մեջ և մասնագիտական հաղորդակցման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մանկաբնման պրոցեսի փիլիսոփայությունը, էթիկայի և դեոնտոլոգիայի հիմունքները, 2) տիրապետում է հաղորդակցության ունակություններին հղիների, ծննդաբերների, ծննդկանների և նրանց հարազատների հետ շփման գործում, 3) տիրապետում է հաղորդակցության ունակություններին ծննդօգնության ստորաբաժանումներում աշխատող անձանց հետ շփման գործում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ մանկաբնման ֆունկցիայի փիլիսոփայության, բժշկական էթիկայի, դեոնտոլոգիայի առանձնահատկությունների, մասնագիտական հաղորդակցման առանձնահատկությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ցուցադրում է մասնագիտական հաղորդակցման ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ մանկաբարձության զարգացման վրա ազդող պատմական, գիտական, սոցիալական գործոնները, ▪ մանկաբարձի դերը հասարակության, ընտանիքի կյանքում: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերախաղեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ծննդօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների կառուցվածքը, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությունը և սանիտարահամաճարակային ռեժիմը, նկարագրել մանկաբարձի դերը մայրության անվտանգության ապահովման մեջ, տիրապետել մոր և մանկան պերինատալ հիվանդացության և մահացության իջեցման գործողություններին, դիսպանսեր հսկողությանը, խորհրդատվությանը, լուսավորչական և առողջապահական կրթական աշխատանքներին, նախաբժշկական օգնության հմտություններին, մասնագիտական ձևաթղթերի և ուղեգրերի լրացմանը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ծննդօգնության հիմնարկները, դրանց կառուցվածքն՝ ըստ բուժօգնության մակարդակի, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությանը, 2) տիրապետում է ծննդօգնության հիմնարկների սանիտարահամաճարակային ռեժիմին (խնամքի առարկաներին, գործիքների ախտահանման եղանակներին, սարքավորումների սանիտարական մշակմանը, ծննդատան տարբեր բաժանմունքների մաքրմանը, ձեռքերի մշակման եղանակներին), 3) տիրապետում է հղիների, ծննդկանների, գինեկոլոգիական հիվանդների պատրոնաժին (ակտիվ և պասիվ), 4) կատարում է լուսավորչական և քարոզչական կրթական աշխատանքներ, 5) տիրապետում է ռիսկի գործոնների հայտնաբերման և հնարավոր բարդությունների կանխարգելման աշխատանքներին, 6) ճիշտ է կատարում է խորհրդատվություն,հասակաչափում, կշռաչափում, զարկերակային ճնշման չափում երկու ձեռքից, անոթազարկի հաշվում, 7) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա մանկաբարձական հայելիներով դիտում, երկձեռք հետազոտություն, 8) ճիշտ է վերցնում ֆանտոմի վրա քսուք հետազոտության համար (U; V; C կետերից) և քսուք՝ ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք), 9) տիրապետում է նախաբժշկական օգնության հմտություններին, 10) ճիշտ է լրացնում մասնագիտական ձևաթերթերը, ուղեգրերը, գրառումները բժշկական փաստաթղթերում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ծննդօգնության հիմնարկների, դրանց կառուցվածքի,

	յուրաքանչյուր ստորորաբաժանման նշանակության, մոր և մանկան առողջության պահպանման գործում մանկաբարձի դերի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ցուցադրում է սանիտրարահամաճարակային ռեժիմի,անամնեզի հավաքման, ռիսկի գործոնների հայտնաբերման և հնարավոր բարդությունների կանխարգելման, դիսպանսեր հսկողության, խորհրդատվու թյան, լուսավորչական և առողջապահական կրթական աշխատանքների, նախաբժշկական օգնության, մասնագիտական ձևաթերթերի և ուղեգրերի լրացման վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ ծննդօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների կառուցվածքը, ▪ խնամքի առարկաների, գործիքների ախտահանման եղանակները, ▪ սարքավորումների սանիտարական մշակումը, ▪ ծննդատան տարբեր բաժանմունքների մաքրոումը ▪ ձեռքերի մշակման եղանակները, ▪ հղիների, ծննդկանների, գինեկոլոգիական հիվանդների պատրոնաժը (ակտիվ և պասիվ) ▪ մասնագիտական ձևաթերթերի, ուղեգրերի լրացումը , ▪ գրառումները բժշկական փաստաթղթերում, Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին (80%) և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր, հասակաչափ, ֆանտոմներ, անհրաժեշտ գործիքներ, մասնագիտական ձևաթերթեր, ուղեգրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է գինեկոլոգիական հիվանդների և նրանց հարազատների հետ հաղորդակցության ունակությունների, բժշկական էթիկայի և դեոնտոլոգիայի հիմունքների, լուսավորչական և քարոզչական կրթական աշխատանքների, գինեկոլոգիական հիվանդ ների դիսպանսեր հսկողության (ակտիվ և պասիվ պատրոնաժ), ռիսկի գործոնների հայտնաբերման ու հնարավոր բարդությունների կանխարգելման, նախաբժշկական օգնության, սանիտարահամաճարակային ռեժիմի, մասնագիտական ձևաթղթերի, ուղեգրերի ձևակերպման և լրացման, բժշկական փաստաթղթերում գրառումների վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ բժշկական էթիկային և դեոնտոլոգիայի հիմունքները գինեկոլոգիայում, ▪ գինեկոլոգիական հիվանդների դիսպանսեր հսկողությանը (ակտիվ և պասիվ պատրոնաժ), ▪ հաղորդակցության ունակությունները գինեկոլոգիական հիվանդների և նրանց հարազատների հետ շփման գործում, ▪ մասնագիտական ձևաթղթերի, ուղեգրերի ձևակերպումը և լրացումը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական

	հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ,բաժանողական նյութ, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել գինեկոլոգիական հիվանդների հետազոտման եղանակները և մանկաբարձուհու պարտականություններն այդ հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գինեկոլոգիական հիվանդների հետազոտման եղանակները (սուբյեկտիվ, օբյեկտիվ, գինեկոլոգիական, լրացուցիչ), 2) ճիշտ է ներկայացնում գինեկոլոգիական հիվանդների լրացուցիչ հետազոտման եղանակների ցուցումները, հակացուցումները, հնարավոր բարդությունները, 3) ճիշտ է հավաքում անամնեզ, 4) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները գինեկոլոգիական հետազոտության, 5) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա արտաքին սեռական օրգանների զննում, լվացում, 6) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 7) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա մեկձեռք, երկձեռք զննում, 8) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա ուղիղ-աղիքային (ռեկտալ) զննում, 9) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա ուղիղ-աղիք որովայնային (ռեկտոաբդոմինալ) զննում, 10) ճիշտ է վերցնում է քսուք հետազոտության համար (U; V; C; R) կետերից, 11) ճիշտ է վերցնում է քսուք՝ ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք), 12) ճիշտ է նախապատրաստում հիվանդին ձվարանների ֆունկցիոնալ ախտորոշման թեստերը իրականացնելու համար, 13) ճիշտ է բացատրում և կատարում ռեկտալ ջերմաչափում,

	14) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները արգանդի խոռոչի զոնդավորման համար, 15) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները արգանդի վզիկի և արգանդի խոռոչի լորձաթաղանթի ախտորոշիչ քերում կատարելու համար, 16) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները բիոպսիայի համար, 17) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները ասպիրացիոն բիոպսիայի համար, 18) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հեշտոցի հետին կամարի պունկցիայի համար, 19) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները էնդոսկոպիկ հետազոտությունների (կոլպոսկոպիա, հիս- տերոսկոպիա, լապարոսկոպիա), 20) ճիշտ է նախապատրաստում հիվանդին ռենտգենոլոգիական հետազոտությունների (գանգի ռենտգեն հետազոտություն, հիստերոսալպինգոգրաֆիա, մամոգրաֆիա), 21) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 22) ճիշտ է կատարում ուղեգրերի ձևակերպում և լրացում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, հետազոտություններին նախապատրաստման, արտաքին սեռական օրգանների զննման,մշակման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, մեկձեռք, երկձեռք զննման, ուղիղ-աղիքային (ռեկտալ), ուղիղ-աղիք որովայնային (ռեկտոաբդոմինալ) զննման, ռեկտալ ջերմաչափման, մանրէադիտակային հետազոտության համար քսուքի, ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք) քսուքի վերցման, պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները տարբեր հետազոտությունների համար նախապատրաստման, ուղեգրերի ձևակերպման և լրացման վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ սուբյեկտիվ հետազոտություն, ▪ օբյեկտիվ հետազոտությոուն, ▪ հետազոտման լրացուցիչ մեթոդներ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական

	հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ,բաժանողական նյութ, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ,պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել վերարտադրողական համակարգի զարգացման արատների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, մանկայնության (ինֆանտիլիզմ) առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, ներկայացնել սեռական օրգանների ոչ ճիշտ (անկանոն) դրությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում վերարտադրողական համակարգի (արտաքին սեռական օրգանների, հեշտոցի, արգանդի, արգանդափողերի, ձվարանների) զարգացման արատների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ճիշտ է ներկայացնում մանկայնությունը՝ ինֆանտիլիզմը, դրա առաջացման պատճառները, դասակարգումը (ընդհանուր և սեռական), ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) ճիշտ է ներկայացնում սեռական օրգանների ոչ ճիշտ (անկանոն) դրությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 4) ճիշտ է հավաքում անամնեզ, 5) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 6) ճիշտ է նախապատրաստվում հետազոտության՝ մշակում ձեռքերը, հագնում ձեռնոցներ, 7) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա արտաքին սեռական օրգանների զննում, լվացում, 8) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում,

	9) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա մեկձեռք, երկձեռք զննում, 10) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա ուղիղ-աղիքային (ռեկտալ) զննում, 11) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա ուղիղ-աղիք որովայնային (ռեկտոաբդոմինալ) զննում, 12) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 13) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի, 14) ճիշտ է կատարում անհրաժեշտ խորհրդատվություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, հետազոտություններին նախապատրաստման, արտաքին սեռական օրգանների զննման,մշակման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, մեկձեռք, երկձեռք զննման, ուղիղ-աղիքային (ռեկտալ), ուղիղ-աղիք որովայնային (ռեկտոաբդոմինալ) զննման, պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի համար նախապատրաստման, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ արտաքին սեռական օրգանների զարգացման արատներ, ▪ հեշտոցի զարգացման արատներ, ▪ արգանդի զարգացման արատներ ▪ արգանդափողերի և ձվարանների զարգացման արատներ, ▪ արգանդի անկանոն դրություններ, ▪ արգանդի ոլորում իր առանցքի շուրջը, ▪ արգանդի շրջոնք: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված

	հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ,բաճանողական նյութ, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ,պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել դաշտանային պարբերաշրջանի խանգարումների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, նյարդա-էնդոկրին համախտանիշների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դաշտանային պարբերաշրջանի խանգարումների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ճիշտ է ներկայացնում նյարդա-էնդոկրին համախտանիշների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) ճիշտ է հավաքում անամնեզ, 4) ճիշտ է չափում արյան ճնշումը, հաշվում անոթազարկը, 5) ֆանտոմի վրա ճիշտ է կատարում արտաքին սեռական օրգանների զննում, լվացում, 6) ֆանտոմի վրա ճիշտ է կատարում մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 7) ֆանտոմի վրա ճիշտ է կատարում երկձեռք զննում, 8) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար(արգանդի խոռոչի զոնդավորում, արգանդի խոռոչի լորձաթաղանթի ախտորոշիչ քերում և այլն), 9) ճիշտ է նախապատրաստում հիվանդին ձվարանների ֆունկցիոնալ ախտորոշման թեստերը իրականացնելու համար, 10) ճիշտ է բացատրում և կատարում ռեկտալ ջերմաչափում, 11) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 12) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները լապարոսկոպիկ հետազոտության, 13) ճիշտ է կատարում նախաբժշկական օգնություն արյունահոսությունների ժամանակ,

	14) ճիշտ է կատարում բժշկի նշանակումները, 15) ճիշտ է կատարում անհրաժեշտ խորհրդատվություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, հետազոտություններին նախապատրաստման, արտաքին սեռական օրգանների զննման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, երկձեռք զննման, ռեկտալ ջերմաչափման, զարկերակային ճնշման չափման, անոթազարկի հաշվման, պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հետազոտությունների համար նախապատրաստման, արյունահոսությունների ժամանակ նախաբժշկական օգնության, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ Ամենոռեա, ▪ հիպոմենստրուալ համախտանիշ, ▪ հիպերմենստրուալ համախտանիշ, ▪ դիսֆունկցիոնալ արգանդային արյունահոսություններ, ▪ ացիկլիկ արգանդային արյունահոսություններ, ▪ ցավոր դաշտան, ▪ նախա դաշտանային համախտանիշ, ▪ կլիմակտերիկ համախտանիշ, ▪ պոստկաստրացիոն համախտանիշ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ,բածանողական նյութ, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ,պաստառներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ՝ ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՈՉ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԲՈՐԲՈՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՊՏՂՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ, ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՈՒՌՈՒՑՔՆԵՐԸ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱՆՄԱՆ ԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԷՆԴՈՄԵՏՐԻՈԶԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-046
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողներին սովորեցնել. 1) սեռական օրգանների ոչ յուրահատուկ և յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառ- ները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) սեռական ճանապարհով փոխանցվող վարակները և դրանց դեպքում վերարտադրողական օրգանների ախտահարումը, 3) անպտղության առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 4) ընտանիքի պլանավորման հիմնական սկզբունքները, բեղմնականխման ժամանակակից եղանակները, նրանց կիրառումը, ցուցումները, հակացուցումները, առավելությունները և թերությունները, 5) սեռական օրգանների ուռուցքները և ուռուցքանման գոյացությունները: Սեռական օրգանների նախաքաղցկեղային, ֆոնային հիվանդությունների, բարորակ և չարորակ ուռուցքների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 6) էնդոմետրիոզի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 50 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Ֆիզիոլոգիական

	մանկաբարձություն» ՄԲԳ-5-13-038, ՄԲԳ-5-13-039 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի սեռական օրգանների ոչ յուրահատուկ և յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետի անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ, 2. ներկայացնի անպտղության առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետի անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ, 3. ներկայացնի ընտանիքի պլանավորման հիմնական սկզբունքները, բեղմնականխման ժամանակակից եղանակները, նրանց կիրառումը, ցուցումները, հակացուցումները, առավելություններն ու թերությունները, 4. ներկայացնի սեռական օրգանների ուռուցքները և ուռուցքանման գոյացությունները, սեռական օրգանների նախաքաղցկեղային հիվանդությունները, բարորակ և չարորակ նորագոյացությունների առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետի անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ, 5. ներկայացնի էնդոմետրիոզի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետի անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել սեռական օրգանների ոչ յուրահատուկ և յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սեռական օրգանների ոչ յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ճիշտ է ներկայացնում սեռական օրգանների յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման

	պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) ճիշտ է ներկայացնում սեռական ճանապարհով փոխանցվող վարակները և դրանց դեպքում վերարտադրողական օրգանների ախտահարումը, 4) ճիշտ է հավաքում անամնեզ, 5) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 6) ճիշտ է նախապատրաստվում հետազոտության՝ մշակում ձեռքերը, հագնում ձեռնոցներ, 7) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա արտաքին սեռական օրգանների զննում, 8) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 9) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա երկձեռք զննում, 10) ճիշտ է վերցնում քսուք մանրէադիտակային հետազոտության համար (U; V; C; R) կետերից, 11) ճիշտ է վերցնում նյութ մանրէաբանական հետազոտության համար, 12) ճիշտ է վերցնում քսուք՝ ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք), 13) ճիշտ է վերցնում քսուք և ուղարկում լաբորատորիա՝ միկրոբի զգայունությունը հակաբիոտիկների նկատմամբ որոշելու համար, 14) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հեշտոցի հետին կամարի պունկցիայի համար, 15) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները լապարոսկոպիկ հետազոտության, 16) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 17) ճիշտ է կատարում ուղեգրձևակերպում և լրացերի ում, 18) ճիշտ է կատարում բժշկի նշանակումները, 19) ճիշտ է կատարում անհրաժեշտ խորհրդատվություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, հետազոտություններին նախապատրաստման, արտաքին սեռական օրգանների զննման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, երկձեռք զննման, մանրէադիտակային հետազոտության համար քսուքի, ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք) քսուքի վերցման, մանրէաբանական հետազոտության համար նյութի

	վերցման,պացիենտին գերձայնային, լապարոսկոպիկ հետազոտությունների նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար նախապատրաստման, ուղեգրերի ձևակերպման և լրացման, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ գոնոռեա (սեռական օրգանների ստորին հատվածի, վերին հատվածի), պրովոկացիայի եղանակները, բուժվածության չափանիշները, ▪ սեռական օրգանների տրիխոմոնիազ, ▪ սեռական օրգանների կանդիդոզ, ▪ սեռական օրգանների խլամիդիդոզ, ▪ սեռական օրգանների սիֆիլիս, ▪ սեռական օրգանների տուբերկուլոզ, ▪ ՄԻԱՎ վարակ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, բաժանողական նյութեր, գործնական հմտությունների ալգորիթմեր, պաստառներ, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել անպտղության առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անպտղության բնորոշումը, առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,

	2) ճիշտ է հավաքում անամնեզ, 3) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 4) ճիշտ է նախապատրաստվում հետազոտության՝ մշակում ձեռքերը, հագնում ձեռնոցներ, 5) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա արտաքին սեռական օրգանների զննում, 6) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 7) ճիշտ է կատարում ֆանտոմի վրա երկձեռք զննում, 8) ճիշտ է նախապատրաստում հիվանդին ձվարանների ֆունկցիոնալ ախտորոշման թեստերը իրականացնելու համար, 9) ճիշտ է բացատրում և կատարում ռեկտալ ջերմաչափում, 10) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի, 11) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հիստերոսկոպիայի, 12) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները լապարոսկոպիկ հետազոտության, 13) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 14) ճիշտ է կատարում ուղեգրերի ձևակերպում և լրացում, 15) ճիշտ է կատարում բժշկի նշանակումները, 16) ճիշտ է կատարում անհրաժեշտ խորհրդատվություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, հետազոտություններին նախապատրաստման, արտաքին սեռական օրգանների զննման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, երկձեռք զննման, ռեկտալ ջերմաչափման, պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի, հիստերոսկոպիայի, լապարոսկոպիայի համար նախապատրաստման, ուղեգրերի ձևակերպման և լրացման, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ կանացի անպտղություն,

	▪ արական անպտղություն: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել ընտանիքի պլանավորման հիմնական սկզբունքները, բեղմնականխման ժամանակակից եղանակները, նրանց կիրառումը, ցուցումները, հակացուցումները, առավելություններն ու թերությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորման հիմնական սկզբունքները, ընտանիքի պլանավորման առավելությունները, առողջ հղիությունների միջև ժամանակահատվածը, 2) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորման բնական (օրացուցային, ստանդարտ օրերի, լակտացիոն ամենոռեայի) եղանակները, դրանց առավելությունները, թերությունները, անհրաժեշտ խորհրդատվությունը, 3) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորման ժամանակակից եղանակները, 4) ճիշտ է տիրապետում շտապ բեղմնականխման միջոցների վերաբերյալ գիտելիքներին և անհրաժեշտ խորհրդատվությանը, 5) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորման խորհրդատվությունը հետծննդյան շրջանում, 6) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորման խորհրդատվությունը հետաբորտային շրջանում, 7) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորման վերաբերյալ տղամարդկանց խորհրդատվության առանձնահատկությունները, 8) ճիշտ է ներկայացնում խորհրդատվության ‹‹ԲԱՆԱԼԻ›› մոդելը, 9) ճիշտ է կատարում մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 10) ճիշտ է կատարում երկձեռք զննում,

	11) ճիշտ է վերցնում է քսուք մանրէադիտակային հետազոտության համար, 12) ճիշտ է նախապատրաստում կնոջը և անհրաժեշտ գործիքները ներարգանդային պարույրի տեղադրման համար, 13) ճիշտ է նախապատրաստում կնոջը գերձայնային հետազոտության:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, երկձեռք զննման, մանրէադիտակային հետազոտության համար քսուքի վերցման, պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները ներարգանդային պարույրի տեղադրման համար նախապատրաստման, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ տղամարդկանց ներգրավումն ընտանիքի պլանավորման գործընթացին: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ, բեղմնականխման միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել սեռական օրգանների ուռուցքները և ուռուցքանման գոյացությունները, սեռական օրգանների նախաքաղցկեղային հիվանդությունները, բարորակ և չարորակ նորագոյացությունների առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սեռական օրգանների ուռուցքները և ուռուցքանման գոյացությունները,

	2) ճիշտ է ներկայացնում արտաքին սեռական օրգանների և հեշտոցի նախաքաղցկեղային հիվանդությունները, հեշտոցի քաղցկեղը, դրանց առաջացման պատճառները , ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) ճիշտ է ներկայացնում արգանդի վզիկի ֆոնային, նախաքաղցկեղային հիվանդությունները, արգանդի վզիկի քաղցկեղը, դրանց առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 4) ճիշտ է ներկայացնում էնդոմետրիումի ֆոնային և նախաքաղցկեղային հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 5) ճիշտ է ներկայացնում արգանդի բարորակ և չարորոկ նորագոյացությունները, դրանց դասասակարգումը առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 6) ճիշտ է ներկայացնում ձվարանների բարորակ և չարորոկ ուռուցքները,դրանց դասասակարգումը, առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 7) ճիշտ է հավաքում անամնեզ, 8) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 9) ճիշտ է նախապատրաստվում հետազոտության, 10) ճիշտ է կատարում արտաքին սեռական օրգանների զննում, 11) ճիշտ է կատարում մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 12) ճիշտ է կատարում երկձեռք զննում, 13) տիրապետում է հիվանդի խորհրդատվությանը՝մինչ բջջաբանական հետազոտությունը, 14) ճիշտ է նախապատրաստում հիվանդին բջջաբանական հետազոտության, 15) վերցնում է քսուք՝ ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք), 16) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները արգանդի խոռոչի զոնդավորման համար, 17) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները արգանդի վզիկի և արգանդի խոռոչի լորձաթաղանթի ախտորոշիչ քերում կատարելու համար, 18) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները բիոպսիայի համար, 19) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները ասպիրացիոն բիոպսիայի համար, 20) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները կոլպոսկոպիկ հետազոտության,

	21) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հիստերոսկոպիայի, 22) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հիստերոգրաֆիայի, 23) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները լապարոսկոպիկ հետազոտության, 24) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 25) ճիշտ է կատարում ուղեգրերի ձևակերպում և լրացում, 26) ճիշտ է կատարում բժշկի նշանակումները, 27) ճիշտ է կատարում անհրաժեշտ խորհրդատվություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, հետազոտություններին նախապատրաստման, արտաքին սեռական օրգանների զննման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, երկձեռք զննման, մանրէադիտակային հետազոտության համար քսուքի, ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք) քսուքի վերցման, պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հետազոտությունների համար նախապատրաստման, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ սեռական օրգանների ուռուցքները և ուռուցքանման գոյացությունները, ▪ արտաքին սեռական օրգանների և հեշտոցի նախաքաղցկեղային հիվանդությունները, հեշտոցի քաղցկեղը, դրանց առաջացման պատճառները , ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, ▪ արգանդի վզիկի ֆոնային, նախաքաղցկեղային հիվանդությունները, արգանդի վզիկի քաղցկեղը, դրանց առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, ▪ էնդոմետրիումի ֆոնային և նախաքաղցկեղային հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, ▪ արգանդի բարորակ և չարորոկ նորագոյացությունները, դրանց դասասկարգումը առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, ▪ ձվարանների բարորակ և չարորոկ ուռուցքները,դրանց դասասկարգումը, առաջացման պատճառները,

	ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, բաժանողական նյութեր, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ, պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել էնդոմետրիոզի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էնդոմետրիոզի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ճիշտ է հավաքում անամնեզ, 3) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 4) ճիշտ է նախապատրաստվում հետազոտության, 5) ճիշտ է կատարում արտաքին սեռական օրգանների զննում, 6) ճիշտ է կատարում մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 7) ճիշտ է կատարում երկձեռք զննում, 8) ճիշտ է կատարում ուղիղ-աղիք հեշտոցային (ռեկտովագինալ) զննում, 9) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 10) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները կոլպոսկոպիկ հետազոտության, 11) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հիստերոսկոպիայի, 12) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի,

	13) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները լապարոսկոպիկ հետազոտության:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, հետազոտություններին նախապատրաստման, արտաքին սեռական օրգանների զննման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, երկձեռք զննման,պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հետազոտությունների համար նախապատրաստման վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ էնդոմետրիոզի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, գործնական հմտությունների ալգորիթմեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ, պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ՝ ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅՈՒՄ, ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ, ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-047
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողներին սովորեցնել. 1) կրծքագեղձի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) անհետաձգելի օգնություն պահանջող գինեկոլոգիական հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,

	3) մանկական գինեկոլոգիայի սկզբունքները, աղջիկների սեռական օրգանների անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հետազոտման եղանակները, սեռական զարգացման խանգարումները, պատանեկան արգանդային արյունահոսությունները, սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները, 4) գինեկոլոգիական հիվանդների բուժման կոնսերվատիվ և վիրահատական եղանակները, նախապատրաստումը վիրահատության, հետվիրահատական խնամքը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 32 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն» ՄԲԳ-5-13-038, ՄԲԳ-5-13-039 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի կրծքագեղձի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2. ներկայացնի անհետաձգելի օգնություն պահանջող գինեկոլոգիական հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետի անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ, 3. ներկայացնի մանկական գինեկոլոգիայի սկզբունքները, աղջիկների սեռական օրգանների անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հետազոտման եղանակները, սեռական զարգացման խանգարումները, պատանեկան արգանդային արյունահոսությունները, սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները, 4. ներկայացնի գինեկոլոգիական հիվանդների բուժման կոնսերվատիվ և վիրահատական եղանակները, հիվանդի նախապատրաստումը վիրահատության, հետվիրահատական հիվանդների խնամքը:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել կրծքագեղձի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կրծքագեղձի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ճիշտ է հավաքում անամնեզ, 3) ճիշտ է կատարում կրծքագեղձերի զննում, շոշափում (կանգնած, նստած, պառկած դիրքերով), 4) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 5) ճիշտ է կատարում ուղեգրի ձևակերպում և լրացում մամոգրաֆիկ հետազոտության համար, 6) ճիշտ է կատարում ուղեգրի ձևակերպում և լրացում կրծքագեղձի պունկցիոն բիոպսիայի համար, 7) ճիշտ է կատարում անհրաժեշտ խորհրդատվություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, կրծքագեղձերի զննման, շոշափման (կանգնած, նստած, պառկած դիրքերով), պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, մամոգրաֆիկ հետազոտության, կրծքագեղձի պունկցիոն բիոպսիայի համար ուղեգրերիի ձևակերպման և լրացման, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ Մաստոպաթիա, ▪ կրծքագեղձի ֆիբրոադենոմա, ▪ կրծքագեղձի քաղցկեղ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված

	հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ,դերային խաղեր, բաժանողական նյութեր, գործնական հմտությունների ալգորիթմեր, պաստառներ, ֆանտոմներ, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել անհետաձգելի օգնություն պահանջող գինեկոլոգիական հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և ներկայացնել անհրաժեշտ հմտություններ տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում արտարգանդային հղիության առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ճիշտ է ներկայացնում ձվարանի ապոպլոքսիայի (կաթված) առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) ճիշտ է ներկայացնում ձվարանի ուռուցքի տոտիկի ոլորման առաջացման պատճառները, դասակարգումը, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 4) ճիշտ է ներկայացնում անհետաձգելի բուժօգնությունը արգանդի միոմայի, արգանդային արյունահոսությունների ժամանակ, 5) ճիշտ է հավաքում անամնեզ, 6) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 7) ճիշտ է նախապատրաստվում հետազոտության, 8) ճիշտ է կատարում արտաքին սեռական օրգանների զննում, 9) ճիշտ է կատարում մանկաբարձական հայելիների տեղադրում, դիտում, 10) ճիշտ է կատարում երկձեռք զննում, 11) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 12) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները հեշտոցի հետին կամարի պունկցիայի համար, 13) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները արգանդի խոռոչի քերում կատարելու համար, 14) ճիշտ է կատարում նախաբժշկական օգնություն արյունահոսության ժամանակ,

	15) ճիշտ է կատարում բժշկի նշանակումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, արտաքին սեռական օրգանների զննման, մանկաբարձական հայելիների տեղադրման, դիտման, երկձեռք զննման,պացիենտին գերձայնային հետազոտության նախապատրաստման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար նախապատրաստման, նախաբժշկական օգնության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ արտարգանդային հղիություն, ▪ ձվարանի ապոպլոքսիա (կաթված), ▪ ձվարանի ուռուցքի տոտիկի ոլորում, ▪ արգանդի միոմա, ▪ արգանդային արյունահոսություններ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ,դերային խաղեր, բաժանողական նյութեր, գործնական հմտությունների ալգորիթմեր, պաստառներ, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել մանկական գինեկոլոգիայի սկզբունքները, աղջիկների սեռական օրգանների անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հետազոտման եղանակները, սեռական զարգացման խանգարումները, պատանեկան արգանդային արյունահոսությունները, սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մանկական գինեկոլոգիայի սկզբունքները,աղջիկների սեռական օրգանների

	անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում աղջիկների հետազոտման առանձնահատկությունները, սեռական զարգացման խանգարումները, 3) ճիշտ է ներկայացնում պատանեկան արգանդային արյունահոսությունների առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 4) ճիշտ է ներկայացնում սեռական օրգանների բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, ախտրոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 5) ճիշտ է հավաքում անամնեզ, 6) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 7) ճիշտ է նախապատրաստվում հետազոտության, 8) ճիշտ է կատարում արտաքին սեռական օրգանների զննում, 9) վերցնում է քսուք մանրէադիտակային հետազոտության համար, 10) ճիշտ է կատարում ուղիղ-աղիք որովայնային (ռեկտոաբդոմինալ) զննում, 11) ճիշտ է նախապատրաստում հիվանդին ձվարանների ֆունկցիոնալ ախտորոշման թեստերը իրականացնելու համար, 12) ճիշտ է նախապատրաստում հիվանդին և գործիքները արգանդի խոռոչի քերում կատարելու համար, 13) ճիշտ է նախապատրաստում հիվանդին գերձայնային հետազոտության, 14) ճիշտ է կատարում բժշկի նշանակումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անամնեզի հավաքման, արտաքին սեռական օրգանների զննման, պացիենտին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար նախապատրաստման, քսուքի վերցման, ուղիղ-աղիք որովայնային (ռեկտոաբդոմինալ) զննման,պացիենտին գերձայ- նային հետազոտության նախապատրաստման, անհրաժեշտ խորհրդատվության վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ վաղ սեռական հասունացում,

	▪ ուշացած սեռական հասունացում, ▪ աղջիկների մոտ սեռական օրգանների բորբոքային հիվանդությունների առաջացմանը նպաստող գործոնները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ,դերային խաղեր, բաժանողական նյութեր, գործնական հմտությունների ալգորիթմեր, պաստառներ, անհրաժեշտ գործիքներ (մանկական գինեկոլոգիական հայելիներ), պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել գինեկոլոգիական հիվանդների բուժման կոնսերվատիվ և վիրահատական եղանակները, հիվանդի նախապատրաստումը վիրահատության, հետվիրահատական հիվանդների խնամքը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գինեկոլոգիական հիվանդների կոնսերվատիվ բուժման եղանակները, դրանց ցուցոմները, հակացուցումները, 2) ճիշտ է ներկայացնում կոնսերվատիվ բուժման համար անհրաժեշտ պարագաները, կատարման ընթացքը, 3) ճիշտ է ներկայացնում գինեկոլոգիական հիվանդների վիրահատական բուժման եղանակները, դրանց դասակարգումը, ցուցումները, հակացուցումները, հնարավոր բարդությունները, 4) ճիշտ է ներկայացնում վիրահատական բուժման համար անհրաժեշտ պարագաները, 5) ճիշտ է ներկայացնում նախա և հետվիրահատական շրջաններում անհրաժեշտ հետազոտությունները, 6) ճիշտ է նախապատրաստումը հիվանդին վիրահատության, 7) ճիշտ է կատարում հիվանդի խնամքը հետվիրահատական շրջանում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է պացիենտին և անհրաժեշտ գործիքները

	նախա և հետվիրահատական շրջաններում հետազոտության համար նախապատրաստման, հիվանդին վիրահատության նախապատրաստման, հետվիրահատական շրջանի խնամքի, դիետայի վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ գինեկոլոգիական պրակտիկայում կիրառվող անզգայացման մերթդները, ▪ գինեկոլոգիական հիվանդների կոնսերվատիվ բուժման եղանակները, ▪ գինեկոլոգիական հիվանդների վիրահատական բուժման եղանակները, ▪ հետվիրահատական շրջանի բարդությունների կանխարգելումը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական, մեթոդական և տեղեկատու գրականություն, մշակված հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, բաժանողական նյութեր, պաստառներ, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-048
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) վարակ, վարակի տարածման գործընթաց, վարակիչ հիվանդություն, համաճարակային գործընթաց հասկացությունները, համաճարակաբանական ծառայության հիմունքները, վարակիչ հիվանդությունների հիմնական հատկությունները, համաճարակաբանական առանձնահատկությունները, կլինիկական դրսևորումները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները, կանխարգելումը, 2) հավաքել կենսաբանական նյութ լաբորատոր հետազոտության համար, վարակի օջախում կազմակերպել հակահամաճարակային միջոցառումներ, ապահովել պացիենտի և բուժքրոջ անվտանգությունը վարակից,

	իրականացնել, 3) փաստագրել քույրական գործընթացի փուլերը վարակիչ հիվանդությունների ժամանակ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մանրէաբանություն, «Վիրուսաբանություն և իմունաբանություն» ՄԲԳ-5-13-013, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի վարակիչ հիվանդությունների ընդհանուր ախտաբանությունը, էպիդեմիոլոգիայի և վարակազերծման հիմունքները, 2. բացատրի ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման և լաբորատոր հետազոտության եղանակները, ներկայացնի կլինիկական ախտանիշները և համախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները, 3. տեսակավորի աղիքային ինֆեկցիաներն ըստ էթիոլոգիայի և էպիդեմիոլոգիայի, նկարագրի կլինիկական առանձնահատկությունները, բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները, հակահամահամաճարակային միջոցառումները օջախում, 4. տարբերակի անտրոպոնոզ ինֆեկցիաներն ըստ էթիոլոգիայի և էպիդմիոլոգիայի, նկարագրի կլինիկական առանձնահատկությունները, բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները, հակահամահամաճարակային միջոցառումները օջախում, 5. տարբերակի զոոնոզ ինֆեկցիաները ըստ էթիոլոգիայի և էպիդմիոլոգիայի, նկարագրի կլինիկական առանձնահատկությունները բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները, հակահամահամաճարակային միջոցառումները օջախում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել վարակիչ հիվանդությունների ընդհանուր ախտաբանությունը, էպիդեմիոլոգիայի և վարակազերծման

	հիմունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում պաթոգեն, պայմանական պաթոգեն մանրէները, նրանց գործոնները, սահմանում ինֆեկցիա, ինֆեկցիոն պրոցես և հիվանդություն հասկացությունները, առանձնահատկությունները, շրջանները և դասակարգումը, 2) ճիշտ է նկարագրում էպիդեմիկ պրոցեսը, դրա երեք օղակները, արտահայտման ձևերը, կազմակերպում հակաէպիդեմիկ միջոցառումները վարակի օջախում, 3) ճիշտ է բացատրում դեզինֆեկցիա, դեզինսեկցիա, դեռատիզացիա հասկացությունները, դրանց տեսակները և ներկայացնում դեզինֆեկցող միջոցների կիրառումը, կատարում ընթացիկ և եզրափակիչ վարակազերծում, 4) ճիշտ է սահմանում իմունիտետը, դրա տեսակները, տարբերակում պասսիվ և ակտիվ իմունիզացիան, ներկայցնում պրոֆիլակտիկ պատվաստումների կարգը, պատվաստանյութերի հետ վարվելու հիմնական սկզբունքները, հետպատվաստումային բարդությունները, կատարում պատվաստում և գնահատում արդյունքները, 5) ճիշտ է նկարագրում ինֆեկցիոն հիվանդությունները մասնագիտացված օգնության կազմակերպումը, լրացնում համապատասխան փաստաթղթերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է դեզինֆեկցող լուծույթների պատրաստման, կիրառման, ընթացիկ և եզրափակիչ վարակազերծման, պատվաստանյութերի հետ վարվելու հիմնական սկզբունքների, պատվաստումների կատարման, արդյունքների գնահատման, վարակի օջախում հակաէպիդեմիկ միջոցառումների կազմա կերպման, համապատասխան փաստաթղթերի լրացցման վերաբերյալ ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ▪ պաթոգեն, պայմանական պաթոգեն մանրէները, նրանց գործոնները, սահմանում ինֆեկցիա, ինֆեկցիոն պրոցես և հիվանդություն հասկացությունները, առանձնահատկությունները, շրջանները և դասակարգումը, ▪ էպիդեմիկ պրոցեսը, դրա երեք օղակները, արտահայտման ձևերը, կազմակերպում հակաէպիդեմիկ միջոցառումները վարակի օջախում, ▪ դեզինֆեկցիա, դեզինսեկցիա, դեռատիզացիա հասկացությունները, դրանց տեսակները և ներկայացնում

	դեզինֆեկցող միջոցների կիրառումը, կատարում ընթացիկ և եզրափակիչ վարակազերծում, ▪ իմունիտետը, դրա տեսակները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, հարցաշարեր, թեստեր, գործիքներ,լաբորատոր սարքեր, անհրաժեշտ պարագաներ, պաստառներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Բացատրել ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման և լաբորատոր հետազոտության եղանակները, ներկայացնել կլինիկական ախտանիշներ և համախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ինֆեկցիոն հիվանդներից կլինիկական և էպիդեմիոլոգիական անամնեզի հավաքումը, լաբորատոր հետազոտության եղանակները, ախտաբանական նյութի վերցման կարգը, հավաքում էպիդեմիոլոգիական անամնեզը, վերցնում ախտաբանական նյութ լաբորատոր հետազոտության համար, ցուցադրում քսուկի պատրաստումը և ցանքսի տեխնիկան, 2) ճիշտ է բացատրում ինֆեկցիոն հիվանդությունների կլինիկական հատկանիշները և համախտանիշները, 3) ճիշտ է նկարագրում ինֆեկցիոն հիվանդությունների բուժման սկզբունքները և խնամքի առանձնահատկությունները, կազմակերպում հիվանդի խնամքը և սնուցումը, 4) ճիշտ է իրականցնում և փաստագրում քույրական գործընթացի փուլերը վարակիչ հիվանդությունների ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է կլիկլինիկական և էպիդեմիոլոգիական անամնեզի հավաքման, լաբորատոր հետազոտության համար ախտաբանական նյութի վերցման, քսուկի պատրաստման և ցանքսի տեխնիկայի,հիվանդների խնամքի և սնուցման, քույրական գործընթացի փուլերի իրականացման վերաբերյալ ուսանողի ձեռք բերած ունակությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.

	▪ ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշումը, լաբորատոր հետազոտության եղանակները, կլինիկական ախտանիշները և համախտանիշները, բուժման սկզբունքները և խնամքի առանձնահատկությունները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, հարցաշարեր, թեստեր, գործնական հմտությունների կատարման ալգորիթմեր, գործիքներ,լաբորատոր սարքեր, անհրաժեշտ պարագաներ, պաստառներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում կոկորդի կլինիկական անատոմիան և ֆիզիոլոգիան, բացատրում և ցուցադրում հետազոտման եղանակները, 2) ճիշտ է բացատրում կոկորդի հիվանդությունները, էթիոլոգիան, պաթոգենեզը, ախտանիշները, բարդությունները, բուժման սկզբունքները, կատարում բուժքույրական մանիպուլիացիաները, իրականացնում նախաբժշկական անհետաձգելի օգնությունը կոկորդի վնասվածքների, հիվանդությունների և օտար մարմինների ժամանակ, 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը կոկորդի հիվանդությունների ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է կոկորդի հիվանդություններ ժամանակ պացիենտի զննման, հետազոտման, տեղային բուժման, խնամքի, մինչբժշկական օգնության և քույրական գործընթացի իրականացման համար ունակությունները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հմտությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, իրավիճակային խնդիրներ,հարցաշարեր, բուժքույրական միջամտությունների կատարման ալգորիթմեր, պաստառներ, մուլյաժներ, բաժանողական նյութեր, գործնական հմտությունների ալգորիթմեր, գործիքներ, տեղային բուժման համար անհրաժեշտ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Բացատրել քույարկան խնամքը ականջի հիվանդությունների ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում ականջի կլինիկական անատոմիան և ֆիզիոլոգիան, բացատրում և ցուցադրում հետազոտման եղանակները, 2) ճիշտ է բացատրում ականջի հիվանդությունները, էթիոլոգիան, պաթոգենեզը, ախտանիշները, բարդությունները, բուժման սկզբունքները, կատարում բուժքույրական մանիպուլիացիաները, իրականացնում նախաբժշկական անհետաձգելի օգնությունը ականջի վնասվածքների, հիվանդությունների և օտար մարմինների ժամանակ, 3) ճիշտ է իրականացնում քույրական գործընթացը ականջի հիվանդությունների ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է ականջի հիվանդությունների ժամանակ պացիենտի զննման, հետազոտման, տեղային բուժման, խնամքի, մինչբժշկական օգնության և քույրական գործընթացի իրականացման համար ուսանողի ձեռք բերած ունակությունները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հմտությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, իրավիճակային խնդիրներ,հարցաշարեր, բուժքույրական միջամտությունների կատարման ալգորիթմեր, պաստառներ, մուլյաժներ, բաժանողական նյութեր, գործնական հմտությունների ալգորիթմեր, գործիքներ, տեղային բուժման համար անհրաժեշտ պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-054
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ տեսական գիտելիքներ և գործնական ունակություններ, որոնց օգնությամբ ուսանողաը կկարողանա կանխարգելել աչքի հիվանդությունների առաջացումը, ճանաչել առավել հաճախ հանդիպող ակնաբանական պաթոլոգիաները, ցուցաբերել անհետաձգելի ակնաբուժական օգնություն:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. նկարագրի տեսողական օրգանի կառուցվածքը և ֆունկցիաները, բացատրել կլինիկական ռեֆրակցիան, դրա հետազոտման եղանակները և բուժման սկզբունքները, 2. նկարագրի աչքի օժանդակ ապարատի, շաղկապենու, եղջերաթաղանթի, անոթաթաղանթի հիվանդությունները, հետազոտման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները, 3. նկարագրի աչքի ցանցաթաղանթի, տեսողական նյարդի, ոսպնյակի հիվանդությունները, գլաուկոման, դրանց հետազոտման, բուժման, խնամքի սկզբունքները և տեսողական օրգանի վնասվածքները, անհետաձգելի օգնությունը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Նկարագրել տեսողական օրգանի կառուցվածքը և ֆունկցիաները, բացատրել կլինիկական ռեֆրակցիան, դրա

	հետազոտման եղանակները և բուժման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տեսողական օրգանի կառուցվածքը և ֆունկցիաները, 2) ճիշտ է բացատրում ռեֆրակցիա և ակոմոդացիա հասկացությունները, նրանց խանգարման տեսակները, կատարում շտկում և ակնոցների ընտրություն, 3) ճիշտ է ներկայացնում և կատարում տեսողական օրգանի հետազոտման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է տեսողական ֆունկցիաների հետազոտման մեթոդները, ռեֆրակցիայի որոշման սուբյեկտիվ եղանակի ալգորիթմը, ակնոցների ընտրությունը , աչքի հիվանդություններով տառապող հիվանդների հետազոտման, տեղային բուժման և խնամքի հիմնական մեթոդները: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ կարճատեսություն և հղիություն: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման ալգորիթմներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, տեսաֆիլմ, աչքի մուլյաժ, պաստառներ, օպտիկական ապակիների հավաքածու, Ռոտի ապարատ, տեսողության սրությունը որոշելու աղյուսակներ, պերիմետր, ակնադիտակ, Մակակովի տոնոմետր, տեղային բուժման համար անհրաժեշտ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Նկարագրել աչքի օժանդակ ապարատի, շաղկապենու, եղջերաթաղանթի, անոթաթաղանթի հիվանդությունները, հետա -զոտման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում աչքի օժանդակ ապարատի հիվանդությունները, կատարում անհրաժեշտ

	հետազոտությունները, իրականացնում բուժումն ու խնամքը, 2) ճիշտ է բացատրում շաղկապենու, եղջերաթաղանքի, անոթաթաղանքի հիվանդությունները, կատարում անհրաժեշտ հետազոտությունները, իրականացնում բուժումն ու խնամքը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է կոպերի, արցունքային և ակնաշարժ ա - պարատների օրբիտայի, շաղկապենու, եղջերաթաղանթի, սկլերայի, անոթաթաղանթի հիվանդությունների ժամանակ առաջին բուժ օգնության, բուժման, խնամքի ձեռք բերած ունակությունները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման և առաջին բուժօգնության ցուցաբերման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, աչքի մուլյաժ: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել աչքի կլինիկաներում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Նկարագրել աչքի ցանցաթաղանթի, տեսողական նյարդի, ոսպնյակի հիվանդությունները, գլաուկոման, դրանց հետազոտման, բուժման, խնամքի սկզբունքները և տեողական օրգանի վնասվածքները, անհետաձգելի օգնությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում աչքի ցանցաթաղանթի, տեսողական նյարդի, ոսպնյակի հիվանդությունները, կատարում անհրաժեշտ հետազոտությունները, իրականացնում բուժումն ու խնամքը, 2) ճիշտ է բացատրում գլաուկոման, կատարում անհրաժեշտ հետազոտությունները, կատարում բուժումն ու խնամքը, 3) ճիշտ է բացատրում տեսողական օրգանի վնասվածքները, ցուցաբերում անհետաձգելի օգնություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է ցանցաթաղանթի, տեսողական նյարդի,

	ոսպնյակի հիվանդությունների, գլաուկոմայի, աչքի վնասվածքների ժամանակ հիվանդների զննման, տեսողական ֆունկցիաների հետազոտման, տեղային բուժման, մինչբժշկական օգնության և քույրական գործընթացի իրականացման համար ունա - կությունները: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ աչքի ցանցաթաղանթի հիվանդություններ և հղիություն: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում են ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, բժշկական միջամտությունների կատարման և առաջին բուժօգնության ցուցաբերման համար անհրաժեշտ պարագաներ, գունավոր սլայդներ, պատկերազարդ ատլասներ, ուսումնական տեսանյութեր: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել աչքի կլինիկաներում, կազմակերպել հիվանդների ցուցադրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-055
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) սահմանային վիճակների տեսակները և հիմանական ախտանիշները, ինֆուզիոն թերապիայի հիմունքները, տրանսֆուզիոլոգիայի հիմունքները, սուր սիրտ-անոթային անբավարարության, սուր շնչառական անբավարարության, շոկային վիճակների, էկզոգեն թունավորումների ռիսկի գործոնները, կլինիկական դրսևորումները և դրանց զարգացման կանխարգելումը, 2) վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքի հիվանդի խնամքի քույրական գործընթացը, 3) վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքում կատարվող քույրական միջամտությունները, ինչպես նաև առաջին բուժօգնությունը անհետաձգելի իրավիճակների դեպքում:
Մոդուլի տևողությունը	90 ժամ տեսական ուսուցում՝ 30 ժամ

	գործնական աշխատանք՝ 60 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Դեղաբանություն» ՄԲԳ-5-13-014, ՄԲԳ-5-13-015, ՄԲԳ-5-13-016, «Աղետների բժշկություն» ՄԲԳ-5-13-020 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի ռեանիմատոլոգիա գիտությունը, տա գաղափար սահմանային վիճակների և կենսաբանական մահվան մասին, էֆթանազիա հասկացությունը, օրգանիզմի հոմեոսթազը, ինֆուզիոն թերապիան, 2. ներկայացնի սուր սիրտ-անոթային անբավարարությունը, տա սահմանումը, նկարագրի սրտամկանի ինֆարկտը և դրա բարդությունները, 3. ներկայացնի սուր շնչառական անբավարարությունը, տա սահմանումը, աստիճանները, անհետաձգելի օգնության և բուժօգնության հիմունքները, աստմատիկ վիճակը, ախտաբանական շնչառության հիմնական տիպերը, 4. ներկայացնի շոկերը և սուր էկզոգեն թունավորումները, 5. բացատրի կոմաները, տա սահմանումը և դասակարգումն ըստ կենտրոնական նյարդային համակրգի ախտահարման, ինտենսիվ թերապիան՝ պրեէկլամպսիայի, էկլամպսիայի, ամնիոտիկ էմբոլիայի, նորածնային ասֆիքսիայի ժամանակ, 6. բացատրի անեսթեզիոլոգիական ծառայությունը, ժամանակակից անեսթեզիայի բաղադրամասերնը և նրա վարման առանձնահատկությունները մանկաբարձությունում, նկարագրի ինտենսիվ թերապիայի առանձնահատկությունները, մանկական վերակենդանացման ինտենսիվ թերապիայի բաժանմունքը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել ռեանիմատոլոգիա գիտությունը, տալ գաղափար սահմանային վիճակների և կենսաբանական մահվան մասին, էֆթանազիայի հասկացությունը, օրգանիզմի հոմեոսթազը ինֆուզիոն թերապիան

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում ռեանիմատոլոգիա գիտությունը, բացատրում վերակենդանացման միջոցառումները նկարագրում սահմանային վիճակները, կլինիկական մահվան կենսաբանական մահվան նշանները, 2) ճիշտ է կատարում սիրտ-թոքային վերակենդանացման միջոցառումների հերթականությունը մեծահասակների, տարբեր տարիքի երեխաների մոտ, գնահատում արդյունավետությունը, արձանագրում կենսաբանական մահը, 3) ճիշտ է սահմանում օրգանիզմի հոմեոստազը, բացատրում այն ապահովող հիմնական գործոնները, նկարագրում ինֆուզիայի նպատակը, սահմանում ինֆուզիոն թերապիա հասկացությունը, ներմուծման ուղիները, թվարկում կիրառվող հիմնական լուծույթները, իրականացնում ինֆուզիայի հսկողությունը կլինիական և լաբորատոր տվյալներով, 4) ճիշտ է կատարում ներերակային կաթետրի ֆիքսումը, կաթիլայինի գործածումը, շիթային ներարկումները, կաթետրի հեռացումը, տեսակավորում բարդությունները, կանխում դրանք և գնահատում արդյունավետությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է միայնակ (երկուսով) սիրտ-թոքային վերակենդանացման միջոցառումների հերթականությունը մեծահասակների, տարբեր տարիքի երեխաների մոտ, գնահատում է արդյունավետությունը, արձանագրում կենսաբանական մահը, ճիշտ է կատարում ներերակային կաթետերի ֆիքսումը, կաթիլայինի գործածումը, շիթային ներարկումները, ներերակային կաթետերի հեռացումը ըստ գործողությունների մշակված ալգորիթմների, տեսակավորում է բարդությունները, կանխում դրանք և գնահատում արդյունավետությունը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե գործողությունները կատարվում է ճիշտր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, մեթոդական և տեղեկատու գրականություն,գործնական հմտության ալգորիթմեր, անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, թեմատիկ ցուցապաստառներ, տեսասկավառակ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 4 ժամ գործնական աշխատանք 18 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել սուր սիրտ-անոթային անբավարարությունը, տալ սահմանումը, նկարագրել սրտամկանի ինֆարկտը և դրա բարդությունները

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում սուր սիրտ-անսոթային անբավարարությունը, պատճառները, նկարագրում սրտամկանի ինֆարկտը, դրա բարդությունները, գնահատում ինտենսիվ թերապիայի արդյունավետությունը, 2) ճիշտ է կատարում սիրտ-թոքային վերակենդանացումը, դեղորայքային խթանումը և գործածում դեֆիբրիլյատորը, կարդիոմոնիտորը, էլեկտրասրտագիրը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է միայնակ (և երկուսով) սիրտ-թոքային վերակենդանացման միջոցառումների հերթականությունը և դեղորայքային խթանումը մեծահասակների մոտ, գնահատում է դրանց արդյունավետությունը: Ճիշտ է տեղադրում դեֆիբրիլյատորի էլեկտրոդները մանեկենի կրծքավանդակին, պահպանում է անվտանգության նորմերը, ֆիքսում է կարդիոմոնիտորի դերմալ էլեկտրոդները մանեկենի(կամ պացիենտի) կրծքավանդակին, միացնում սարքը, ստուգում ազդանշանային համակարգը, ֆիքսում է ԷՍԳ (էլեկտրա - սրտագիր) էլեկտրոդները մանեկենի (կամ պացիենտի) վերջույթներին և կրծքավանդակին, միացնում է ԷՍԳ սարքը, Ճանաչում է նորմալ ԷՍԳ ատամիկները, ԷՍԳ գրանցման ժամանակ առաջացող շեղումները, կատարում է անհրաժեշտ շտկումները, իրականացնում է հիվանդի վիճակի հսկողության ոչինվազիվ ձևերի (ԷՍԳ, կարդիոմոնիտորինգ) արդյունավետության գնահատում: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե գործողությունները կատարվում են ճիշտ հերթականությամբ, նորմալ գործածման հմտության զարգացումով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, մեթոդական և տեղեկատու գրականություն,գործնական հմտության ալգորիթմեր,անհրաժեշտ ուսումնա -դիտողական պարագաներ, թեմատիկ ցուցապաստառներ, տեսասկավառակ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 4 ժամ գործնական աշխատանք 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել սուր շնչառական անբավարարությունը, տալ սահմանումը, աստիճանները, անհետաձգելի օգնության և բուժօգնության հիմունքները, աստմատիկ վիճակը, ախտաբանական շնչառության հիմնական տիպերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում սուր շնչառական անբավարարութունը, դասակարգումը, ներկայացնում կլինիկական

	նշանները, սուր շնչառական անբավարարության աստիճանները, 2) ճիշտ է սահմանում լարինգոսպազմը, բրոնխոսպազմը, բացատրում անհետաձգելի բուժօգնության սկզբունքները, 3) ճիշտ է տեսակավորում և նկարագրում ասթմատիկ վիճակի ձևերը, ախտաբանական շնչառության տեսակները, 4) ճիշտ է գնահատում սուր շնչառական անբավարարությամբ հիվանդի վիճակը, կիրառում էլեկտրական մեխանիական ասպիրատորներ, օդատարներ, ամբու-շնչապարկ, ինտուբացիոն խողովակներ, տրախեոստոմիկ փողրակը, 5) ճիշտ է իրականցնում ինտուբացված և տրախեոստոմայի ենթարկված հիվանդի խնամքը, հաղորդակցումը, գործածում քթային կաթետր, թթվածնային դիմակ, պուլսօքսիմետրը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է և գնահատում սուր շնչական անբավարարությամբ հիվանդի վիճակը, կիրառում է էլեկտրական և մեխանիական ասպիրատորները քթի և բերանի խոռոչի սանացիայի համար, ընտրում է արտածծման կաթետերների տեսակը, ճիշտ է փակում հսկիչ անցքը, ճիշտ է տեղադրում քիթ-ըմպանային և բերան-ըմպանային օդատարները գլուխ մանեկենի վրա, ճիշտ է կիրառում ամբու-շնչապարկը արհեստական շնչառություն կատարելիս, տարբերակում է ինտուբացիոն խողովակները, ներկայացնում է օրոտրախեալ և նազոտրախեալ ինտուբացիայի ցուցումները և հավաքում ինտուբացիային անհրաժեշտ գործիքների հավաքակազմը, իրականացնում է ամբու-շնչապարկով աուսկուլտացիայով ստուգումը, կատարում է ինտուբացիոն խողովակի սանացիան, մածուցիկ սեկրետի ջրիկացումը, հաղորդակցվում է ինտուբացված պարզ գիտակցությամբ հիվանդի հետ վերբալ և ոչ վերբալ ձևերով, կատարում է ինտուբացիոն խողովակի կպչուն սպեղանու փոխում և կատարում է էքստուբացիա, տարբերակում է տրախեոստոմիկ փողրակները, կատարում է տրախեոստոմիկ փողրակի կանյուլաների սանացիան, տարբերակում է շնչական կոնտուրի մաս կազմող արհեստական շնչական սարքի/ԱՇՍ/ օժանդակ սարքավորումները, ճիշտ է իրականցնում ինտուբացված և տրախեոստոմայի ենթարկված հիվանդի մաշկի, բերանի խոռոչի խնամքը, հաղորդակցումը, իրականացնում է ԱՇՍ-ին միացված հիվանդի խնամքի որոշ

	գործողություններ՝ ՎԻԹ բաժանմունքի բուժքրոջ օգնությամբ: Ճիշտ է գործածում թթվածնային քթային կաթետերը, թթվածնային դիմակը և պուլսօքսիմետրը: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե գործողությունները կատարվում են ճիշտ հերթականությամբ, նորմալ գործածման հմտության զարգացումով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, մեթոդական և տեղեկատու գրականություն,գործնական հմտության ալգորիթմեր,անհրաժեշտ ուսումնա -դիտողական պարագաներ, թեմատիկ ցուցապաստառներ, տեսասկավառակ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 4 ժամ գործնական աշխատանք 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել շոկերը և սուր էկզոգեն թունավորումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում շոկ հասկացությունը, նշում դասակարգումը և հիմնական կլինիկական նշանները, ներկայացնում ինտենսիվ թերապիայի հիմնական սկզբունքները և հսկողության հիմնական ցուցանիշները, 2) ճիշտ է նկարագրում հիպովոլեմիկ շոկը, դրա փուլերը, հիմական կլինիկական նշանները, կատարում անհետաձգելի բուժ օգնություն կոտրվածքների, արյունահոսությունների ժամանակ, իրականացնում ինտենսիվ թերապիայի ճիշտ հաջորդականությունը, 3) ճիշտ է նկարագում այրվածքային հիվանդությունը, այրվածքային շոկի առանձնահատկությունները, կատարում ինտենսիվ թերապիայի հաջորդականությունը, ինտենսիվ հսկողությունը, 4) ճիշտ է սահմանում էլեկտրահարությունը, նկարագրում տեղային և ընդհաուր նշանները, կատարում անհետաձգելի և բուժօգնությունները, 5) ճիշտ է սահմանում անաֆիլակտիկ և սեպտիկ շոկերը, նկարագրում հիմնական կլինիկական նշանները, իրականացնում ինտենսիվ թերապիայի նշանակումները ճիշտ հաջորդականությամբ, գնահատում այդ հիվանդների հիմանական կենսական ցուցանիշները, 6) ճիշտ է սահմանում թունաբանություն, թունավորում, թույն հասկացությունները, նկարգրում ինտենսիվ թերապիայի հիմանկան սկզբունքները տարբեր թունավորումների ժամանակ, ներկայվցնում բոտուլիզմը և օձի խայթոցները, հիմնական կլինիկական նշանները, ցուցաբերում առաջին օգնությունը, կատարում ինտենսիվ

	թերապիայի ճիշտ հաջորդականությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը մանեկենի վրա ներկայացնում է առաջնային զննում և անհետաձգելի բուժ օգնություն կոտրվածքների, արյունահոսությունների ժամանակ, իրականացնում ինտենսիվ թերապիայի ճիշտ հաջորդականությունը (պերիֆերիկ երակի կաթետերացում,կաթիլային համակարգի միացում, շիթային ներմուծում կաթիլայինից և կաթետերից-ձեռք մուլյաժի վրա/, կատարում անհետաձգելի բուժօգնությունները/քիթըմպանի, բերանի խոռոչի սանացիա, օդատարների կիրառում, ինտուբացիոն խողովակի սանացիա,թթվածնային կաթետերների,դիմակների, կիրառում, ստամոքսի զոնդավորում), իրականացնում ինտենսիվ թերապիայի նշանակումները ճիշտ հաջորդականությամբ, գնահատում է այդ հիվանդների հիմանական կենսական ցուցանիշները կարդիոմոնիտորի, պուլսօքսիմետրի օգնությամբ: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե գործողությունները կատարվում են ճիշտ հերթականությամբ, նորմալ գործածման հմտության զարգացումով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, մեթոդական և տեղեկատու գրականություն,գործնական հմտության ալգորիթմեր,անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, քույրական թերթիկ, թեմատիկ ցուցապաստառներ, տեսասկավառակ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 8 ժամ գործնական աշխատանք 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Բացատրել կոմաները, տալ սահմանումը և դասակարգումն ըստ կենտրոնական նյարդային համակրգի ախտահարման, ինտենսիվ թերապիան պրեէկլամպսիայի, էկլամպսիայի, ամնիոտիկ էմբոլիայի, նորածնային ասֆիքսիայի ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում կոմա հասկացությունը, ներկայացնում դասակարգումը ըստ կենտրոնական նյարդային համակարգի ախտահարման, 2) ճիշտ է սահմանում մետաբոլիկ տոքսիկ կոմաներ, նեվրոլոգիական կոմաներ, ներկայացնել Գլազգոյի սանդղակը,

	3) ճիշտ է սահմանում պրեէկլամպսիան, էկլամպսիան, էկլամպսիկ ստատուս հասկացողությունը,ամնիոտիկ էմբոլիան, 4) ճիշտ է ներկայացնում պրեէկլամպսիայի, էկլամպսիայի, ,ամնիոտիկ էմբոլիայի կլինիկան, 5) ճիշտ է կատարում անհետաձգելի օգնություն տեղում, 6) ճիշտ է տիրապետում ինտենսիվ թերապիայի հիմնական սկզբունքներին, 7) ճիշտ է ներկայացնում նորածնի ասֆիքսիան, Ապգարի սանդղակը, 8) ճիշտ է կատարում նորածինների մոտ սիրտ-թոքային վերակենդանացումը, 9) ճիշտ է տիրապետում ինտենսիվ թերապիայի հիմունքներին նորածինների վերակենդանացման գործում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը երեխա մանեկենի վրա ներկայացնում է նորածնի առաջնային զննում և սիրտ-թոքային վերակենդանացում, իրականացնում ինտենսիվ թերապիայի ճիշտ հաջորդականությունը(պերիֆերիկ երակի կաթետերացում,կաթիլային համակարգի միացում, շիթային ներմուծում կաթիլայինից և կաթետերից-ձեռք մույլաժի վրա), կատարում անհետաձգելի բուժօգնություններ հիպերթերմիայի, ստենոզող լարինգոտրախեիտի, ցնցումային համախտանիշերի (քիթըմպանի, բերանի խոռոչի սանացիա, օդատարների կիրառում, ինտուբացիոն խողովակի սանացիա, թթվածնային կաթետերների, դիմակների, կիրառում, ստամոքսի զոնդավորում), իրականացնում ինտենսիվ թերապիայի նշանակումները ճիշտ հաջորդականությամբ, գնահատում հիվանդների հիմանական կենսական ցուցանիշները կարդիոմոնիտորի, պուլսօքսիմետրի օգնությամբ: Ճիշտ է կատարում քույրական թերթիկի լրացումը, ճիշտ է կատարում մաքրող հոգնան բուժքրոջ օգնությամբ, ճիշտ է իրականացնում հիվանդ երեխայի մաշկի, բերանի խոռոչի խնամքը: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե գործողությունները կատարվում են ճիշտ հերթականությամբ, նորմալ գործածման հմտության զարգացումով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, մեթոդական և տեղեկատու գրականություն,գործնական հմտության ալգորիթմեր,անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, քույրական թերթիկ,թեմատիկ ցուցապաստառներ, տեսասկավառակ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 8 ժամ գործնական աշխատանք 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 6	Բացատրել անեսթեզիոլոգիական ծառայությունը, ժամանակակից անեսթեզիայի բաղադրամասերն և նրա վարման առանձնահատկությունները մանկաբարձությունում, նկարագրել ինտենսիվ թերապիայի առանձնահատկությունները, մանկական վերակենդանացման ինտենսիվ թերապիայի բաժանմունքը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում անեսթեզիոլոգիա հասկացությունը, ներկայացնում ժամանակակից անեսթեզիայի բաղադրամասերը, նկարագրում նարկոզի փուլերը, տեսակավորում ինհալացիոն և ոչ ինհալացիոն անեսթետիկները, տալիս հասկացություն նարկոզի տարբեր տեսակների մասին, 2) ճիշտ է նախապատրաստում հիվանդին հոգեբանական, սոմատիկ, դեղորայքային ձևով նարկոզին, 3) ճիշտ է նախապատրաստում անեսթեզիստի սեղանիկը վիրահատությունից առաջ, կատարում պարզ նարկոզի վարում, տալիս նարկոզի ապարատի կառուցվածքը և ապահովում շնչային կոնտուրի մանրէազերծումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է անեսթեզիստի սեղանիկի նախապատրաստում վիրահատությունից առաջ, իրականացնում է պարզ նարկոզի վարում, ներկայացնում է նարկոզ-ապարատի կառուցվածքը, ապահովում շնչային կոնտուրի մանրէազերծումը: Կատարում է պերիֆերիկ երակի կաթետերացում,կաթիլային համակարգի միացում, շիթային ներմուծում կաթիլայինից և կաթետերից ձեռք մուլյաժին, կատարում է բերանի խոռոչի սանացիա, օդատարների տեղադրում, ինտուբացիոն խողովակի սանացիա, ստամոքսի զոնդավորում, գնահատում հիվանդների հիմանական կենսական ցուցանիշները կարդիոմոնիտորի, պուլսօքսիմետրի օգնությամբ, կատարում է նարկոզի վարման թերթիկի լրացումը: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե գործողությունները կատարվում են ճիշտ հերթականությամբ, նորմալ գործածման հմտության զարգացում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, մեթոդական և տեղեկատու գրականություն,գործնական հմտության ալգորիթմեր,անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ,նարկոզի վարման թերթիկ, թեմատիկ ցուցապաստառներ, թեմատիկ

	տեսասկավառակ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 2 ժամ գործնական աշխատանք 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-056
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) վերականգնողական բժշկության հիմնական դրույթները և սկզբունքները, ասպեկտները, տեսակները, միջոցները, 2) բժշկական վերականգնողական բուժման իրականացման էտապները, ավանդական բուժման հիմնական հիմունքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Ընդհանուր հոգեբանություն» ՄԲԳ-5-13-018, «Բժշկական հոգեբանություն» ՄԲԳ-5-13-019, «Թերապիա» ՄԲԳ-5-13-027, ՄԲԳ-5-13-028, ՄԲԳ-5-13-029, ՄԲԳ-5-13-030 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. բացատրի վերականգնողական բժշկության ընդհանուր հիմունքները, 2. բացատրի բուժական ֆիզկուլտուրայի և մերսման ընդհանուր հիմունքները, 3. նկարագրի բուժական ֆիզկուլտուրայի և մերսման մասնավոր մեթոդիկաները, 4. նկարագրի ֆիզիոթերապիայի ընդհանուր հիմունքները, 5. նկարագրի ավանդական բժշկության ընդհանուր հիմունքները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել վերականգնողական բժշկության ընդհանուր հիմունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում վերականգնողական բժշկության ըմբռնումը հիմնական սկզբունքները, ասպեկտները, տեսակները, պատմական տեսակետը, 2) ճիշտ է ներկայացնում բժշկական վերականգնողական բժշկության ծրագրի կազմման հիմնական դրույթները, իրականացման էտապները, 3) ճիշտ է ներկայացնում քույրական գործի հնարավորությունները վերականգնողական բժշկության պրոցեսում և բուժքրոջ դերը վերականգնողական բժշկության մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է խմբային քննարկումների միջոցով: Խմբային քննարկումների ժամանակ ուսանողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություններ անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ: Գնահատման համար հատկապես պետք է ուշադրություն դարձվի ուսանողի կողմից դիմացինի տեսակետը լսելու և դրանից հետևություններ անելու հմտությանը: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե ուսանողն ըստ առաջադրված իրավիճակի ճիշտ է կառուցում միջանձնային հարաբերությունները, կարողանում է հանդես գալ թիմի անդամ՝ համագործակցելով մյուսների հետ, ճիշտ է կողմնորոշվում վիճահարույց հարցերում և դրանց տալիս է համապատասխան լուծումներ կամ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, համապատասխան պաստառներ, գունավոր ատլասներ, սլայդներ, մեթոդական և տեղեկատու գրա - կանություն, համապատասխան դիտանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Բացատրել բուժական ֆիզկուլտուրայի և մերսման ընդհանուր հիմունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում բուժական ֆիզկուլտուրայի ընդհանուր հիմունքները, սկզբունները, ձևերը, ցուցումները, հակացուցումները, դերը վերականգնողական բժշկության մեջ,

	2) ճիշտ է բացատրում մերսման ընդհանուր հիմունքները տեսակները ցուցումները, հակացուցումները, դերը վերականգնողական բժշկության մեջ, 3) ճիշտ է ներկայացնում բժշկական վերահսկողության հիմնական դրույթները, բացատրում ֆիզիկական զարգացման որոշման մեթոդները, 4) ճիշտ է բացատրում շարժողական ռեժիմները, ֆիզիկական վարժությունների դասակարգումը, պարապմունքները կազմակերպման ձևերը, մերսման դասական մոտեցումները, կատարման կանոնները, և քույրական խնամքի առանձնահատկությունները բուժական ֆիզկուլտուրայի և մերսման կատարման ժամանակ, 5) ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային, շնչառական, մկանային, նյարդային համակարգերի հետազոտման ֆունկցիոնալ մեթոդները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման և խմբային քննարկումների միջոցով: Գործնական առաջադրանքների օգնությամբ ստուգվում է մերսման հիմնական մոտեցումների կատարման, ֆիզիկական զարգացման գնահատման, սիրտ–անոթային և շնչառական համակարգերի ֆունկցիոնալ վիճակի հետազոտման մեթոդ -ների յուրացման մակարդակը: Խմբային քննարկումից հետո կստուգվեն ֆիզիկական վարժությունների դասակարգման, իզոմետրիկ, պասսիվ և ակտիվ վարժությունների, առավոտյան հիգիենիկ մարմնամարզության կատարման կանոնների վերաբերյալ ուսանողների ձեռք բերած գիտելիքների մակարդակը: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե ուսանողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, համապատասխան պաստառներ, գունավոր ատլասներ, սլայդներ, մեթոդական և տեղեկատու գրականություն, համապատասխան դիտանյութեր, հասակաչափ, սանտիմետրային ժապավեն, ուժաչափ, տիկնիկ, բժշկական թախտ :
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Նկարագրել բուժական ֆիզկուլտուրայի և մերսման մասնավոր մեթոդիկաները

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների վերականգնողական բուժման ժամանակ և մեծահասակների մոտ, 2) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը շնչառական համակարգի հիվանդությունների վերականգնողական բուժման ժամանակ, 3) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը մարսողական և ներզատական համակարգերի հիվանդությունների վերականգնողական բուժման ժամանակ, 4) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը նյարդային համակարգի հիվանդությունների վերականգնողական բուժման ժամանակ, 5) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը մանկական հիվանդությունների վերականգնողական բուժման ժամանակ, 6) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը մանկաբարձագինեկոլոգիական պրակտիկայում և կազմում հիգիենիկ մարմնամարզական կոմպլեքսներ հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների համար, 7) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը վիրաբուժությունում, 8) ճիշտ է ներկայացնում բուժական ֆիզկուլտուրայի և մերսման դերը օրթոպեդիայում և վնասվածքաբանությունում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է խմբային քննարկումների միջոցով: Խմբային աշխատանքների արդյունքում ուսանողները կկազմեն առավոտյան հիգիենիկ մարմնամարզական կոմպլեքսներ սիրտ-անոթային, շնչառական, մարսողական համակարգերի հիվանդությունների համար՝ համապատասխան շարժո- ղական ռեժիմների, ինչպես նաև խմբային քննարկումից հետո կստուգվեն ուսանողների ձեռք բերած գիտելիքների մակարդակը ֆիզիկական վարժությունների և մերսման դերի վերաբերյալ մանկաբուժությունում և նախա ու հետ վիրահատական շրջաններում: Արդյունքի գնահատումը համարվում է դրական, եթե ուսանողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, համապատասխան պաստառներ, գունավոր ատլասներ, սլայդներ, մեթոդական և

	տեղեկատու գրականություն, համապատասխան դիտանյութեր, տիկնիկ, բժշկական թախտ :
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Նկարագրել ֆիզիոթերապիայի ընդհանուր հիմունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ֆիզիոթերապիայի ընդհանուր հիմունքները, ֆիզիոթերապևտիկ գործոնների ազդեցության առանձնահատկություններըկնոջ օրգանիզմի վրա, ֆիզիոպրոֆիլակտիկայի դերըհղիության ընթացքում և հետծննդյան շրջանում ֆիզիոթերապևտիկ ծառայության կազմակերպումը, 2) ճիշտ է ներկայացնում էլեկտրաբուժության ընդհանուր հիմունքները, 3) ճիշտ է ներկայացնում ուլտրաձայնային թերապիայի, աէրոզոլայի թերապիայի, մագնիսաթերապիայի, ընդհանուր հիմունքները, 4) ճիշտ է ներկայացնում լուսաբուժության ընդհանուր հիմունքները, 5) ճիշտ է ներկայացնում ջրաջերմաբուժության ընդհանուր հիմունքները, 6) ճիշտ է ներկայացնում առողջարանակուրորտային բուժման ընդհանուր հիմունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և խմբային քննարկումների միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ֆիզիոթերապիայի ընդհանուր հիմունքների, ֆիզիոթերապևտիկ ծառայության կազմակերպման, կնոջ օրգանիզմի վրա ֆիզիոթերապևտիկ գործոնների ազդեցության, հղիության և հետծննդյան շրջաններում ֆիզիոպրոֆիլակտիկայի հնարավորությունների վերաբերյալ: Խմբային քննարկումի միջոցով կստուգվեն ուսանողների գիտելիքները էլեկտրաբուժության, ուլտրաձայնային թերապիայի, աէրոզոլային թերապիայի, մագնիսաթերապիայի, լուսաբուժության, ջրա–ջերմաբուժության, առողջարանակուրորտային բուժման դերի վերաբերյալ՝ որպես վերականգնողական բուժման միջոցների: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստերին (80%) և տվել է հիմնավոր պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, համապատասխան պաստառներ, գունավոր ատլասներ, սլայդներ, մեթոդական և

	տեղեկատու գրա -կանություն, համապատասխան դիտանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Նկարագրել ավանդական բժշկության ընդհանուր հիմունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ավանդական բժշկության ընդհանուր հիմունքները, 2) ճիշտ է ներկայացնում ֆիտոթերապիայի ընդհանուր հիմունքները, 3) ճիշտ է ներկայացնում ռեֆլեքսոթերապիայի ընդհանուր հիմունքները, 4) ճիշտ է ներկայացնում մանուալ թերապիայի ընդհանուր հիմունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և խմբային քննարկումների միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ավանդական բժշկության ընդհանուր հիմունքների վերաբերյալ: Խմբային քննարկումից հետո կստուգվի ուսանողների ձեռք բերած գիտելիքները ֆիտոթերապիայի, ռեֆլեքսոթե - րապիայի, մանուալ թերապիայի դերի վերաբերյալ՝ որպես վերականգնողական բուժման միջոցների: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստերին (80%) և տվել է հիմնավոր պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հար- ցաշարեր, համապատասխան պաստառներ, գունավոր ատլասներ, սլայդներ, մեթոդական և տեղեկատու գրականություն, համապատասխան դիտանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-13-057
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել. 1) դեղերի ազդեցության մեխանիզմներին, կողմնակի երևույթներին, ցուցումներին և հակացուցումներին, որոշակի հիվանդությունների բուժման սկզբունքներին՝ հաշվի առնելով տարիքային գործոնները և ֆիզիոլոգիական

	վիճակները, 2) լրացնել ուսանողների գիտելիքները ֆարմակոգինետիկայի և ֆարմակոդինամիկայի բնագավառում, անհրաժեշտության դեպքում կատարել առաջին բոսժօգնություն, կանխել սպասվող բարդությունները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» ՄԲԳ-5-13-003, «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով» ՄԲԳ-5-13-009, ՄԲԳ-5-13-010, ՄԲԳ-5-13-011, ՄԲԳ-5-13-012, «Քույրական գործի հիմունքներ» ՄԲԳ-5-13-022, ՄԲԳ-5-13-023, ՄԲԳ-5-13-024, ՄԲԳ-5-13-025, ՄԲԳ-5-13-026, «Թերապիա» ՄԲԳ-5-13-027, ՄԲԳ-5-13-028, ՄԲԳ-5-13-029, ՄԲԳ-5-13-030, «Մանկաբուժություն» ՄԲԳ-5-13-031, ՄԲԳ-5-13-032, ՄԲԳ-5-13-033, ՄԲԳ-5-13-034, «Դեղաբանություն» ՄԲԳ-5-13-014, ՄԲԳ-5-13-015, ՄԲԳ-5-13-016 մոդուլները:
ՈՒսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի կլինիկական դեղաբանության հիմնական սկզբունքները, ֆարմակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի սկզբունքները, խմբավորի և ճիշտ օգտագործի հակաբիոտիկները հիվանդությունների ժամանակ՝ կանխելով սպասվող բարդությունները, 2. ներկայացնի էնդոկրին և շնչառական համակարգի հիմնական հիվանդությունների բուժման սկզբունքները՝ հաշվի առնելով տարիքային և անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 3. ներկայացնի սիրտ-անոթային, արտազատական և ստամոքս-աղիքային համակարգի հիմնական հիվանդությունների կլինիկական նշանները, էթիոպաթոգենեզը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել կլինիկական դեղաբանության հիմնական սկզբունքները, ֆարմակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի սկզբունքները, խմբավորել և ճիշտ օգտագործել հակաբիոտիկները հիվանդությունների ժամանակ՝ կանխելով սպասվող բարդությունները

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում և կիրառում կլինիկական դեղաբանության հիմնական սկզբունքները՝ հիմնվելով ֆար-մակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի սկզբունքների վրա, 2) ճիշտ է կատարում դեղերի համադրությունը, որոշում դեղաչափը, ներմուծման և արտազատման եղակակները, 3) ճիշտ է ընտրում հակաբիոտիկներն ըստ խմբերի՝ հաշվի առնելով հարուցիչների զգայունությունը տվյալ դեղի նկատմամբ, 4) ճիշտ է կիրառում անհրաժեշտ հակաբիոտիկները, կարողանում է կանխել սպասվող բարդությունները և կողմնակի երևույթները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանքներ կատարելու ժամանակ, ուսանողը վերլուծում է ներկայացված հիվանդության պատմու -թյան բուժական տակտիկան, գնահատում դեղերի զուգորդումների արդյունավետությունը և ավելացնում առողջ ապրելա - կերպի բաղադրիչներն ու առաջին բուժօգնության սկզբունքները: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ կլինիկական դեղաբանություն առարկան և խնդիրները, ▪ դեղերի զուգորդումներ և կողմնակի ազդեցություններ, ▪ դեղաբուժության առանձնահատկությունները հղիների, երեխաների, ծերերի մոտ, ▪ հակաբիոտիկներ, դասակարգումը, հակաբիոտիկոթերապիայի արդյունավետությունն ու սկզբունքները, ▪ հակաբիոտիկների կողմից առաջացրած բարդություններն ու կանխման եղանակները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր, աղյուսակներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել էնդոկրին և շնչառական համակարգի հիմնական հիվանդությունների բուժման սկզբունքները՝

	հաշվի առնելով տարիքային և անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հորմոնների սինթեզի մեխանիզմը՝ հաշվի առնելով էնդոկրին համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, 2) ճիշտ է կիրառում հորմոնալ դեղերը՝ կանխելով սպասվող բարդությունները, 3) ճիշտ է կատարում առաջին բուժօգնությունը դեղերի գերդոզավորման ժամանակ, 4) ճիշտ է առաջարկում կիրառվող դեղերի ցանկը՝ հաշվի առնելով տարիքային և անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանքներ կատարելու ժամանակ, ուսանողը վերլուծում է ներկայացված հիվանդության պատմու -թյան բուժական տակտիկան, գնահատում դեղերի զուգորդումների արդյունավետությունը և ավելացնում առողջ ապրելա - կերպի բաղադրիչներն ու առաջին բուժօգնության սկզբունքները: Ստորև ներկայացվում են ծրագրային մանրամասներ. ▪ շաքարային դիաբետի ախտածագումը, ▪ ինսուլին և պերօռալ հակադիաբետիկ դեղերի դասակարգումը և զուգորդումները բուժման սկզբունքները, ▪ բրոնխոօբստրուկտրվ հիվանդությունների ախտածագման մեխանիզմները, ▪ դեղերի դասակարգումը, բուժման սկզբունքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ու - սումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր, աղյուսակներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել սիրտ-անոթային, արտազատական և ստամոքս-աղիքային համակարգի հիմնական հիվանդությունների կլինիկական նշաններին, էթիոպաթոգենեզին

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կիրառում սիրտ-անոթային, արտազատական և ստամոքս-աղիքային համակարգի հիվանդությունների ժամանակ անհրաժեշտ դեղերը հաշվի առնելով օրգանիզմի և տվյալ օրգան-համակարգերի տարիքային առանձնահատկությունները, 2) ճիշտ է կիրառում անհրաժեշտության դեպքում դեղերի համադրությունները, 3) ճիշտ է կատարում առաջին բուժօգնությունը դեղրի գերդոզավորման ժամանակ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանքներ կատարելու ժամանակ, ուսանողը վերլուծում է ներկայացված հիվանդության պատմության բուժական տակտիկան, գնահատում դեղերի զուգորդումների արդյունավետությունը և ավելացնում առողջ ապրելակերպի բաղադրիչներն ու առաջին բուժօգնության սկզբունքները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր, աղյուսակներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ